

ՀՐԱՑԱՐՈՒԿՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՈՅ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

(ԱՐԱՐԱՏԵԱՆ, ԴՊՐՈՑԱՍԻՐՈՑ-ԱՐԵԽԵԼԵԱՆ ԵՒ ԿԻԼԻԿԵԱՆ)

Թ. թ ե ր ջ ե ա ն

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՐՀԱՐ ՀԵԶՈՒԻ

Ց 42 ՀՐԱՑԱՆԳԻ Ա. Ե Զ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Կ

Մ Տ Ա Մ Ո Ւ Թ Ե Ա Ն


ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف عوميہ نظارت جلیل اسنک رخصتیله طبع اوپنیشدر

կ. ՊՈՂԻՄ

ՏՊՐԳ. Ս. Վ. ՊՈՐՔ-ԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

1884



491.99-5
P-52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՑ
(ԱՐԱՐԱՏԻ ՏՎԱՐԱՆ, ԴՊՌՈՅԱՍԻՐԱՑ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԿԻԼԻԿԵԱՆ)

Թ. թ ե ր ջ ե ս ն

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ

ՀՐԱՀԱՆԳ ԼԵԶՈՒԻ

ԵՒ

ՄՏԱԾՈՒԹԵԱՆ


Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵՒՈՐ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՄԲՔ

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک رخصنیله طبع اونشندر

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐ. Ս. Դ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԲՆԿ.

1884



A $\frac{\pi}{13046}$

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Քերականութիւնն ուսուցանելու եղանակը դեռ չատ վարժարանաց մէջ ոչ այլ ինչ է բայց եթէ բազմաթիւ սահմաններ եւ կանոններ աւանդել զորս աշակերտք պարտին ուսանիլ ի բերան : Դասաստուք համողեալ էին թէ այս դասերն ամենէն ճիշդ ուսանողը Քերականութեան եւ լեզուին մէջ ալ ամենէն հմուտն ըլլար , թէ եւ իրենք ինքնին ստեղ առիթ կ'ունենային տեսնելու եթէ այս աշակերտք կանոնը բերանացի կրկնելէն վերջն՝ անմիջապէս գործադրութեան միջոցին նորա հակառակը կը գործէին : Այս ընթացքով տղայոց արթուն յիշողութիւնն երկար եւ տաղտուկ կը ըկնութեանց չնորհիւ՝ մտածութեան եւ անդրադարձութեան պաշտօնն ստանձնած էր : Նիւթը մտաց կը յաղթէր : Այսու ոչ միայն ամէն յառաջդիմութիւն խափանեալ էր , այլ եւ կ'ահարեկէր զուսանողն անհեղեղ եւ մտացածին ուրուականով մը որ զինք կանոնաց , սահմանաց եւ բացառութեանց անձողոպելի լարիւրինթոսի մը մէջ կը մոլորեցնէր՝ ականչն ի վար իրթին եւ անողոք վճիռներ մոմուալով :

Մեր գպրոցի աշակերտք լեզուն պէտք է սովորին՝ եւ ոչ եթէ այն ճղճիմ եւ վերացեալ դիտողութիւններն որք զարգացեալ հասակի միայն կրնան պատկանիլ : Լեզուն մտածութեան բացատրութիւնն ըլլալով , նորա մշակութիւնն ալ անմիջական ազգեցութիւն ունի մտաց վրայ : Տղեկը գասատուին յանձնուած միջոցին արդէն լեզուն գործածել գիտէ : Ի՞նչ կը մնայ ընել . ինքնին եւ սովորութեամբ ուսածն անդրադարձութեամբ ուղղել , բարւոքել եւ ընդարձակել . Մանաւանդ նախնական կրթութեան մէջ առաջին խնդիրն է տղուն բազմաթիւ դրական տեղեկութիւններ տալ առանց որոց մարդս կերպով մը մարդկութենէ դուրս կը մնայ , եւ երկրորդ տղուն սրտին մէջ ուղղախոհութիւնն եւ բարյականին զգացումը զարգացնել , առաջինն՝ անդրադարձութեան հրահանգներով , եւ երկրորդն՝ աստուածատուր բարձր եւ ազնիւ բնադրումները մշակելով : Այս մեր տուած սահմանէն կրնանք հետեւցընել թէ ինչպէս պէտք է ըլլայ կրթութեան կերպը : Պարզէն

բաղադրեալն ելլել, զիւրինէն դժուարը, գործադրութենէն սկըզ-
բունք . ճարտարութեամբ շարայարուած հարցումներով տղան
ստիպել որ մեր նպատակ դրած սկզբունքը գտնէ, խորհրդածելու
վարժեցնել եւ միով բանիւ միշտ իւր մտածութիւնն արթուն պա-
հել, բացատրութեանց մէջ մթին տեղ մը չը ձգել եւ ամէն բանի
մէջ գործնական, մտացի եւ բարոյական նպատակի մը հասցնել,
զորօրինակ Քերականութեան մէջ տղուն առջեւ օրինակներ հը-
նարել եւ իրմէ նոյնպիսի օրինակներ խնդրել, այս ամէն օրինակ-
ներն ալ սեւ տախտակի վրայ գրել տալ եւայլն :

Այս սկզբանց վրայ հիմնեալ է մեր նոր հրատարակած Քե-
րականութիւնն ալ որոյ գործադրութեան մասին հարկ եղած տե-
ղեկութիւններն արդէն առանձին հատորիկով մը հրատարակուե-
լու վրայ են : Այս ոճոյն ոգին ըմբռնելէն վերջը գասատու մ'այլ
եւս մեր տուած հրահանգաց մէջ սահմանափակ մնալու պարտա-
ւոր չ'է : Ինքն խակ ըստ պատշաճի հրահանգներ կը յաւելու կամ
անոնցմէ կը զեղչէ, ըստ կարողութեան ուսանողաց ծանօթու-
թիւններն աւելի կ'ընդարձակէ կամ կ'ամփոփէ, եւ վերջապէս իւր
փորձառութեան ցուցած փոփոխութիւնները կը գործադրէ : Մեք
շատ գոհ կըլլայինք եթէ այս մեր երկասիրութիւնը գործածել յօ-
ժարող գասատուք հածէին իրենց դիտողութիւնները մեզ հաղոր-
դել, հետզհետէ մեր գործը բարւոքելու համար : Թէպէտ մեք
այս երկասիրութիւնն եւրոպական մատենադիրներէ ընտրանօք
քաղեցինք եւ մեր դոյզն փորձառութեամբ կարեւոր համարած
փոփոխութիւններն ըրինք, այսուհանդերձ համոզեալ եմք թէ
մեր Ազգային Վարժապետաց ձեռնտուութեամբ միայն կրնանք
աւելի օգտակար ընել մեր այս մատենիկը :

Առ այժմ ներումն կը խնդրեմք յԸՆԹԵՐԾՈՂԱԳ յակամայից
գործոյս մէջ սպրդեալ վրիպակաց համար :

Ա.Զ.Դ. Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Հրահանգաց մէջ ինչ ինչ փոփոխուրինք եղած են, ոմանք
առ, հարկի, այլր եւրոպական նորագոյն ուսումնական ծրագրաց
յարմարելու համար :

Թ. Թ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏՀԱՔԱՐ ԼԵԶՈՒԻ

ՄԱՍՆ Ա.

ԴԱՍ Ա.

ՏԱՐԱՎ ԶԱՅՆԱԽՈՐ ԵՒ ԲԱՂԱՉԱՑՆ

1. Խօսելու և գրելու համար բառեր կը դործածեմք .
այս բառերը գրերով կամ տառերով կը շինուին :

2. Հայերէն տառերը 38 հատ են . ա . բ . դ . դ . ե .
զ . է . լ . թ . ժ . ի . լ . խ . ծ . կ . հ . ձ . զ . ճ . մ . յ .
ն . շ . ո . չ . պ . ջ . ռ . ս . վ . տ . ը . ց . ւ . փ . ք . օ . ֆ .

3. Այս եօթն հատը՝ ա . ե . է . լ . ի . ո . օ . ձայնա-
ւոր կը կոչուին՝ որովհետեւ ինքնին ձայն մունին՝ այսինքն
առանց ուրիշ գրի օգնութեան կրնան հնչուիլ :

4. Մնացեալ 31 գրերը . բ . դ . դ . ևն բաղաձայն կը
կոչուին , որովհետեւ ձայնաւորի մը հետ բաղադրուելով
կրնան արտաքերիլ :

5. Գրերէն ոմանք իրարու կը նմանին հնչման կողմանէ ,
զորս իրարու հետ շվիոթելու չէ , որովհետեւ շատ անգամ
տարբեր գրերով տարբեր իմաստներ կ'ունենան բառերը :
Այսպէս են կառք և կարգ , բեր և բեռ ևն :

6. Իրարու նման հնչած ⁽¹⁾ գրերնիս այս են .

բ և փ . — դ . ք . — դ . թ . — ե . է . — ձ . ց . — ո . օ .
— չ . ջ . — ռ . ը :

(1) Կ. Պոլսոյ հնչման վրայ է մեր խօսքը :

ՀՐԱՀԱՆՔ Ա.

կետերուն տեղ Բ կամ Փ դնել .

• ա • աք — Եղ • այր — Աղ • իւր — • արի — • այտ — • աւ-
զում — • նակիչ — • ամ • ասել — • առք — • արք — • աւական .
— Զ • աղիլ — • ուշ — Հօրեղ • այր — • երել — • որձութիւն —
Յարա • երութիւն — • ացակայ — Յա • շտակել — Հետեւա • ար
— • ացարձակ — • եգենայ — • Ամ • արտաւան — • անալի —
Խում • — • արձրացնել —

կետերուն տեղ Գ կամ Ք դնել .

Հին • — Հեռա • իր — Ան • ամ — • արտուղար — Կար • —
Կառ • — Աղ • ասէր — Այս • ան — • բեթէ — Հայրենի • — Հո • ի
— Դրամա • լուխ — Արտա • սել — • եռի — • երի — • իտնալ —
Շո • ի — • ար — • ալ :

կետերուն տեղ Դ կամ Թ դնել .

Եր • ալ — Խորհուր • — Աղ • արարել — Կե • ըռն — Խն • իր
— • ողուլ — Վարչու • իւն — Կր • ել — Զար • արել — • արմ —
Վատահու • իւն — Հասոյ • — • եր — • ան • աղ — Ան • աղ :

կետերուն տեղ Ե կամ Է դնել .

Անտ • ս — Ըս • լ — Աւ • լի — Բար • ւ — Տ • ր — Տ • սք —
Ամ • ն — Խորհ • լ — Գր • թ • — Հաշոււագ • տ — Եթ • — Մինչ-
դ • ս — Կ • նղանի — Նախանձ • լի — Կար • ւոր — Ն • րկայ —
Գ • ր :

կետերուն տեղ Խ կամ Ղ դնել .

Զ • ջիկ — Խա • ող — • նդրել — • որհիլ — Գա • անիք — Խա
• աք — • րկել — Դանդա • — Ե • բայր — Բա • աք — Երա •
տապարտ — Ու • տել — • նջոյք — Ա • քատ — Բա • դ — Յա •
թել :

կետերուն տեղ Յ կամ Հ դնել .

Ընդ • անուր — • անդարտ — Թագու • ի — • զօր — • բատա-
րակել — • աղթել • — • բաւիրել — Գո • ութիւն — • ասնիլ . —

Ա. • աւասիկ — • բամանատար — • ուսալ — • օդուած — • ասոյթ
— • ամեղ — • արմար :

կետերուն տեղ Զ կամ Յ դնել .

Ար • ակել — Ծանու • անել — Հար • ում — Եկեղե • ի — Գո-
հա • նել — Ընթեր • ող — Անդամակ • ութիւն — Յան • նել —
Համակ • նել — Ան • ինք — • եռք — Դպրո • — Ան • նել — Գիւ-
ղա • ի — • կնորս :

կետերուն տեղ Ո կամ Օ դնել .

Գ • դ — Բ • վանդակ — Յ • դուած — Պանդ • կ — րի • րդ —
Փառաւ • ր — Ամիկ • փել — Պաշտ • ն — Առաջն • րդ — Ընթերց
• դ — Գ • րծ • ն — Լ • յս — Գ • րծ • — Զգ • ն — Հ • վ — Գ •
հացնել — Համբաւաւ : ր — • սկի — Մամնաւ • ր — Կց • րդ :

կետերուն տեղ Զ կամ Ջ դնել .

Առա • ին — Աքան • ելի — Ճան • նալ — Քա • ութիւն — •
ար — Ար • — կամուր • — • ափաւոր — Ո • խար — Մի • ոց —
Աղ • իկ — Պահան • ում — Առա • արկութիւն — Փուն • — Բուր:

կետերուն տեղ Ռ կամ Ր դնել .

Աշակե • տ — Կա • ք — Կա • դ — Քե • ի — Գե • ի — Լ • ա-
զիր — Կա • ավա • — Աւե • ակ — Ջե • նա • կ — Հ • ահանդ —
Ա • դա • — Փա • աւո • — Հայ • ենիք — Ա • ա • կայ — Հա •
յում — Նկա • ագ • ել :

կետերուն տեղ Վ կամ Ի դնել .

Նպաստա • որ — Ժողո • — Սեղանա • որ • — Պատո • էր —
• ա • երացնել — • այելուչ • Բա • ական — • երաբերիլ — Կա-
ռա • արել — Սեղանա • որ — Դի • ական — Բացո • իլ — Ա • աղ
— • ազել — • ա • աշոտ :

ՀՐԱՀԱՆԳ Բ.

կետերուն տեղ Ե կամ Է դնելով .

Աիր • լ — Կ • րակ — Արու • ստ — Դ • բասան — Մ • ծ — •

բկու — Որպ ։ ս — Մ ։ ջ — վ ։ բաղարձ — Թատ ։ բաս ։ ը — վ ։
 ։ բար ։ բութիւն — Որովհ ։ տեւ — Գործ ։ լ — ։ կ ։ զ ։ ցի —
 Ափրիկ ։ Բանտարկ ։ ալ — Պատ ։ բազմ — վա ։ մ — Տ ։ զ ։
 կութիւն — Առն ։ լ — ։ զանակ ։ Ղրկ ։ լ — ։ բկաթ — վ ։ րջ
 — Առն ։ լիք — Կ ։ սարիայ — Բար ։ լաւ — ։ նթակայ — Պարկ ։
 շտ — Խար ։ բայ — Համ ։ ստ — Քաջալ ։ բութիւն — Ընտան ։
 կան — Տ ։ դացի — Տգ ։ տ — Զաւ ։ շտական — ։ բեւակայութիւն —
 Բար ։ կամ :



ԴԱՍ Բ.

ՎԱՆԿ ։ — ՏՈՂԱԴԱՐՁ

1. Մէկ հնչմամբ արտասանուող մէկ կամ աւելի դրեր՝
 վանկ կը կոչուին , ինչ , բան , բառ , զիր , տառ , խօսք .
2. Բառ մը մէկ կամ շատ վանկ կրնայ ունենալ , այս
 ուէս հայր միավանկ բառ է , հայրիկ երկվանկ , հայրաբար
 եռավանկ , առաստօրէն քառալանկ և լն :
3. Ընդհանրապէս բազմավանկ կը կոչուին՝ մէկէ աւելի
 վանկ ունեցող բառերը :
4. Երբ բառ մը տողին ծայրը գայ՝ և հարկ ըլլայ մէկ
 մասը միւս տողին անցնել՝ այսինքն տողադարձ ընել՝ միշտ
 վանկին արոհելու է , այսպէս՝ բազմապատիկ բառը կտրելու
 համար՝ պէտք է կտրել բազմապատիկ , կամ բազմապատիկ ,
 կամ բազմապատիկ .

ՀՐԱՀԱՆԳ գ.

Աշակերտը ստորագծէ միավանկ բառերը

Օր մը ճոխ մարդ մ'իւր բարեկամներն ի ճաշ հրաւիրեց . երբ
 ուղան նստելու վրայ էին , աղնուականին որդին , հաղիւ վեց

տարեկան տղեկ մը , գնաց իւր հօր քով նստելու : Հայրն ըստ
իրեն . « Անմօրուս տղու մը չվայլէր մեղ հետ ճաշել . » Տղան լա-
լով գնաց եղածն իւր մօր պատմեց՝ որ զինքը միսիթարելու հա-
մար անուշեղինօք լի պղտիկ սեղան մը տղատրաստել տուաւ : Երբ
տղան կը ճաշէր , տան կատուն եկաւ նորա քով քսկուալուելու
եւ սեղանին վրայ եղել կը ջանար : Տղան բարկութեամբ մը դար-
ձաւ եւ ըստ . Գնա՛ հօրս հետ ճաշէ , ընչացքդ բաւական եր-
կայն են » :

ՀՐԱՀԱՆԳ Դ.

Աշակերտն երկվանկ բառերը ստորագծէ :

Սկիւռն աշխոյժ եւ սիրուն կենդանի մ'է . թէպէտ բնութեամբ
վայրենի եւ վախկոտ է՝ սակայն չուտ կ'ընտանենայ : Իւր սովո-
րական ուտեսաւը մրգեղէն է : Աչքը կրակոտ են , մարմինը ջղոտ ,
եւ ձեւը չատ գեղեցիկ . սովորաբար ետեւի ոտից⁽¹⁾ վրայ նըս-
տած կը կենայ եւ առջեւի թաթերով կերակուր կ'ուտէ : Ընդհան-
րապէս ծառոց վրայ կապրի , եւ միայն սաստիկ հով եղած ատեն
անկից վար կ'իջնէ : Ամէն բանէ աւելի ջրէ կը վախնայ , եւ թէ
որ ջրէ անցնիլ պէտք ըլլայ , ծառի կեղեւի մը վրայ կը նստի եւ
այնպէս կը նստէ : Սկիւռն ամէն տեղ կը դտնուի , մանաւանդ հիւ-
սիսային կողմանք :

ՀՐԱՀԱՆԳ Ե.

Աշակերտն եռավանկ բառերը ստորագծէ :

Հոպոսը վառվուն եւ աշխոյժ թռչուն մ'է , գլուխը սանտ-
րածեւ փետրովք զարդարուն , եւ ձայնն անախորժ : Զմեռը տաք
երկիրներ կը գաղթէ , եւ ամառն ամէն կողմ կը ցրուի : Սովորա-
բար խոր եւ թաւ անտառաց մէջ կը բնակի , եւ ժժմանքը չը սի-
րէր : Իւր բոյնը չոր տերեւներով եւ մամուռներով կը շինէ ծառի

⁽¹⁾ Ամէն անգամ որ առանց խորիթ երեւալու կարելի եղած է
ընել՝ գրաբառ հոլովը նախամնծար համարած եմք :

կոճղերու եւ պատերու մէջ : Թուխս նստելու համար չորս հինգ
հաւկիթ կ'ածէ , որք բաց մոխրագոյն են , եւ գրեթէ միշտ ա-
ռանձին կը պտտի : Հոպոպն աղտեղի թռչուն մ'է , եւ իւր վրա-
յէն գարշելի հոտ մը կը բուրէ միշտ :

ՀՐԱՀԱՆԳ Զ.

Աշակերտը բազմավանկ բառերը ստորագծէ :

Փոշոտ ճամբու մը վրայ , կոյր ծերունի մը տխուր կը քայլէր ,
իւր գաւազանին վրայ կոթնած : Զուր ճակատը կը բարձրացնէր
արեւուն ճառագայթները տեսնելու համար որոցմէ յաւէրժ զուրկ
էին իւր աշք : Դողդոջուն քայլերը չէին կարող յառաջանալ ա-
ռանց գաւազանին օգնութեան : Յանկարծ իւր նիհար ձեռքերէն՝
որ հաղիւ կրնային վերցնել այդ տաժանելի նեցուկը , ցուապը գըլ-
տորեցաւ փոսի մը մէջ , որով մեր ծերուկն անշարժ եւ յուսահատ
մնաց : Սիրուն տղայ մը որ անկէց կ'անցնէր , ցատկեց փոսին մէջ
եւ գաւազանն առաւ կոյրին բերաւ , որ զինքն օրհնեց ըսելով .
« Ազնիւ զաւակս՝ վարձքդ կատար , Աստուած միշտ հետդ ըլլայ » :

ՀՐԱՀԱՆԳ Է.

Աշակերտը պարտի վանկերն իրարմէ զատել .

Սիրամարգը թռչնոց ամենէն գեղեցիկն է . իւր հիանալի տես-
քը , կազմուածքին համեմատութիւնը , ծանր ու դոսոզ քալուած-
քը՝ կը զմայլեցնեն զմարդ . ինքն ալ կարծես կը սքանչանայ իւր
գեղեցկութեան վրայ : Սիրամարգին աննման փետուրները , որ
գեղեցիկ ծաղիկներէն գերազանց վայլ մ'ունին՝ ամէն տարի գոյ-
ներնին կը նետեն եւ կը թափին : Այս թռչնոյն ձայնը շատ անա-
խորժ է , եւ շատ դժուար կը թռչի . քնանալու համար ծառի վրայ
կը թառի կամ տանեաց վրայ կը կծկտի : Հաւնոցները շատ անգամ
տակն ու վրայ կ'ընէ եւ պարտէզներն ալ անսապատ կը դարձնէ :
Եզն արուին չափ գեղեցիկ չէ՝ մանաւանդ չունի նորա եր-
կայն եւ շողշողուն տառունը :

ԴԱՍ Գ.

ԻՐ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՅ

1. Ինչ որ կրնամք տեսնել՝ լսել՝ ճաշակել՝ հոտոտել
կամ շօշափել՝ առարկայ կամ իր կը կոչուի :

2. Աչքով կը տեսնեմք , ականջով կը լսեմք , ձեռքով կը
շօշափեմք , բերնով կը ճաշակեմք , քթով կը հոտոտեմք :

3. Աչքն՝ ականջը՝ ձեռքը՝ բերանն և քիթը՝ որովք ա-
ռարկաները կամ իրերը կը զգամք՝ մեր հինգ զգայարանքը
կը կոչուին :

ՀՅԱՀԱՆԴ Բ.

Աշակերտը հետեւեալ խօսից մէջ առարկաները զատէ :

1. Ե՞րբ կը ծաղկի ընկուղենին . 2. Դերձակը լաթ մը ձեւեց .
3. Ի՞նչպէս խմացաւ Ասհակ որ խոտին տակ մանուշակ մը կայ .
4. Դարրինը սալը կը զարնէ մուրճով . 5. Իրարու կը նմանին հա-
ղարջն եւ ելակը , հո՞տը , գո՞յնը համը . 6. Սափրիչը մօրուքն ա-
ծիլեց . 7. Խնձոր մը տուր ինձ՝ Արշակ . 8. Օչնանն աղէկ կը հո-
տի . 9. Մեր պարտիզին մէջ կան վարդ՝ յամիկ՝ եւ շահոքրամ .
10. Լսէ՛ այդ ձայնը . 11. Հովը կը փչէ . 12. Մուրացկաննէ որ
կ'աղաչէ . 13. Բամպակը շատ թոյլէ , բայց քարը շատ կարծր է .
14. Տեսա՞ր թռչունն որ անցաւ . 15. Ոչ , լսեցի :

Օր. դաս (1) . — Ընկուղենի , առարկայ է՝ վասն զի ծառ մ'է
զոր կրնամ տեսնել :

(1) Աշակերտաց զիւրութեան համար շատ մը հրահանգաց
քով զանոնք ինչպէս ընելու եղանակն ալ զրինք՝ օրինակ դա-
սու անուամբ առաջին խօսքը մեք շարադրելով :

Հետեւեալ առարկայից մէջէն աշակերտն ընտրէ եւ զատ պատ սիւնակաց տակ զրէ զանոնք որ Գոյն կը տեսնուին , Գոյն կը լսուին եւն . — Յետոյ այն առարկաններն որ զանազան զգայարանաց տակ միանգամայն կ'իյնան :

1. Արեւը ծագեցաւ եւ բոլոր աշխարհ լոյս է . 2. Վաղինակ ծաղիկները կը սիրե՞ս . 3. Եթ սիրեմ զանոնք որ գեղեցիկ դոյն՝ հոտ եւ ձեւ ունին . 4. Ամպ մը լուսինը ծածկեց . 5. Փայլակ մ'անցաւ . 6. Որոտում կայ . 7. Հովը ծառոց մէջ կը փչէ . 8. Փոթուրիկն անցաւ . 9. Տանիքներէն կաթիկներ կը թօթափին . 10. Թուչուն մը նատեր բոյնին վրայ կ'երգէ . 11. Ծաղկանց հոտը գաշտը բոներ է . 12. Շաքարն եւ աղն իրարու կը նմանին . 13. Սպունզը թաց է . 14. Այս զմելինը քանի՞ շեղբ ունի :

Աշակերտը նախ բերանացի եւ ապա գրով պատասխանէ հետեւեալ նարցմանց :

1. Ի՞նչպէս զիտես որ փողոցին մէջէն կառք կ'անցնի . 2. Ի՞նչպէս գիտես թէ անձրեւ կուզայ , հով կը փչէ , քովի սենեակը մարդ կը քալէ . 3. Ի՞նչպէս կիմանաս երաժշտութիւնը . 4. Մթոն ի՞նչպէս կրնաս իմանալ թէ մուշկ կայ , խանձ կը հոտի . խորձ է վառեր . 5. Ի՞նչպէս կրնաս զանազանել աղն ու շաքարը . 6. Ի՞նչպէս մէկ պտուղը համեղ եւ միւսն անհամէ կ'ըսես . 7. Ի՞նչպէս կրնաս իմանալ որ խմածդ քացա՞խ է թէ զինի , կերածդ մի՞ս է թէ հաց . 8. Ի՞նչպէս զիտես թէ գասարանին մէջ զանազան առարկաներ կան , անուանէ ինձ մի քանին . ի՞նչպէս կը զանազանես քու տունդ ուրիշ տներէն , սենեակդ միւս սենեակներէն . 9. Ի՞նչպէս զիտես թէ կրակը տաք է , քարը պաղ , թուղթն եւ մարմարինը հարթ , հողը խորդուքորդ :

Օր. Դասու . — Փողոցին մէջէն կառք անցնիլը զիտեմ' վասն զի անուոց ձայնը կը լսեմ :

ՀՐԱՀԱՆԳ ԺԱ.

Աշակերտը նախ բերանացի եւ ապա գրով յետագայ հարցուածոց պատասխանէ :

1. Ըսէ՛ ինձ ձանչցած ծաղիկներէդ մէկ քանին : Ո՞րն է բոյսին արժատար , ցօղունը , տերեւները , ճիւղերը , ծաղիկները , պլռտուղն եւ հունտը . 2. Քանի՞ գոյնով ծաղիկ կը ճանչես : 3. Ի՞նչէ՞ր կը տեսնես զարոցէն տուն զացած ատենդ . 4. Անուանէ ինձ քու զարոցական առարկաներդ . 5. Ի՞նչ պառուղներ կը ճանչես . 6. Ի՞նչ համ ունին խաղողը՝ սերկեւիլը՝ թութը՝ սալորը՝ տանձը . 7. Ո՞ր պտուղներն աւելի կը սիրես . 8. Ի՞նչ ազգականներ ունիս . 9. Ի՞նչ ծառեր կը ճանչես , ի՞նչ բանջարեղէններ . 10. Ի՞նչ կ'ըսեն այն մարդուն որ չը տեսներ , որ չը լսեր , որ չը կրնար խօսիլ , որ չկրնար շիտակ քալել :

Օր. Դաս. Ճանչցած ծաղիկներս են՝ վարդ , յամիկ , մանիշակ եւն :

ՀՐԱՀԱՆԳ Ժ.Բ.

Աշակերտը մեկ մեկ առարկայ գտնէ՛ յաջորդ խօսքերուն մեջ կետերու տեղ դնելու համար :


1 . . . կը փայլի ցերեկ ատեն , եւ . . . գիշերը . 2. Պարտիզին ամենէն անուուշ հուսող ծաղիկներն են . . . 3. Զինուորին մէջքէն . . . մը կախուած էք : 4. Որսորդն ընափր . . . մ'ունէր ուսին վրայ : 5. Բոյնին մէջ չորս մատաղ . . . կային . 6. Գարնան սկիզբը . . . մեր երկիրը կը վերադառնան 7 . . . մայիս ամսուն կը բացուին 8 . . . ամառը կը հասուննան . 9. Գինին . . . էն կը շինեն . 10. Կերակուրներն եփելու համար . . . պէտք է . 11. Առանց . . . ի կերակուրն անհամ կ'ըլլայ 12 . . . երկինքն ու երկիրը ստեղծեց վեց . . . ան մէջ :

Օր. Դաս. — Արեւը կը փայլի ցերեկ ատեն , եւ Լուսինը գիշերը :

ՀՐԱՀԱՆԳ ԺԴ.

Աշակերտն ուղղել սովորի հետեւեալ սխալ բացատրութիւնները :

Զկրցի դացեր էի . — Զինը տեսայ . — Զեմ կրնար երթար . — Ղավուն ու խարրուզ շատ կը սիրեմ . — Աս մարդուն տղաքը եկեր է . — Բանը , ա՞ն , ի՞նչ կ'ըսեն որ անով խոտերը կը կտրեն . երկրթէ շինուած է եղն :



ԴԱՍ Դ.

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԻՐԱՑ

Լեռնիկ իւր հոյրը կ'ուզէ տեսնել .
Զիստորը շուտ մ'անցաւ .
Ո՞ւր է քու գիրք՝ Միհրան :

Կ Ա Ն Ո Ն

14. Շատ անգամ մեր ճանչցած առարկաները կրնանք մտքերնիս բերել առանց այն վայկենին զանոնք մեր առջև ունենալու :

Այսպէս աչքս գոցելով կրնամ մոոք տեսնել հօրս դեմքը , մարդ մը որ քովէս անցաւ , գիրք մը զոր կորուսեր եմ ելն :

ՀՐԱՀԱՆԳ ԺԴ.

Աշակերտն անուանե այն առարկաներն որ միտքը կուզան :

Դպրոցէն տուն երթալու ճամբուն վրայ . . . — Եկեղեցւոյ մէջ . . . — Պարտէզը . . . — Երան վրայ . . . — Դպրոցին մէջ . . . — Խւր սենեակը . . . — Տան մը մէջ . . . — Գրասեղանի մը վրայ . . . — Խոհանոցի մէջ . . . — Սեղանատան մէջ :

Թող միտքը բերէ իւր զրացւոյն տունը , նորա գոյնը , նորա երեսին վրայ տեսած մասունքը , քանի յարկ ունենալն , անուանէ իրեն ճանչած ծառերէն , ծաղիկներէն , բանջարեղէններէն , պըտուղներէն մի քանին . թող զրուցէ նոցա ուր գտնուիլը համը հոտը՝ գոյնն՝ իրարմէ ունեցած աարբերութիւնը :

Օր. Դաս . — Դպրոցէն տուն գացած ատենա կը տեսնեմ մարդիկ որ շուկայ կ'երթան , խանութներ որ կը բացուին , կրպակներ ուր գործաւորք կ'աշխատին :

ՀԲԱՀԱՆԳ ԺԵ.

Միտքդ բեր եւ ըսէ թէ ի՞նչպէս կ'անուանեն այն մարդը որ չը տեսներ , այն որ չը կրնար քալել . — Այն որ ստացուածք չունի . — Տղայ մ'որ հայր եւ մայր չունի . — Այն գործիքն որով դոները կը բանան . — Մարդ մը որ չկրնար խօսիլ . — Սենեակ մը որ լոյս չունի :

Օր. Դաս . — Այն մարդուն որ չտեսներ կոյր կըսէն . եւն .

ՀԲԱՀԱՆԳ ԺԶ.

Ի՞նչ կընեն նետեսեալ առարկաներով եւ ի՞նչ կընեն նետեսեալ անձինք :

1. Աթոռին վրայ 2. Քանակով 3. Գրչով
4. Գիրքը 5. Անկողնին մէջ 6. Ի՞նչ կ'ընէ զինուուրը 7. Հայրն ընտանիքը 8. Ո՞վէ անդրանիկ տղան 9. Ի՞նչէ աշակերտը 10. Դպրոցը դասատուն
11. Խնձորը 12. Կաթը 13. Պտուղը 14. Խոհանոցը 15. Սենեակը 16. Գրասեղանը 17. Թիկնաթոռը 18. Հայրին 19. Դարանը 20. Աւելը 21. Լուցկին 22. Աշտանակը 23. Լապտերը
24. Անտուկը 25. Կառքը 26. Ժամացոյցը 27. Բարեկամը 28. Բանտը 29. Թուղթը 30. Հրացանը

Օր. Դաս . — Աթոռին վրայ կը նոտին . քանակով կը գծեն . եւն :

ՀՐԱՀԱՆԳ ԺԵ.

Կետերուն տեղ կրնա՞ս էսել ինձ գրուած բառին իզականն ինչպէս եղբայր եւ քոյր . եւն :

1. Հայր եւ . . . • քեռի եւ . . . • 3. Աշկերտ եւ . . . • 4. Վարժապետ եւ . . . 5. Թագաւոր եւ . . . 6. Մեծ հայր եւ . . .
7. Եղբայր եւ . . . 8. Այր եւ . . . 9. Տէր եւ . . . 10. Ծառայն եւ . . . 11. Մանչ եւ . . . 12. Տիգրան եւ . . . 12. Հայ եւ . . . 14. Դերասան եւ . . . 15. Իշխան եւ . . . 16. Զռքանչ եւ . . . 17. Փեսայ եւ . . . 18. Սպասուհի . . .

Օր. Դաս, Հայր եւ մայր . քեռի եւ հօրաքոյր, աշկերտ եւ աշակերտուհի :

ՀՐԱՀԱՆԳ ԺԲ.

Հետեւեալ բառից ներհակը .

1. Բարձր . . . • 2. Երկար . . . • 3. Խմաստուն . . . • 4. Լայն
 5. Ծով . . . 6. Ամառ . . . • 7. Գարուն . . . • 8. Փոքր ու խելացի . . . 9. Գեղեցիկ . . . • 10. Հարուստ . . . • 11. Անուշ
 12. Թոյլ . . . • 13. Աշխատասէր . . . • 14. Բարեկամ . . . • 15. Խաղաղութիւն . . . • 16. Ուրախութիւն . . . • 17. Ճերմակ . . .
 18. Գիշեր . . . • 19. Լոյս . . . • 20. Լիճ . . . • 21. Հրեշտակ . . .
 22. Բարի . . . • 23. Պաղ . . . • 24. Շատ . . . • 25. Երիտասարդ
 - . . • 26. Նիհար . . . • 27. Մեծ . . . • 28. Հիւանդ . . . • 29. Գիտուն . . . • 30. Մեղաւոր . . . • 31. Պժոխք . . . —
-

ՀՐԱՀԱՆԳ ԺԹ.

Հետեւեալ առարկայից ամենն ալ զանազան մասեր ունին, ըստ ինձ անոնցմէ որո՞նք կը ճանչես :

1. Տան մը . . . • 2. Ծաղկի մը . . . • 3. Պարտիզի մը . . . • 4. Խոհանոցի մը . . . • 5. Հագուստի մը . . . • 6. Գրքի մը . . . • 7. Մարդու մը . . . • 8. Դասարանի մը . . . • 9. Սեղանի մը . . . • 10.

Սենեկի մը	44.	Ծառի մը	42.	Դաշտի մը	43.	Ա-
թոռի մը	44.	Տուփի մը	45.	Ժամացուցի մը	46.	Թոքի մը
Գրչի մը	47.	Հայելոյ մը	48.	Ադարակի մը	49.	Կովի մը
Կովի մը	20.	Տետրակի մը	21.	Զկան մը	22.	Գետի մը
						— (1).

Օր. Դաս. — Տան մը մասերն են դուռը , սրահը , սանդուղք , սենեակք , խոհանոցը , յարկերը . եւն :

ԴԱՍ Ե.

Գ Ա Ղ Ա Փ Ա Ր

Հայրիկ՝ այս իրիկուն ինձ նուշ եւ բուզ բեր :

Հայկակ իւր գրիչը կը բնտուի :


Նարինջն անուշ է , վարդն ալ հոտաւետ :

Կ Ա Ն Ո Ւ

45. Երբ առարկայ մը մեր աշաց առջև չէ այլ միայն նորա պատկերը մեր մտաց մէջ կայ՝ այս պատկերը գաղափար կը կոչուի :

Այսպէս հիմայ աշացս առջև իմ տունս , գրիչ մը ելն չկան , բայց գաղափարը կամ պատկերը մտացս մէջ է :

(1). — Դասատուն մոռնալու չէ որ քերականութեան այս առաջին շրջանին մէջ՝ խնդիրն այնչափ քերականական տեղեկութիւններ տալ չ'է որչափ տղուն սովորեցնել լեզուն թէ՝ իրեն նոր բառեր ուսուցանելով թէ գիտցածներն ուղիղ գործածել տալով , մանաւանդ զինքն անդրադարձութեան , մտածութեան վարժեցընելով : Մեր գրած հրահանգները պարզապէս օրինակներ են զորս դասատուն ըստ կարողութեան աշկերտաց կրնայ փոփոխել՝ եթէ քաջ ըմբոնեց մեր գործոյն ոգին : Եւ ահա այս պատճառաւ է որ ըստ կարի կանոններն ամփոփելով հրահանգները բազմացուցինք :



ՀԲԱՀԱՆԳ Ի.

Կրնա՞ս միտքդ բերել հետեւեալ առարկայից գաղափարներն
եւ ինձ նոցա նկարագիրն ընել :

1. Նետ • 2. Աղեղ • 3. Կապարձ • 4. Նիղակ • 5. Չուկ • 6.
Թուչուն • 7. Սողուն • 8. Չորքոտանի • 9. Ցուլ • 10. Եղ • 11. Կով •
12. Նաւ • 13. Մակոյկ • 14. Մէդ • 15. Պատրոյդ • 16. Լուցկի •
17. Վառարան • 18. Կաթսայ • 19. Սան • 20. Ցուն • 21. Յարկ •
22. Նկուզ • 23. Մառան • 24. Պանդոկ • 25. Պալատ • 26. Խրճիթ •
27. Սոխակ • 28. Փետուր • 29. Կտուց • 30. Թաթ • 31. Ճիրան •
32. Սմբակ • 33. Արեւելք • 34. Ծով • 35. Արեւմուտք • 36. Յա-
մաք • 37. Հիւսիս • 38. Կղզի • 39. Հարաւ • 40. Լիճ • 41. Ծառ •
42. Ճիւղ • 43. Կոկոն • 44. Տերեւ :

ՀԲԱՀԱՆԳ ԻԱ.

Յետագայ պատմութեան մէջ ո՛ր գաղափարները միտքդ կու-
գան ստորագծեալ բառերը կարդալով :

Ատենով պղտիկ աղջիկ մը կար որ պարտիզին մէջ կը զրօս-
նուր :

Դրան առջեն սիրունիկ կատու մը նստած էր :

Փոքրիկ աղջիկը կանչեց կատուն « Եկուր, Մենի, Մենի,
**Կուր . » կատուն աղջկան քով եկաւ հետը խաղաց ու շոհեց՝ ու-
րախութենեն « ըրը, ըրը, » ընելով :**

**Փոքրիկ աղջիկն ալ կատուին հետ խաղալուն գոհ էր եւ ան-
ալ կը շոհէր զինք :**

Այս միջոցին մէկզմէկ կը սիրէին, իրարու բարեկամ էին .
բայց փոքրիկ աղջիկը շարացաւ, պղտի կատուին պոջը քաշեց :
**Այս ատեն Մենին ալ բարկացաւ, ալ ըրը, ըրը չըրաւ . այլ ճան-
կովը զարկաւ աղջկան բֆֆ բֆֆ՝ ընելով :**

Այս առթիւ զիրար ամենեւին չէին սիրեր, ալ բարեկամ չէին :

Կատուիկն առաւ քալեց, աղջիկն ալ մինակ մնաց :

Զարութիւն ընողները բարեկամ չ'ունին :

ՀՐԱՀԱՆԳ ԻԲ.

Պատասխանէ հետեւեալ նարցմանց :

1. Ո՞վ կար ատենով • 2. Ո՞ւր էր • 3. Ո՞վ նստած էր դրան
առջեւ • 4. Փոքրիկ աղջիկն ի՞նչ ըրաւ • 5. Ի՞նչ էր կատուին ա-
նունը • 6. Կատուին ի՞նչ ըրաւ • 7. Ի՞նչպէս կը մրմրար • 8. Աղ-
ջիկն ալ գո՞հ էր • 9. Ի՞նչ կ'ընէր • 10. Մէկզմէկ սիրելնուն ի՞նչ
էին իրարու • 11. Դու բարեկամ ունի՞ս • 12. Ի՞նչ ըրաւ պղտիկ
աղջիկը • 13. Ի՞նչ էր ըրած չարութիւնը • 14. Կատուն գո՞հ էր •
15. Ի՞նչ ըրաւ • 16. Ի՞նչպէս մրմրաց • 17. Ինչո՞ւ ալ բարեկամ
չէին • 18. Ի՞նչ ըրին երկուքը • 19. Ո՞րո՞ք բարեկամ չունին :



ԴԱՍ Զ.

Բ Ա. Ռ

Ծառ մի ունիմ յոյժ գեղեցիկ
Երկոտասան ունի ճիշդին .
Մեն մի ճիշդյան երսուն ուշեւ-
Պատուակ նորա սպիտակ եւ սեւ :

Կ Ա Ն Ո Ւ

46. Մեր գաղափարները բացատրելու՝ այսինքն դըր-
սէն յայտնելու համար՝ բառեր կը գործածեմք :

Երբոր զմելին՝ կամ հացի կտոր մը՝ կամ պատառ մը
թուղթ պէտք է ինձ, զմելին՝ հաց՝ բուղը, բառերն ըսե-
լ մտացս գաղափարները կը յայտնեմ:

ՀՐԱՀԱՆԳ ԻԳ.

Ըսէ ինձ նախ թէ ի՞նչ զաղափարներ միտքդ կուզան երբ
ըսեմ հետեւեալ բառերն, եւ յետոյ շարէ զնոսա Այբենգիմի
կարգաւ :

4. Սառ • 2. Արեւ • 3. Հրացան • 4. Վառօղ • 5. Հաւկիթ •
 6. Սաղաւարտ • 7. Սեամ • 8. Կղպակ • 9. Օշնան • 10. Կաթ •
 11. Սեր • 12. Շաքար • 13. Հաց • 14. Մեղր • 15. Գինի • 16.
 Միս • 17. Բրինձ • 18. Պանիր • 19. Տանձ • 20. Հոր • 21. Զեռ-
 նոց • 22. Կոչիկ • 23. Ակնոց • 24. Բանալի • 25. Դարան • 26. Սե-
 ղան • 27. Շիշ • 28. Կրակ • 29. Մոխիր • 30. Փայտ • 31. Ալհ-
 տուկ • 32. Բամպակ :

Օր. Դաս . — Երբոր սառ. կ'ըսեն , միտքս կուզայ ձերմակ
 պաղ առարկայ մը որ ձմեռը շատ կը գտնուի :

ՀՐԱՀԱՆԳ ԻՒ.

Միտքդ բեր այն առարկայից գաղափարներն որ տեսար
 նետենեալ տեղերն են զնոսա բառերով բացատրեք :

1. Տան մէջ • 2. Ճանչցած մէկ խանութիր մէջ • 3. Գոմի մը
 մէջ • 4. Ազարակին մէջ • 5. Դաշտը • 6. Լերան վրայ շրջադայած
 ատենդ • 7. Գետի մը քով պտըտելու ատեն • 8. Սենեկիր մէջ •
 9. Գրատան մէջ • 10. Եկեղեցւոյ բակը • 11. Անտառի մը մէջ •
 12. Լճին վրայ • 13. Փողոցի մը մէջ • 14. Ջինւորի մը վրայ •
 15. Երկրագործի մը ձեռքը • 16. Խոռանոցի մէջ • 17. Խնձորենոց
 մը , տանձենուոյ մը , սալորենուոյ մը , վարդենուոյ մը վրայ :

Օր. Դաս . Տան մէջ տեսած եմ աթոռ , պատկեր , հայլի , ծը-
 նողքս , հագուստ , մկրատ . եւայլն եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ ԻԵ.

Ինչ բառերով կրնաս բացատրել նետենեալ գաղափարները :

1. Քաղքին կամ զիւղին մէջ մարդկանց բնակած շէնքին ա-
 նունք • 2. Դաշտաց մէջ զիւղացւոց յարդով ծածկուած բնակա-
 րանը • 3. Կինդանեաց քաշուած տեղը • 4. Թուչնոց հիւսած բնա-
 կարանն իրենց ձագուց համար • 5. Ծովուն վրայ գացող մեծ
 շինուած մը • 6. Նորա պղտիկը • 7. Նաւը յառաջ երթալու հա-
 մար ի՞նչ կը բանայ հովին • 8. Խնչով այս կամ այն կողմը կը
 դառնայ • 9. Որո՞նք են նաւը վարող մարդիկ • 10. Նաւակն ի՞ն-

չո՞վ յառաջ կերթայ . 11. Շոգիով զացող նաւք . 12. Շոգիով գացող կառք . 13. Շոգեկառաց ճամբան . 14. Տեղ մը երթալու համար ձիոց կամ գոմշու լծուած շինուածք . 15. Երկիրը հերկելու համար գործածուած կառք . 16. Խոտերը կարելու գործիք մը . 17. Կատելու կարասիք մը . 18. Վրակ վառելու տեղ մը . 19. Թիւերը սորվեցնող ուսմունք . 20. Աշխարհիս ձեւն ու բաժանմունքը ճանչցնող գիտութիւն . 21. Հայկին սպաննած բռնաւորը . 22. Մարդ մը որ չվախնար . 23. Տղայ մը որ չար չէ . 24. Որ անխելք չէ . 25. Որ անհանդարտ չէ . 26. Որ ուսմունքը կը սիրէ . 27. Չորս ստքով կամ չորքոտանի աշխոյժ կենդանի մը որ կառքին կը լծեն . 28. Չիէ աւելի փոքր կենդանի մ'որ եր կայն ականջներ ունի . 29. Խոչոր չորքոտանի մ'որ եղջիւր ունի եւ որու կաթը կը խմելք ու միսը կուտեմք . 30. Կովին փոքր կենդանի մը որուն կաթն ու միսը կ'ուտեմք ու կը խմելք , եւ բուրդը կը խուզեմք . 31. Խաշանց խումբ մը . 32. Հօտ մը կառավարողը . 33. Հօտին պահապան կենդանին . 34. Հօտին թշնամի չար կենդանի մը :

ԴԱՍ Ե.

Վ. Ե Բ Ա. Դ Ի Բ

Կ Ա Ն Ո Ւ

47. Երբոր առարկայի մը վրայ խորհիմք՝ նորա վրայ բան մը կ'ըսեմք , և այս ըսածնիս վերադիր կը կոչուի :

Զեան վրայ խօսելով կընամք ըսել « Զիւնը պաղ է » . տղու մը վրայ նայելով « տղան ուրախ է » :

ՀԲԱՀԱՆԳ ԻԶ.

Հետեւեալ խօսից մէջ ո՞ր առարկայից վրայ կը խօսիմք եւ ի՞նչ են յառելեալ վերադիրք :

1. Աստղը կը պլազայ . 2. Առուակը կը կրկնէ . 3. Զարեհ
բարեսիրտ է . 4. Նշենիք ծաղկեցան . 5. Պանդուխտն իւր տունը
կը յիշէ . 6. Մրջիւնն աշխատասէր է . 7. Մի՞րդատ ինքզինք ըս-
պաննեց . 8. Այս թռչունը շատ անուշ կերգէ . 9. Ցօղը կը փալ-
վրի խոտին վրայ . 10. Ա. Սահակ եւ Ա. Մեսրովիք Հայոց գրերը
դտան . 11. Առիւծը կը մոնչէ . 12. Շունը հաւատարիմ է . 13.
Արեգակը լուսատու է . 14. Բանտը միթին է . 15. Կաթը սնըն-
դարար է . 16. Եշը կը վրայ . 17. Ծոյլ տղան կը պատժուի :

Օր. Դաս . — Ա. օրինակին մէջ Աստղի մը վրայ կը խօսուի,
եւ սորա վերադիրն է կը պլազայ եւ այլն :

ՀՐԱՀԱՆԳ ԻՒ.

1. Եսուած է վերը գտնուած առարկայից վրայ . 2. Սենե-
կին մէջ տասն առարկայ ցցուր ինձ եւ նոցա վրայ բան մ'ըսէ .
3. Սա յետագայ առարկայից վրայ ամբողջ բան մ'ըսուած է :

1. Փայլուն աստղը . 2. Կարկջող առուակը . 3. Բարեսիրտ Զա-
րեհ . 4. Ծաղկալից նշենին . 5. Կարօտցած պանդուխտը . 6. Ցուրտ
ցուրտ քամին . 7. Մուկը պատին մէջ . 8. Խոտերուն մէջ վազող
տղան . 9. Զազը բունին վրայ . 10. Բարի զբացին . 11. Երկչոտ
տղան . 12. Անոյշ մեղրը . 13. Կանաչ տերեւը . —

4. Նախընքաց խօսքերն ամբողջացուր վրանին մէլմէկ բան
ըսելով՝ այսինքն վերադիր մ'աւելցնելով :

Օր. Դաս . — Երբ որ Փայլուն աստղը կ'ըսեմք , տատղին մէկ
վիճակը կը ցուցնեմք . բայց նորա վրայ ամբողջ բան մ'ըսած չեմք
ըլլար , վասն զի աստղին մէկ ըրած բանը չեմք ցուցներ . խօսքն
ամբողջ կ'ըլլար եթէ ըսէինք « Փալիփուն աստղն ամպի մը տակ
ծածկուեցաւ » կամ պարզապէս , « Աստղը կը փայլի :

ՀՐԱՀԱՆԳ ԻՒ.

Ամբողջացուր յետագայ խօսքերը :

1 . . . քաղաքը կըսն թէ հազար եկեղեցի ունէր . 2 . . .
սպաննեց բէլը . 3 . . . մեծին Տիգրանայ քոյլն էր . 4 . . . տե-

րեւներն ու ծովերը կ'երերցնէ . 5. Միայն . . . ջրհեղեղէն ազատեցան . 6 . . . որդին իւր կաթովը կը սնուցանէ . 7 . . . Տըրդատ թագաւորը մկրտեց . 8 . . . բոլոր աշխարհս կը պատէ . 9 . . . Գողիաթն սպաննեց . 10 . . . գարունը կ'աւետէ . 11 . . . Երկիրը կը հերկէ . 12 . . . չմոռնիր մարմնոյն հետ . 13 . . . կը վաղէ . 14 . . . կը զրայ . 15 . . . մեր չարեաց վերջն է :

ՀՅԱՀԱՆԴԻ ԻԹ.

Հետեւեալ խօսքերն յարմար վերադրով մամբողջացուր :

1. Տղայք պատմութիւնները . . . 2. Պատմութիւնները արդարքը . . . 3. Գատնուկները խոտը . . . 4. Ծոյլ տղան աշխատութիւնը . . . 5. Աստուած աշխարհս . . . 6. Օձը կինը . . . 7. Աստուած մարդը դրախտէն . . . 8. Կայէն ու Արէլ Աստուածոյ պատարագ . . . 9. Աստուած Արելայ դոհերը . . . 10. Խոկ կայէնինը . . . 11. Կայէն եղբօրը դէմ . . . եւ դինք . . . Աստուած կայէնը . . . 12. Մարդիկ շատ տեսակ մեղքեր . . . 13. Աստուած զնոսա ջրհեղեղով . . . բայց նոյ նահապեան իւր ընտանիօք ջրհեղեղէն . . . 14. Նոյ առաջին այգին . . . 15. Նոյի սերունդը Բարեկոնի աշտարակը . . . 16. Աստուած Արքահամն իւր ժողովրդեան հայր ըլլալու համար . . . Աստուած որդի մը . . . 17. Սառայի Աստուած Արքահամն որդւոյն գոհը . . . Յակոր հայր եղաւ . Յակորայ տղայք իրենց Յովսէփ եղբօր վրայ . . . եւ դինքը . . . Խամայելացի վաճառականներու . . . Յովսէփ Փարաւոնին սիրելի . . . եւ իր իմաստութեամբն Եղիպտոսը . . . սովէն :

Օր . Դաս . — Տղայք պատմութիւնները կը սիրեն :

ՀՅԱՀԱՆԴԻ Լ.

Ուղղէ սա խօսքերուն սխալ բառերը :

Հայրուր հոգի տեսայ . — Էզին կացի . — Տունը էրեցաւ . — Անտար ըսի խօսքս մտիկ չըրաւ . — Խօրաթա ըրինք . վարժապետը կանկատ ըրաւ . — Զառքերս վուլացի . — Իցցուն տուն

կացի • — Զուրը բէք պաղ է • — Տուոը կոցէ , ինչո՞ւ պաց ծըս
գեցիր • — Ծուն կուզայ կոր • — Երէկ շատ արդեւ եկաւ • —
Մօրաքուրս շատ կը սիրեմ • — Ասօր տրպոց չկացի • — Մայրիս
ծեռուըները պազի • — Մօրս առաջն քալէ • — Որդիին քովէն
կ'երթար • — Կոլխու ցաւդ անցաւ • — Գինիի տակառը ճաթե-
ցաւ • — Աս երկու ախսպատանք շատ սիրով են մէկզմէկու հետ .
— Միհրանը պինդ աղուոր գնդակ մ'ունի • — Եղբայրս խիստ
աղէկ է • — Ինչո՞ւ սա տղաք մէկզմէկէ կը փախչին • — Ինք-
զինքս չեմ կրնար խարեր ատանկ սուտ ու մուտ խօսքերով • —
Ինքզինքէս դուրս ելայ աս որ լսեցի :

Օր. Դաս . — Հարիւր հոգի տեսայ : Այզին գացի : Եւայլն :



ԴԱՍ Ը.

ՆԱԽԱԴԱՍԱՌԻԹԻՒՆ

Ի՞նչ է ինքնիրեն կարիլ մը ջուրը ,
ի՞նչ բանի կուզայ հատ մ'աւազը ,
թէ որ միանան նըմանեաց հետը
Մէկը ծով կ'ըլլայ՝ ցամաք մէկալը :

ԿԱՆՈՆ

48. Երբոր առարկայի մը վրայ մտածածնիս խօսքով
յայտնեմք՝ նախադասուրիւն մը կ'ըլլայ :

Նախընթաց դասին պէս , երբոր ըսեմք . ձիւնը պաղ
է , տղան ուրախ է , այս խօսքերը մէկտեղ՝ որ մեր միտ-
քը կը բացատրեն՝ նախադասուրիւն մը կը կազմեն :

ՀՐԱՀԱՆԳ ԼԱ.

Ըսէ ինն նետեւեալ առարկայից ո՞ր մասերը զիտես :

4. Տան մը • 2. Ծաղկի մը • 3. Ծառի մը • 4. Դպրոցի մը • 5. Տետրակի մը • 6. Գրչի մը • 7. Ժամացուցի մը • 8. Խնձորի մը • 9. Նարնջի մը • 10. Մարդու մը • 11. Ընկուզի մը • 12. Կովի մը • 13. Կատուի մը • 14. Պարտիզի մը • 15. Գրքի մը • 16. Սենեկի մը • 17. Կաղամարի մը • 18. Գրասեղանի մը • 19. Կոռասի մը • 20. Փեթակի մը :

Օր . Դաս . — Տան մը ճանչցած մասերս են նկուղը , յարկերը , տանիքը , սեամը եւլն :

ՀՐԱՀԱՆԳ ԼԲ.

Մեյմեկ նախադասուրին շինէ նետեւեալ բառերով :

Լեզու • Ականջ • Եղբայր • Քոյր • Հայր • Մայր • Հօրեղբայր • Մօրաքոյր • Հաց • Զուր • Գիրի • Մեղք • Կաթ • Շաքար • Միս • Ածուխ • Ճարտ • Կրակ • Աման • Աւել • Լուցկի • Վարժարան • Դասատու • Աշակերտ • Աւազ • Կաւիճ • Զմելին • Պարտէղ • Կակաչ • Մանիշակ • Շուշան • Յասմիկ • Վարդ • Շահոքրամ :

Օր . Դաս . — Մարմինը սննդով եւ հրահանգներով կը զօրանայ :

ՀՐԱՀԱՆԳ ԼԳ.

Հետեւեալ նարցմանց մեյմեկ նախադասուրեամբ պատասխանէ :

Ուր կը գտնուի պարտէղը • Տունը • Դպրոցը • Ծառը • Բոյնը • Անտառը • Օղը • Վանիքը • Աղաւնետուն մը • Վայրագաւիթը • Որջը • Շտեմարանը • Փեթակը • Գրատունը • Հիւանդանոցը • Պանդոկը • Սեղանատունը • Խոհաննոցը • Կաղամարը • Բակը • Գրասեղանը • Դասատուն • Տղան • Մայրը • Հայրը • Եւլն :

Օր . Դաս . — Պարտէղը սովորաբար ասն քով կը գտնուի :

Հետեւեալ բառերն ամբողջացուր նախ քովերնին բառ մ'առելցնելով՝ առանց նախադասութիւն կազմելու, յետոյ մէյմեկ նախադասութիւն կազմելով :

Պղպեկ • — Աղ • — Խւղ • — Քացախ • — Թրթնջուկ • — Նուշ • — Կաղին • — Ելակ • — Կեռաս • — Բալ • — Դանակ • — Թեղանիք • — Զեռք • — Վզնոց • — Թաշկինակ : — Գուլպայ • — Դրոշակ • — Գրպան • — Կոճակ • — Մըռճակ • — Գտակ • — Քըսակ • — Ցուպ • — Ակնոց • — Սանտր • — Ճարմանդ • — Քաղաք • — Պանդոկ • — Փողոց • — Դուռ • — Սանդուղք • — Աստիճան • — Տախտակամած • — Գերան • — Տանիք • — Առաստաղ • — Կղմինտր • — Նիդ • — Բանալի • — Կղպակ • — Դատիկոն • — Խոհանոց :

Օր • Դաս • — Կծու պղպեղը . կծու պղպեղը բերանը կայրէ :

ԴԱՍ թ.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Կ Ա Ն Ո Ն

49. Մէկ առարկայի վրայ կրնամք մէկ կամ շատ բան խորհիլ, կամ շատ առարկայից վրայ մէկ բան զրուցել :

Այսպէս Հայկին վրայ կրնամք զրուցել, քաջ, աղոր, առաքինի . — Տղան կը խօսի, կ'երգէ, կ'աղօթէ, կը կարդայ, կ'զբոսնու և կը քնանայ : Կամ շատ առարկայից վրայ մէկ բան, ինչպէս . ինձորները, տանձերը, սաւրներն ու ծիրանները հասուն են : Կամ շատ առարկայի վրայ շատ բան, ինչպէս . Պօլսոյ ջրերն ու օդն անուշ և մաքուր են :

ՀՐԱՀԱՆԳ ԼԵ.

Ի՞նչ յատկութիւններ կրնաս ըսել հետեւեալ առարկայից վրայ՝ նկատելով նոցա ճեւք՝ գոյնը, հոտը, համն եւայլն :

Նարինջ, սերկեւիլ, ծիրան, հազար, շագանակ, թուղ, վարդ, մանիշակ, շուշան, մարգրիտ, շահպրակ, խաշխաչ, սեխ, ձմերուկ, թութ, խաղող, բալ, գրասեղան, հայլի, անկողին, սաւան, պնակ, դգալ, պատառաքաղ, գաւաթ, սակառ, աւել, բահ, ունելիք, փուք, կրակ, բոց, լոյս, ճարպ, ածուխ, մոխիր, մուր, պատրոյգ, արգանակ, բազմակալ, լապտեր :

Օր. Դաս . — Նարինջը կլոր, խորդուբորդ, համեղ, անուշահոտ, շատ հոյզ ունեցող սկսուղ մ'է :

ՀՐԱՀԱՆԳ ԼԶ.

Որո՞նք են յետագայ առարկայից մասունք :

Թեւ (մարգու) թեւ (թռչնոց), նաւակ, ձուկ, տարի, ամիս, շաբաթ, օր, բանակ մը, քերականութիւն, վարդ մը, բառ մը, քահանայ մը, սեղանատուն մը, պարիսպ մը, տուն մը, աւազան մը, սամողուղ մը, աղբիւր մը, տակառ, նժար, սնտուկ, ոչխար, շաքար, ջաղացք, փուռ, մաղ, սափրչի խանութ, ներկարան, մկրատ, գնդասեղ :

Օր. Դաս . Մարգուս թեւին մասերն են ջղերն, արմուկը, դաստակը, ձեռքը, մատուըները :

ՀՐԱՀԱՆԳ ԼԷ.


Քանի՞ բան կրնաս ըսել հետեւեալ առարկայից վրայ :

Ձի, տղայ, գաւաղան, հով, աշկերտ, կով, լեզու, ակոայ, թուշ, բերան, մատ, եղունգ, գարեջուր, պատուհան, խոհանոց, զստիկոն, բանալի, դուռ, գորդ, վարագոյր, հայլի, թիկնաթոռ, անկողին, սար, սառ, բարձ, օրօրոց, վերմակ, գարան, սեղան :

Օր. Դաս . Ձիուն համար կրնամ ըսել աշխոյժ, օդտակար, պղուր բաշ ունեցող կենդանի մ'է :

Քանի՞ առարկայի համար կրնաս ըսել հետեւեալ բաները :
 1. . . եւ . . . կը ծաղկին մայխին . 2. . . . եւ . . . մարդու ծառայող կենդանիներ են . 3. . . . եւ . . . աշկերտի մը պէտք են . 4. . . . եւ . . . պարտիղի բանջարեղջներ են . 5. . . . եւ . . . զգայարանք կը կոչուին . 6. . . . եւ . . . պաղատու ծառեր են . 7. . . . եւ . . . վայրենի կենդանիներ են . 8. . . . եւ . . . մարդուս կարեւոր մնունդներ են . 9. . . . եւ . . . սայլը կը քաշեն . 10. . . . եւ . . . կարեւոր ուսմունքներ են . 11. . . . եւ . . . փրարու սահմանակից երկու մեծ աշխարհներ են :

Օր. Դաս .— Մանուշակն եւ լելակը կը ծաղկին մայխին , եւն:



ԴԱՍ Ժ.

ԲԱՂԱԴԻԵՍԼ ՎԵՐԱԴԻՐ

Գետին ջրերն արագ են ,
 Արաքս գետին ջրերն արագ են ,
 Արաքս գետին ջրերը շատ արագ են :

Ա Ա Ն Ո Յ

20. Առարկայ մը կամ նորա վերադիրը կրնամք մէկ կամ շատ բառերով բացատրել :

Կրնամը ըսել՝ Եղբայրս տղայ է . — կամ՝ Եղբայրներէս ո՞րն ըլլալն հասկցնել ուղելով . Դէորդ Եղբայրս տղայ է . — կամ՝ ինչպիսի տղայ ըլլալն ալ մեկնել ուղելով . Դէօրդ Եղբայրս ազնիւ տղայ մ'է , ըսել :



ՀԲԱՀԱՆԳ 10.

Ըսէ ինձ քէ յաջորդ խօսից մէջ որո՞նք մէկ եւ որո՞նք մէկէ աւելի բառերով բացատրուած են .

1. Սաթինիկ կը խաղայ . 2. Արեւը կը փայլի . 3. Կապարը ծանր է . 4. Մուխը գեղեցիկ կերպով կը ծառանայ . 5. Հին պատը փլաւ . 6. Ամնէն փոքր տղայք առջեւէն պիտի քալեն . 7. Սոսկալի հարաւային հով մը մեծ անձեւեւ մը բերաւ . 8. Առաւոտեանն ծիածանը հովի նշան է . 9. Զայնս բարեկամի մը ականջը հասաւ . 10. Շողին թեթեւ է . 11. Արշակ աշխոյժ է . 12. Արշակ եղբայրդ աշխոյժ է . 13. Արշակ եղբայրդ աշխոյժ տղայ մ'է :
- Օր. Դաս . — Այս խօսքիս մէջ թէ ենթական թէ վերադիրը մէյմէկ բառով բացատրուած են :

ՀԲԱՀԱՆԳ 10.

Նախընթաց նախադասուրինները փոփոխել , մէկ բառով եղածներն աւելի բառով , եւ շատ բառով եղածները մէկի վերածելով :

Զրուցել քէ յաջորդ տարբեր ճենոց մէջ՝ խօսի միտքն ի՞նչպէս կը փոխուի :


1. Ուսմունքը սիրելի է . 2. Աշխարհազրութեան ուսմունքը սիրելի է . 3. Աշխարհազրութեան ուսմունքը շատ սիրելի է . 4. Գիրքը կորսուած է . 5. Այս գիրքը կորսուած է . 6. Այս գեղեցիկ գիրքը շատոնց կորսուած է : 7. Թուղթ կուղեմ . 8. Շատ թուղթ կուղեմ . 9. Շատ ճերմակ թուղթ կ'ուղեմ . 10. Շատ ճերմակ եւ մեծ թուղթ կ'ուղեմ . 11. Շատ ճերմակ մեծ նամակի թուղթ կ'ուղեմ հիմայ :

ՀԲԱՀԱՆԳ 10.

Յետագայ բառերով մէյմէկ նախադասուրին շինէ , ոմանց առարկան կամ վերագիրը մէկ բառով , միւսները շատ բառերով :

Ծիածան . — Հիւմն . — Կացին . — Աղոց . — Գրոց . — Դարրին , սալ , կռան , աքցան . — Բլուր . — Ժամագործ , ժամացոյց թուացոյց , ասեղ , զապանակ . — Տպագրիչ , տպարան , մամուլ , գրաշար , գիրք , հատոր , կազմարար , մագաղաթ , սոսինձ . — Անդգամ , պնդագլուխ , ստահակ , չարաճճի , շաղփաղի , ծաղրածու , զուարթ , սիրուն . — Բարեկամութիւն , կոիւ , հարուած , անկարգութիւն , աղմուկ , յանցաւոր , պատիժ , բանտ . — Գանգատ , ողք , արցունք , զեղջ , խոստում , ներում , հնազանդութիւն , հլու , հանդարտ . — Լուութիւն , զբաղում , աշխատութիւն , գործ , զրօսանք , խաղ , թուղթ , գնդիկ , յակուրջի :

Օր. Գաս . — Ծիածանը կապուտ , կարմիր , մանիշակագոյն , կանաչ , զեղին եւայն գոյներով է .



ԴԱՍ ՃԱ.

ԻՄԱՍՏ ՍԱՀՄԱՆԱԽՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Ազնիւ տղան կը վարձատրուի , ստահակ տղան կը պատժուի .
Տիաս խնձորը բրու է , հասուն խնձորը անուշ :

Կ Ա Ն Ո Ւ

24. Առարկային կամ՝ վերադրին քով յաւելեալ բառերը նոցա նշանակութիւնը մասնաւորելու՝ սահմանաւորելու կը ծառայեն :

Երբ « բուղք » ըսեմ՝ ամէն տեսակ թուղթ կրնայ հասկըցուկլ . Երբ ըսեմ՝ « նամակի բուղք » մասնաւոր տեսակ մը կ'ըլլայ , իսկ երբ ըսեմ՝ « նամակի կապուտ բուղք » ալ աւելի մասնաւորած կ'ըլլամ , ինչպէս նախընթաց դասին մէջ տեսար :

ՀՐԱՀԱՆԳ ԽԲ.

Յետագայ խօսից մեջ ենթակայից կամ վերադրաց միտքը կրնա՞ս բառով մը սահմանաւորել :

1. Տղիտութիւնը . . . գիշերն է . 2. Արծիւը . . . թռչուն մ'է .
3. Ուսմունքը կ'ազնուացնէ . . . 4. Շունը կը հաչէ . . . 5. Ցղան պիտի ապրի . . . 6. Երիտասարդը . . . կ'ապրի . 7 . . . Ծերն ապրեցաւ . . . 8. Մարդիկ . . . կը մտածեն . 9. Աստուած ստեղծեց . . . 10. Արդարը . . . յաղթեց . . . 11. Վագրն իւր ձագերը կը լափէ . . . 12. Հայերն Անահիտ . . . կը պաշտէին . 13 . . . Ծառը պտղէն կը ճանչցուի . . . 14. Մայրը կ'աշխատի . . . 15. Աստուած . . . ձագերը կը մնուցանէ . 16. Մուշեղ . . . Պարսից յաղթեց . 17. Աստուած զմեզ կը տեմնէ . . . 18. Ծիծեռնիկն իւր բոյնը կը շնէ . 19. Լուսինն արեւէն . . . կառնու իւր լոյսը . 20. Ծովին ջուրն . . . աղի է :

Օր. Դաս . — Տղիտութիւնը մտաց գիշերն է : Արծիւը գիշատիչ թռչուն մ'է :

ՀՐԱՀԱՆԳ ԽԳ.

Յետագայ բառերով նախադասութիւններ շինէ որոց ենթականներն ու վերադիրներն երբեմն մեկ բառով ըլլան երբեմն սահմանաւորող յաւելուածով մը :

Զօրապետ, գնդապետ, հարիւրապետ, յիսնապետ, տասնապետ, զինուոր . — Թմբուկ, օրէնք, փող . — Որսորդ, ձիւոր, համազգեստ, պայուսակ, զինք, թուր, հրացան, ատրճանակ, թնդանօթ, վառող, գնտակ, աղեղ, նետ . — Պատերազմ, յաղթութիւն, զրօշ . — Հարաւ, անօթութիւն, տաք, ճաշ, ախորժակ, հանգիստ, քուն, երազ . — Վարժարան, աշկերտ, դաս, զրակալ, նստարան, աւաղ, քարէ տախտակ, կաւիճ, թուղթ, մելան, գրիչ, զմելին, քանոն . — Ընթերցումն, առակ, վէպ, պատմութիւն, գիր, օրինակ, գիծ, ուղղագրութիւն, քերականութիւն . — Տառ, վանկ, բառ . — Շեշտ, սուր, բութ, պարտք, հրահանգ, սխալ . — Անհոգութիւն, յանդիմանութիւն, ուշադրութիւն, գովեստ, մրցանակ, պատիժ :

Օր . Դաս . — Զօրապետը , զնդապետը , հարիւրապետը , յիս-նապետը , տասնապետն ու դիմուրը բանակի մէջ զանազան աստիճաններ ունեցող անձեր են :

ԴԱՍ ԺԲ.

ՏԵՍԱԿՔ ՆԱԽԾԴԱՍՈՒԹԵԱՆՑ

ՄԵՌ իմ փառքիս որ անցաւ .

Ես ձեր եղբայրն եմ՝ աղաղակեց Յովսեկի .

Ինչո՞ւ մոռցար քու մօրդ խրատը :

Քաշերն զքեզ բոնեն ու փոսի մէջ նետեն :

ԿԱՆՈՆ

22. Նախադասութիւն մը կընայ ըլլալ հաստատական՝ հարցական՝ հրամայական՝ զարմացական կամ ժխտական : Երբ ըսեմ . Աս տղան մարուր կը գրէ , խօսքը հաստատական է . — Աս տղան մարուր կը գրէ . հարցական կըլլայ . — Տղայ՝ մարուր գրէ . հրամայական . — Կնշ աղեկ կը գրէ այս տղան , զարմացական . — Աս տղան աղեկ չգրեր . ժխտական :

ՀՐԱՀԱՆԴ ԽԳ.

Յետագայ բառերով նաստատական նախադասութիւններ շինեւ :

Զիւն , անձրեւ , սառ , եղեամ , ցօղ . — կապիկ , կաքաւ , ցին , շերաս , թրթուր , կճեալ , պատեան . — վարդ , փուշ , տերեւ , ցօղուն , արմատ . — կաղնի , անտառ , բոյս , ծիւզ . — թերթ , տետրակ , կազմ , զիրք , կոխք , լուսանցք . — Ռոկի , արծաթ , լլաթին , կապար , անագ , արոյր , պղինձ . — թուղթ , զրիչ , մնլան , փետուր զրիչ , ծայր , պղղպատեայ ծայր , հասցէ , ծակք , ծրաբ :

Օր . Դաս . — Զիւնը լեռներն ու զաշտերը կը ծածկէ :

ՀՐԱՀԱՆԳ ԽԵ.

Հարցական նախադասութիւններ շինէ յետագայ իմաստիւք :

Ի՞նչ կ'ըսէ որդի մը իւր մօր երբ անօթի ըլլայ , ծարւած ըլլայ , պտտելու երթալ ուզէ . 2. Ի՞նչ հարցումներ կրնայ ընել դասատու մը իւր աշակերտին . 3. Աշակերտ մը իւր դասատուին . 4. Մայր մը իւր որդւոյն դպրոցէն դարձած ատեն . 5. Ի՞նչ կրնայ խնդրել մուրացկան մը . 6. Ի՞նչ կրնայ ուզել հիւանդ մը . 7. Ճանքան կորուսած մարդ մը ի՞նչ կրնայ հարցնել :

Օր . Դաս . — Մայրիկ՝ քիչ մը հաց կուտածս ինձ :

ՀՐԱՀԱՆԳ ԽԶ.

Զարմացական նախադասութիւններ շինէ յետագայ իմաստիւք :

1. Ի՞նչպէս կը յայտնէ իւր ուրախութիւնը տղայ մը որ շատոնց չտեսած մայրը կը տեսնէ նորէն . 2. Որ երկար ժամանակէ ի վեր փափաքած մէկ պարգեւը կ'ընդունի . 3. Մայր մը որ իւր որդւոյն վարուցը վրայ գոհունակութիւնը կը յայտնէ . 4. Տղայ մ'որ եղբայրը վիրաւորուած կը տեսնէ . 5. Մէկը որ վայրենի գաղան մը տեսնէ որ վրան կը յարձակի :

Օր . Դաս . — Ո՛հ , ինչ ուրախութիւն մայրս եկաւ :

ՀՐԱՀԱՆԳ ԽԵ.

Հրամայական նախադասութիւնք :

1. Ի՞նչ պատուէրներ կրնայ տալ սպայ մը իւր զօրաց . 2. Մայր մը իւր տղուն . 3. Ցանտիկին մը սպասաւորաց . 4. Նաւապետ մը իւր նաւաստեաց . 5. Աստուած մարդուս ի՞նչ կը պատուիրէ :

Օր . Դաս . — Շիտակ քալեցէք . գլուխնիդ վեր բռնեցէք . եւլն :

ՀՐԱՀԱՆԳ ԽԸ.

Բացասական խօսքեր շինէ մէջը մտցնելով նետեւեալ բառերը :

Ազգ , ժողովուրդ , ընտանիք , ցեղ . — Վրան , խրճիթ , տուն , ապարահնք , արքունիք . — Բոյս , տունկ , թուփ , ծառ , անտառ . — Եղ , կով , ցուլ , ուղար , զրաստ , ջորի . — Լիճ , գետ , հովիտ , լեռ , փոս , բլուր , դաշտ , անսալատ , ծով , ցամաք , սուր , աղեղ , հրացան , պարխսպ :

Օր . Դաս . — Ազգը գոհ չէ ծոյլ տղաքներէն :

ՀՐԱՀԱՆԳ ԽԸ.

Ի՞նչ տեսակ են նետեւեալ նախադասութիւնը :

1. Թուչունք թուան մի : 2. Ես ձեր եղբայրն եմ՝ աղաղակեց Յովսէփ . 3. Որչափ կը սիրեմ յասմիկն եւ շահոքրամին հոտք . 4. Ուշաղրութեամբ զրեցէք ինչ որ կը մտածէք . 5. Ուշ զրէք կէտերուն եւ զլասազրերուն : 6. Ո՞վ եկաւ այս առաւօտ . 7. Այս աշակերտս այս շարթու աղէկ չաշխատեցաւ , ասոր համար պիտի չվարձատրուի . 8. Բնութիւնն ամենէն գեղեցիկ գիրքն է . միշտ ուշաղրութեամբ կարդա զայն :

Օր . Դաս . — Առջի խօսքը հարցական է :

ՀՐԱՀԱՆԳ Ծ.

Հետեւեալ նախադասութիւնները զանազան ձեւերով բացատրէ :

1. Մեղուն եւ մրջիւնն աշխատասէր են . 2. Գարունը հասաւ . 3. Այս աշկերտը լաւ կը սովորի իւր դասը . 4. Պղտիկ մուկը ծակը փախաւ . 5. Վարդն անուշահոսութիւն կը բուրէ . 6. Անձրեւոտ ամպերը փարատեցան . 7. Վայրենի գաղաններն իրենց որջը կը քաշուին ցերեկ ատեն , եւ գիշերը դուրս կ'ելլնն իրենց որսը վնտուելու :

Օր . Դաս . — Մեղուն եւ մրջիւնն աշխատասէր են . Մեղուն

եւ մրջիւնն աշխատասէր չե՞ն արդեօք . — Մեղու եւ մրջիւն՝
աշխատասէր եղիք . եւն :

ՀՐԱՀԱՆԳ ԾԱ.

Նշանակէ պակասութիւն մը զոր ունենալու չեն յետազայ
անձինք, կենդանիք եւ իրք : — Օր. զրութիւն մը պէտք չէ մրին
ըլլայ : Ածելին զոր ըլլալու չէ :

Ածելի . — Գրութիւն . — Մազ . — Տակառ . — Խարիսխ . —
Պարտատէր . — Խօսուածք . — Դահակ . — Տղայք . — Գարեջուր .
— Փայտ . — Զայն . — Օձիք . — Ճամբաները . — Ճարպ . —
Մառան . — Հագուստ . — Զի . — Գաղտնիք . — Տետրակ . —
Տղոց ձեռքը :

ՀՐԱՀԱՆԳ ԾԲ.

Նշանակէ յատկութիւն մը զոր յետազայ բոլոր անձինք՝ կեն-
դանիք եւ իրք չունին : — Օրին . Ամեն մարդ պատուանոր չէ :

1. Ամէն վաճառական . 2. Ամէն ըմպելի . 3. Ամէն վէրք . 4.
Հարուստք . 5. Զի . 6. Գրութիւն . 7. Մառան . 8. Կեռաս . 9.
Եկեղեցի . 10. Ծառ . 11. Զուր . 12. Գինի . 13. Երգ . 14. Զին-
ուոր . 15. Գաղաք . 16. Պտուղ . 17. Խիղճ . 18. Պատերազմ . 19.
Ցորեան . 20. Աշկերտ . 21. Գրիչ . 22. Մելան .

ՀՐԱՀԱՆԳ ԾԳ.

Աշակերտը պիտի կազմէ զանազան պատիկ խօսքեր , որ
պէտք է գտնուին յետազայ ածականի :

1. Թուխ . 2. Անառակ . 3. Քաջասիրտ . 4. Նոր . 5. Գեր . 6.
Նման . 7. Երկար . 8. Պտղարեր . 9. Բաղմամարդ . 10. Ճերմակ .
11. Ամբողջ . 12. Ծոյլ . 13. Գեղեցիկ . 14. Բարի . 15. Մանիշա-
կագոյն . 16. Սիրուն . 17. Սեւ . 18. Զայնաւոր . 19. Հին . 20.
Հաւասարի . 21. Գերի . 22. Թանձր . 23. Բարակ :

ԴԱՍ ՃԳ.

ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Ըսէ՛ ինձ՝ ազնիւ տղայ՝ ջե՞ս սիրեր տեսնել պարտեզը՝ դաշտը՝ լեռն ու ծովը :

Իւր մայրը կ'ըսէր նմա միշտ • « Տղաս՝ ի'նչ ալ պատահի սուս մի՛ խօսիր »

23. Նախադասութիւն մը կրնայ խօսքով կամ գրով բացատրութիւն: Դրած ժամանակդ՝ հետևեալ դիտողութիւններն ընելու ես :

Ա. Գրէ ճշգիւ ինչ որ կը խորհիս :

Բ. Դիրդ որոշ և մաքուր ըլլայ :

Գ. Ամէն բառ յստակ հեգէ :

Դ. Պարբերութեանց վերջն երկու կէտ դիր • — Հարցական խօսից մէջ ոլորակ (°), զարմացականներուն մէջ երկար (‘), հրամայականներուն մէջ՝ շեշտ (‘) մը :

Ե. Խօսքի մը երկու նախադասութիւններն իրարմէ զատելու համար գործածէ միջակէտ մը (.) :

Զ. Նախադասութեան մը զանազան նման բառերը զատէ իրարմէ բութով կամ ստորով մը :

Է. Ուղղէ սխալ դարձուածներդ ու բացատրութիւններդ, և նոցա շիտակն ամբողջ գրէ որ միտքդ մնայ :

Ը. Երբ տողադարձ ընես՝ բառերը վանկերէն զատէ և դիր ենթամնայ մը (-) :

Թ. Երբ դրածիդ մէջ անուշադրութեամբ բառ մը մոռնաս, մոռցած բառդ տողընդմէջ գրէ և իմացուը այս (ʌ) նշանով թէ սոյն տողին որ տեղն անցնելու է :

Ժ. Երբ ուրիշի մըսած խօսքդ յիշատակես՝ այն խօսքին սկիզբն և վերջը դիր մէյմէկ չակերտ (« . . ») :

ՀՐԱՀԱՆԳ ԾՐ.

Յետագայ բառերով նախադասութիւններ կազմէ այնպէս որ կարենաս վերոգրեալ կանոնները գործածել :

Մսունդ, նախաճաշ, կաթ, քափէ, չայ, սեր, չաքար, հաց, կեղեւ, միջուկ, շերտ, թացան, կարագ, մեղր, չոքոլաթ, կարականդակ, աղցան, հաղար, լախուր, սխտոր, սոխ, աղընդեր, պանիր, թուղ, աղ . — Երկինք, արեւ, աստղ, մոլորակ, արբանեակ, լուսին լեռ, հանք, մետաղ, ոսկի, արծաթ, պղինձ, արոյր, երկաթ, պողպատ, անագ, կապար, մնդիկ . — Քար, խիճ, գայլախազ, մարմարիոն . — Ժայռ, բլուր, դար, աղբիւր, քար, առուակ, վտակ, գեղ, հեղեղ, լիճ, ծով, խորշ, հրուանդան, կղզի, ծովեղերք, դաշտ, անապատ, երկիր, դաւառ, նահանգ :

Օր. Դաս . — Ի՞նչ սնունդ կ'առնէ ան տղան :

ՀՐԱՀԱՆԳ ԾԵ.

Վերոգրեալ կանոնաց դեմ ի՞նչ սխալներ կան յաջորդ խօսից մեջ, ցցուր ինձ եւ ուղղէ :

1. Ի՞նչ ընեմ . 2. ուր գնաց պղտիկ եղբայրդ . 3. Ի՞նչ աղւոր օդ է այսօր . 4. Տեսայ Վահան եղբայրդ գետին եղերքը . 5. Երբ կարինէն պիտի մեկնիս . 6. Վարդան, Վահան, Մուշեղ քաջ զօրավարներ էին . 7. Դաւիթ յարձակեցաւ Գողիաթին վրայ . 8. Ի՞նչ թիւ որ իննով բազմապատկես արտադրելոյն թուոց գումարն ինն է . 9. Եկու Վահէ բեր շոնչանդ որ խաղանք . 10. Թուաբանութեան չորս գործողութիւնք են գումարը, բարձումը, բազմապատկութիւնն եւ բաժանումը . 11. Սաթինիկ շատ աղքատասէր է բայց իւր քոյրը շատ ծոյլ է . 12. Որչափ տարի պիտի կենաս Տիգրանակերտ . 13. Շունը հաւատարիմ է . 14. Մայրըդ ի՞նչպէս է աղէկ է . 15. Մեր թշնամեաց ամենէն մեծը մեղքն է . 16. Պէտք է սիրենք զԱստուած .

Օր. Դաս . — Ի՞նչ ընեմ, ոլորակ մը պէտք է, վասն զի խօսքը հարցական է, ի՞նչ ընեմ :

Յաջորդ խօսից մեջ դիր պէտք եղած ուղղագրական նշանները :

1. Դասատուն եկաւ • 2. Մեր դասերն աղէկ պատրաստուած են • 3. Լեռ մը հողի բարձրութիւն մն է • 4. Ինչ է հրուանդանը • 5. Ահ ինչպէս մոռցայ • 6. Ուշաղրութեամբ գրէ այս օրինակները • 7. Կետաղրութիւնը մի մոռնար • 8. Որու է այս աղիւսակը • 9. Աւելի դիւրին է շիտակը սովորիլ քան թէ սխան ուղղել • 10. Քանի բառ սխալ արտասանեցիր այս դասիս մէջ • 11. Որու է այս պատկերազարդ զիրքը • 12. Զապել որչափ ուսումնասէր օրիորդ մ'է • 13. Ուր է քու մայրդ • 14. Որչափ հիւր եկաւ այսօր ձեզի • 15. Վահան եւ Թորոս շատ բարեսիրտ են :

Օր • Դաս • — Դասատուն եկաւ : Եկաւ վերջակէտ դնելու է որովհետեւ խօսքը լմնցած է :

Հետեւեալ դարձուածներուն մ'ըն է ընտիրն եւ ինջո՞ւ :

Այս թռչունը աղէկ կը կերգէ
Ծառերն ու տունկերը կանանչ
տերեւներով ծածկուած են :
Ուշացեր եմ տէյի ինծի յանդի-
մանեց :
Զուրը կը կեռայ , խարախը
վերցուր :
0ղը ցուրտ էր , չկրցի պարտե-
լու գացեր էի .
Իրկըան ծառքերս շատ կը մսին
Մօյրս հօյրս հրամանով վազը
պտտիլ պըտոր երթամ :

Այս թռչունն աղէկ կերգէ :
Ծառերն ու տունկերը կանաչ
տերեւներով ծածկուած են :
Ուշանալուս համար զիս յանդի-
մանեց :
Զուրը կ'եռայ , ծածկոյթը վեր-
ցուր :
0ղը ցուրտ էր , չկրցայ պատե-
լու երթալ :
Իրիկուան ձեռքերս շատ կը մսին :
Մօրս եւ հօրս հրամանաւը վա-
զը պտտելու պիտի երթամ :

ՀՐԱՀԱՆՔ ԾԲ.

Ձրուցէ ինձ յետազայ ոտանառին մէջ զանազան՝ ուղղագրական նշանաց պատճառները :

Ժամ ժամ զիմ պանդխտութիւնս
Ես յիշեմ ու նստիմ ու յամ,
Ճապղել եմ ջրիդ նման .
Ես օտար երկիր կու գընամ . . .
Աստուած զիտէ ան ճամբան
Ուր երրամ կամ ուր տի մնամ :
Ով կապէ խաչն իմ սրտիս,
Կամ հողվարք ուր ես դուրանամ :
Ցերեկն եմ նետի նըման .
Դիմերն աղեղան նըման .
Ես լարրափի ի վար կու գընամ :



ԴԱՍ ՃԴ.

ԵՆԹԱԿԱՑ

Դաստիարակութեան աղեկ աշակերտները կը սիրէ :
Ա. Դ. Պ. Ա. կը ճանչէ իւր պարտքն ու իրաւունքը :
Լ. Ե. Ա. ազնիս տղալ մն է . Հ. Ա. Զ. ատ կը սիրէ զինքը :
Գ. Ե. Ա. Ա. Ա. Ա. կը սովորեցնէ ուղիդ խօսի եւ գրել :
Ա. Գ. Հ. Ա. Ա. մեր եղբայրն է :

Կ Ա Ն Ո Ւ

24. Նախադասութեան մէջ այն բառն որոյ վրայ բան
մը կ'ըսուի՝ ենթակայ կը կոչուի :
25. Ենթակային վրայ ըսուածը վերադիր է :

Այսպէս երբ կ'ըսենք « Շուշանը ծաղկեցաւ , » որովհետեւ շուշանի վրայ է մեր խօսքն՝ այն բառն ենթակայ կ'ըլլայ , ծաղկեցաւ կ'ըլլայ վերադիրը :

Երբ խօսքն եմ բայով ըլլայ՝ կընանք վերադրին ածականը զատել և ստորոգելի կոչել :

26. Նախադասութեան մը ենթական դտնելու համար ո՞վ կամ ի՞նչ բան հարցումն ընելու եմք . այն բառն որսա հարցման կը պատասխանէ ենթակայ է :

27. Ստորագելին դտնելու համար ի՞նչ կամ ի՞նչպիսի հարցումը կ'ընեմք :

ՀՐԱՀԱՆԳ ԾԹ.

Որո՞նք են հետեւեալ խօսից մեջ ենթական եւ վերադիր ն։ (1)

1. Շուշանը ծաղկեցաւ . 2. Որչափ ցուրտ է օդը . 3. Տղան կը նընջէ . 4. Մենք մեր Ազգին պատմութիւնը պիտի սովորինք . 5. Ո՞ւր է միւս գաաը . 6. Թուչունը կերգէ . 7. Հրեայք խաչեցին Յիսուսը . 8. Թնդանօթն աւերեց եկեղեցին . 9. Աստուած զղացողներուն կը ներէ . 10. Ամէն խօսքի հաւատալը թեթեւամտութիւն է . 11. Եթովպացիք ազգմն են որ Աֆրիկէ կը բնակին . 12. Երկիրս լեցուն է Աստուծոյ բարիքներով :

Օր. Դաս . — Ո՞վ ծաղկեցաւ - շուշանը , ենթակայ է , ծաղկեցաւ վերադիրն է :

ՀՐԱՀԱՆԳ Կ.

Նախադասութիւններ կազմէ հետեւեալ բառերով եւ նոցավերադիրներ գտիր :

Վզնոց , թաշկինակ , գուլպայ , բաճկոնակ , գրպան , ամպ , սանդր , քաղաք , ժողովուրդ , ճաշարան , հիւանդանոց , սենեակ , ապակի , հայլի , հրեշտակ , Աստուած , դժոխք , բեմ , քարոզ , երգ , աղօթք , հաւատք , յոյս , սէր , առաքինութիւն , խոհեմութիւն , չարութիւն , բարեկամութիւն , ոյժ , քաղցրութիւն , բա-

(1) Կամ ստորոգելին՝ ուր որ կայ :

բերարութիւն . — իմաստութիւն , գծագրութիւն , մատիտ , պատկեր , փորագրութիւն , երաժշտութիւն , նուադարան , ջութակ , սրինգ , դաշնակ , ծնծղայ , պար , երգ :

Օր. Դաս . — Եղբօրս վզնոցը սեւ է :

ՀՐԱՀԱՆԴ ԿԱ.

Հարցումներ ըրէ հետեւեալ առարկայից մեյմեկ վերադիր առելցնելով :

Դար , տարի , եղանակ , գարուն , ջուր , ամպ , հով , փայլակ , աշուն , մառախուղ , հունձք , զովութիւն , ձմեռ ցուրտ , ձիւն , բուք , սառ , ամիս , ժամ , վայրկեան , ըոպէ , քուն , արթնութիւն : Ցունուար , Փետրուար , Մարտ , Ապրիլ , Կիրակի , Երկուշարթի , հինգչարթի , առաւօտ , կէսօր , իրիկուն , ստուեր , մթութիւն , գիշեր , տօն , պարգեւ , օրացոյց , ախոռ , մառը , շտեմարան , հոր , հաւնոց , վանդակ , պատշգամ , պարտէղ , տունկ , ծաղիկ , մանիչակ , մարգրիտ , կակաչ , շուշան , խաշխաչ , լեզակ , արտ , գետին :

Օր Դաս . — Դարը քանի՞ տարիէ կը բաղկանայ :

ՀՐԱՀԱՆԴ ԿԲ.

Յաջորդ խօսքերն ամբողջացուր , եւ ուշ դիր կետադրութեան նշաններուն :

1. Ախորժելի լոյս . 2. Բլուրին վրայ աճող ձիթենին . 3. Ճերմակ բուրդով անմեղ ոչխար . 4. Գեղեցիկ կերպով մեծցող մանուկն . 5. Ուղիղ կերպով գրուած օրինակները . 6. Դպրոցին ընտիր աշակերտները . 7. Այս տարուան պտուղները . 8. Վարդին գոյնը . 9. Այս գիրքը . 10. Գեղեցիկ պատմութիւն . 11. Տաք օդ . 12. Աղքատ մարդ . 13. Մուշեղ զօրավարը . 14. Շնորհալի տղան : — 15. Ամենուն սէլը վայելող տղան . . . :

ՀՐԱՀԱՆԳ ԿԳ.

Ուղղեցէր ըստ ամենայնի հետեւեալ օրինակները :

Հովը կը փչէ կոր . Ո՞րչափ է ծերացեր Սիսակը . Զիյտէլի որ մէկզմէկու գացին . Աղբարս քեղի տեսաւ . Մկրտիչը տուոը կը չալէ . Յակովը ըստ ասիկայ հայրիս . Հիշ մէկ տղայ մը չտեսայ . Տունը կէրի կոր . Տունէն չիցտէն կոր որ մօյրմէս եւ հօյրմէս յանդիմանուեցայ . Քուրս խիստ խելօք է . Հարըս եւ մարըս ինձ պըտըտունել տարին . Ըստո՞ր ինքզինքնիդ խարեցիք . — Մերին լաթերը ձերին տունը մոռցանք . — Տա տղան խօսք չի խմանար :

ՀՐԱՀԱՆԳ ԿԲ.

Հետեւեալ վերադրաց մեյմեկ ենրակայ առելցուր :

1. Կերպէ . 2. կը կարգայ . 3. կուգայ . 4. հոսէ . 5. ո՞ւրէ .
6. կը լսուի . 7. շատ գեղեցիկ է . 8. ո՞րչափ երկայն է . 9. վախուն կը դողդղար . 10. ե՞րբ պիտի դայ . 11. ո՞րչափ տխուր մընացին . 12. քանի՞ գիշեր հսկեց որդւոյն անկողնին քով . 13. կուզէ . 14. կը պահէ . 15. կը բերէ . 16. կը տանի . 17. կը սովիք .
18. կը յանդիմանէ . 19. կ'ուտէ . 20. չհասկնար իմ ըսածս . 21. պտտելու ելեր են . 22. երեք տերեւ ունի միայն . 23. խաղող կը բերէ . 24. խաղողէն կը չինուի . եւն :

Օր. Դաս . — Թոռչունը կ'երպէ , տղան կը կարգայ . եւն :

ՀՐԱՀԱՆԳ ԿԵ.

Հետեւեալ բառից բոյլ յարմար վերադիրներ դիր :

1. Ժամը . 2. Բաղերն եւ սագերը . 3. Կօչիկներս . 4. Ո՞վ .
5. Գլուքերը . 6. Ի՞նչպէս . 7. Ի՞նչո՞ւ . 8. Դուք . 9. Շոգենաւը .
10. Լուսինը . 11. Երկնից վրայ . 12. Պետրոս ինձ . 13. Տղայք՝ ձեր դասերը . 14. Ի՞նչ . 15. Եղբայրդ ինձմէ . 16. Նա իմ եղբօրս . 17. Շունը . 18. Զիւնը . 19. Ծաղիկը . 20. Կերակուրները .
21. Շոգենաւը . 22. Հարստութիւնը . 23. Աղքատութիւնը .
24. Ծաղիկն եւ տղան . 25. Ճամբան եւ գետը . 26. Բարկացոտ

մարդն եւ փոթորիկն . 27. Մեղուն եւ աշխատասէր կինը . 28. Գրիչն եւ մատիտը . 29. Մեղըն եւ շաքարը . 30. Զորին եւ պինդ գլուխ մարդը . 31. Ծերութիւնն եւ ձմեռը . 32. Դարունն եւ տըղայութիւնը . եւն :

Օր. Գաս. — Ճամբ հասաւ . — Բաղերն եւ սագերը ջուրը կը սիրեն :

ՀՐԱՀԱՆԳ ԿԶ.

Նշանակէ թէ որո՞նք կ'ընեն յաջորդ գործերը :

- | | | | |
|--------------------|--------------------|----------------------|----------------------|
| 1. Գողալ | 2. Սողալ | 3. Առւրալ | 4. Որոճալ |
| 5. Խորդալ | 6. Կեղծել | 7. Արածել | 8. Ա-ձել |
| 9. Յարգել | 10. Բյսել | 11. Խօսել | 12. Ճուռղել |
| 13. Հաչել | 14. Մլաւել | 15. Սողոսկել | 16. Կարկաչել |
| 17. Վրնջել | 18. Ոռնալ | 19. Մոմուալ | 20. Բզզալ |
| 21. Եռագել | 22. Զոալ | 23. Խոնչել | |

ՀՐԱՀԱՆԳ ԿԷ.

Յետազայ խօսից տէրբայներ գտնել :


- | |
|--|
| 1 ճճները կ'ուտին . 2 տունկերը կը զովացնէ . 3 անուշ կը հատի . 4 ուղտափուշ կ'ուտէ . 5 ցո-րենի հատերը կը խեղդէ . 6 ականջը կը հմայէ . 7 գունտի պէս կլորէ . 8 մուկերը կը լրտեսէ . 9 բանա-լիները կը դարբնէ . 10 փայտերը կը կարէ . 11 ստա-խօսութեան հակառակն է . 12 խմորը կը թրէ . 13 կը կարդայ : |
|--|

ՀՐԱՀԱՆԳ ԿԹ.

Յետազայ տէրբայներուն բայեր գտնել :

- | | | | |
|----------------------|----------------------|--------------------|-----------------|
| 1. Գրածախը | 2. Հովիւը | 3. Խլուրդը | 4. Հօտը |
| 5. Մառախուղը | 6. Թիթեռնիկը | 7. Կովը | |

• . . . 8 . Զաղացապանը . . . 9 . Պարտիզապանը . . . 10 . Ծովիլ
 • . . . 11 . Ակոսյի ցաւը . . . 12 . Պատկերհանը . . . 13 . Անձ-
 րեւը . . . 14 . Երկրաշարժը . . . 15 . Հրդեհը . . . 16 . Մե-
 ղուն . . . 17 . Զինւորը . . . 18 . Բժիշկը . . . 19 . Խորհրդա-
 րը . . . 20 . Արեւը . . . 21 . Կառքերը . . . 22 . Հեղինակը
 • . . . 23 . Կօշկակարը :



ԴԱՍ ԺԵ.

ԼՈՒՇՈՒՄՆ

Հին ատեն ոչ բուղը կար եւ ոչ ապակի .
 Հնազանդ տղան սիրելի է .
 Այսօր ծովն ալեկոծ է :

Ա Ա Ն Ո Ն

28. Նախադասութեան մը մասանց պաշտօններն ի-
 րարմէ զանազանելը լուծել կ'ըսուի :

Զոր օրի. Վերոգրեալ խօսքերէն միոյն մէջ երբ հար-
 ցնելով գտնեմք թէ հնազանդ տղան բառն ենթակայ է և
 սիրելի է վերադիր, նախադասութիւնը լուծած կ'ըլլամք :

ՀԲԱՀԱՆԳ ԿԹ.

Ցետագայ օրինակները լուծե :

1. Գետը ծածկուած էր սառուցով . 2. Տանձը մրդաստանի
 պտուղ մ'է . 3. Վարզը պարտիզի ծաղիկ մ'է . 4. Վարժապետը
 տղան կը կրթէ . 5. Օրը քուան եւ չորս ժամի կը բաժնուի . 6.
 Գիրքն ընթերցման եւ ուսման կը ծառայէ . 7. Խորանն եկեղե-
 ցւոյ մէջ կ'ըլլայ . 8. Մայրս ինձ համար անուշ եփեց . 9. Պա-

Նիրը կը շինեն կաթէն . 10. Օձը կը սողայ . 11. Նա ոտներ չու-
նի . 12. Յորենն եւ դարին կը հասնին դաշտաց մէջ :

Օր. Դաս . — Ո՞վ ծածկուեր է , գետը . ենթակայ . գետն
ի՞նչ եղեր է ծածկուեր և սառուցով վերադիր :

ՀՐԱՀԱՆԳ Հ.

1. Թուչունն իւր մնունդը կը վնասոէ . 2. Աստեղք արեւներ
են որ իրենց հեռաւորութեան պատճառաւ պզտիկ կ'երեւան . 3.
Այս գրքերը ձեր խոնաւ աենեկին մէջ պիտի փտին . 4. Ասթինէ
եւ Հրանտ անսխալ կը գրեն . 5. Պէտք է որ մայրն իւր որդին
ինք զիեցնէ . 6. Եղբայրս նոր տուն մը կը բնակի . 7. Երկաթը
կրակին մէջ կը կարմրի . 8. Մեր զրացին գեղեցիկ հագուստներ
կը վաճառէ . 9. Այս տղան իւր հայրը շատ կը սիրէ :

ՀՐԱՀԱՆԳ ՀԱ.

Մեյմեկ գաղափար յայտնելով նախադասութիւններ զինէ
սա բառերով :

Թուչուն , փետուր , թեւ , ձետ , թաթ , բոյն , ձու , արծիւ ,
բու , սարեկ , սոխակ , ձնձլուկ , ազուր , թութակ , սիրամարդ .
պտուղ , կաղին , ձմերուկ , մարդ , խոտ , վարսակ , կամեփ , վուշ ,
այգի , ցանկ , ճանրայ , արմատ , կոճղ , կեղեւ , ճիւղ , հիւղ ,
կաղնի , կաղամախ , լորի , ուռենի , եղեւին , տոսախ , տատասկ ,
թուփ , մամուռ , եղիճ , մաճ , արօր , բրիչ , յատոց , տրմուղ ,
ցնցուղ , անիւ , սանձ , խարազան :

Օր. Դաս . — Թուչունը թեթեւ է :

ՀՐԱՀԱՆԳ ՀԲ.

Հետեւեալ օրինակաց որո՞նք ճեզ աղեկ եւ որո՞նք գեշ կ'ե-
րեւան :

Եթէ հայրիս մայրիս ըսեմ քեզ կը յանդիմանեն . Երէկ ընկեր-
ներուս հետ պտտել գացինք . Քու քոյրդ շատ աշխատասէր աղ-

Զիկ մ'է , բայց եղբայրդ շատ ծոյլ է . Ձեռուըներդ մաքուր չեն՝ աղէկ մը վուլայ . Եյօր ասօր դասերդ չգիտնաս նէ հօյրդ պիտի ըսեմ որ քեզ պատժէ . Այս թուզունը շատ աղէկ կ'երգէ . Այսօր ողը ցուրտ է . Դասերուս աշխատիմ որ վարժապետներուս սիրելի ըլլամ . Հայրուր օրէն հայրս ինծի պարզեւ մը պըտոր տայ . Պարտէզները շատ մենծ են . — Խեղճութիւններնուն շատ մեղքըցայ . — Տանը վրայէն բոցեր կ'ելլեն . — Պարտիզին մէջ իսել մը ծաղիկներ է բուսեր . Պարտիզին մէջ շատ մը ծաղիկներ բուսեր են . — Ճղակտոր հանեց տղան . — Ճղակտոր ըրաւ տղան . — Անոր շատ գրքերը կայ քովս . — Անոր շատ գրքերը քովս են .

ՀՐԱՀԱՆԳ ՀԳ. (1)

Զրուցէ ինձ քէ ի՞նչ սխալ բացատրութիւններ լսեցիր այսօր եւ զանոնք ուղղէ .

ՀՐԱՀԱՆԳ ՀԳ.

Կրնաս նետեւեալ խօսքերը շտկել :

Զօպան հիչ չվասիր կոր աս օր . Հայրուր իդցուն փարայ ունէի կորմնցուցի . Տուրը կոց պահէ . Աղբարս շատ աղէկ մը կ'երգէ ամա քուրոջս ծանը բէք կէշ է . Աշխատիմ տէյի հայրս ինծի շատ մը կիրքեր առաւ . Մէկ տիւզիսէք քուրս կ'ուլայ . Ատ խօսքը իրեն շատ դժարը եկաւ . — Են աղէկը իմ զիրքս է . — Են առաջները կարդալ չկյաէի . — Մկրտիչով թովմասը ներս եկան . — Զկրցող հասնողներէն մէյմէկ դահեկան առին . — Զիկրնալ լսելուս բան չհասկցայ :

(1) Մեր դրած սխալ հրահանգաց ամէնն ալ ընդհանրապէս դպրոցի տղոցմէ լսած եւ նշանակած եմք : Աշակերաք ինքնին վարժելու են այս սխալները դիտել եւ նշանակել , այնու պիտի ուղղուի տղայոց խօսակցութիւնն :



ԴԱՍ ԺԶ.

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ԲԱՌԻՑ

ԱՆՈՒՆ ԿԱՄ ԳՈՅՑԱԿԱՆ

Ա-Է-Ճ ունի գեղեցիկ բ-շ մը, մեծ որդու մը, շեկ ռ-է-
զօրաւոր բ-թեր, երկայն յեր մը. խար յ-յն ա-դ-ա-ն-ե-ը կը դո-
դացնե : — կ-դին, ո-քը, շ-նը, ժ-յն, ո-շ-ե-ը, ի-դ-ն, վ-դ-
ը, հ-ս-ի-ը, ճ-պ-ը, ո-շ-ե-ը, դ-ի-ը, ե-ն եւ ամեն ջորս ոտք ու-
նեցող կենդանիք՝ ա-դ-ա-ն-ե-ը կ'ըսուին :

Կ Ա Ն Ո Ն

29. Մեր մտքին մէջ եղած գաղափարաց կամ մեր
տեսած առարկայից ինչ ըլլան ուրիշնելու հա-
մար՝ նոցա մէյմէկ անուն կուտամք, որ գոյական կամ
Անուն կ'ըսուի :

Այսպէս երբ կ'ըսենք Սուր, Արծիւ, Լիճ, Ծաղիկ,
մէյմէկ անուն են կամ գոյական :

ՀՐԱՀԱՆԳ ՀԵ.

Ի՞նչ կը կոչուին սա բառեր :

Իմաստութիւն • Գծաղրութիւն • Ուղար • Եշ • Ձի • Եղջերու •
Ուշ • Ոչխար • Խոյ • Գառնուկ • Ցուլ • Հորթ • Դլիին • Դար • Տա-
րի • Ամիս • Օր • Ժամ • Շաբաթ • Թուչուն • Փետուր • Բբուկ • Կը-
տուց • Թեւ • Կձեակ • Արծիւ • Բու • Ծիծեռնակ • Տունկ • Ծաղիկ •
Դեղձանիկ • Ագուա • Արօր • Թութակ • Սիրամարգ • Հնդկահաւ •
Աքաղաղ • Վառեակ • Պատշգամ • Պարտէզ • — Լոր • Աղաւնի •
Տատրակ • Ջայլամ • Արագիլ • Բաղ • Կարապ • Սագ • Ջեռուն •
Կրիայ • Մողէզ :

Միտրդ բեր տանդ՝ պարտիզիդ, դասարանին, փողոցին, եկեղեցւոյն, շուկային մէջէն մէկ քանի առարկաներ, եւ անուանը զը զրուցէ :

Ի՞նչ գիտես սարդին վրայ, եղան, միջատի մը, մարախին, ծղրիդին, մրջիւնին, պիծակին, մեղուին, թրթուրին, թիթեռնըկին, շերամին եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ. ՀԵ.

Հետեւեալ բառից որմնը առարկայ մը կը ցուցնեն :

Ցուն, սիրելի, սագ, անխոնջ, ձագ, բաղ, տկար, սոսկալի, անհնար, ծով, անձրեւ, աղուոր, ցաւալի, վարդ, զգայուն մորթ, կամաց, մէկտեղ, ծեր, կին, հիւանդ, խոնաւ, տատասկ, կարկուտ, իրիկուն, դպրոց, կակուղ, պինդ, թոյլ, կոյր, թթու, պարտէզ, խոհանոց, զիտուն, թոչուն, հաւկիթ, աղտոտ, նիհնար, ճապուկ, աղաւնի, տգեղ, կարմիր, հլու, կանաչ, երիտասարդ, դժուար, զիւրին, ճարտար, անշարժ, ամուլ, թուզ, թութ, ճերմակ, պղպեղ, զեղարան, հանդարտ, առողջ, զբուարթ, զեղին, պարզ, զրիչ, աման, թաղար, դաժան, այլանդակ, կարեւոր, հաղարջ :

ՀՐԱՀԱՆԳ. ՀԸ.

Հետեւեալ խօսից մէջ որո՞նք են անուանք :

1. Նաւը հաստատուն է . 2. իմաստութեան սկիզբը Աստուծոյ վախն է . 3. Մեծն Աղեքսանդր, Մակեդոնացւոց թագաւորը, Պարսից աէրութիւնը նուածեց . 4. Խարեւայ մարդէն խորշելու է . 5. Շոգին ու ծուխը թեթեւ են . 6. Մարդիկ եւ կենդանիք կը քալեն . 7. Քացախը բարկ եւ կծու է . 8. Լեմոնը թթու է . 9. Տքէտ մարդն աղքատ է . 10. Պատանին եռանդուն է . 11. Թաշկինակը քառակուսի է . 12. Այս խօսքն իրաւ է . 13. Այս կապոյտ ծաղիկը շատ սիրուն է . 14. Եղորոս կուզ էր . 15. Այս ծառին տերեւները խիտ են :

Օր. Դաս . — Նաւն առարկայ մնէ եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ ՀԹ.

Յետագայ բառերն օրինակէ , եւ բաժնէ երեք սիրակաց անն , անասուն եւ իր :

Պատկերհան . բժիշկ . սոխակ . մատիտ , այծ • տախտակ . կառք . գորտ • ծերունի • բանտարկեալ . աթոռ • գող • զինուոր • տուն . փղոսկր • դասատու • ծառ • դագաղ • կով • ոչխար • հաւ • հովիր . աքաղաղ • ախոռապետ • ձի • կառավար • հեղինակ • զիրք • դաշնակ • նուագածու • ոնզեղջիւր • եկեղեցի • խորան • քահանայ . դանակ • պատկեր • խաչ • ապակի • կրակ • խոհարար • սենեակ • կերակուր • գինի • բարեկամ • պտուղ • թուղթ • զրիչ :

ՀՐԱՀԱՆԳ Զ.

Օրինակէ եւ անուանքն ստորագծէ :

Բնութեան երեք թագաւորութիւնները . -- Աշխարհիս վրայ դժնուող ամէն ստեղծուածք երեք զլիսաւոր դասուց կը բաժնուին եւ են . Բուսական . Հանքային եւ կենդանական : Բուսական ըսելով կ'իմանամք բոլոր բոյսերն , ինչպէս ծառ , ծաղիկ եւ խոտ : Հանքային են այն գոյութիւնք որք գետնէն եւ հանքերէն կ'ելլեն , ինչպէս քարերն եւ մետաղները . վերջապէս կենդանի ըսելով կը հասկնամք ամէն չնչաւոր արարածներն , ինչպէս մարդիկ եւ անասունք :

ՀՐԱՀԱՆԳ ԶԱ.

Յետագայ բառերն երկու սեանց բաժնէ . առաջինն ազգականց , տարիքի կամ սեռի վերաբերեալք . Երկրորդը՝ վիճակի կամ արուեստի :

Մարդ • որմնագիր . մանչ . պարտիզան . քոյր . կաթնավաճառ . պատ . երկաթագործ . կին . եղբօրորդի . վաճառական . աշակերտ . երկրագործ . ճարտարապետ . ծեր . երիտասարդ . պատանի . պաշտօնեայ . հօրաքոյր . մօրաքոյր . ջաղացպան . թոռ .

խոհարար . հաւ . աղջիկ . փաստարան . հանի . տէր . դիմուոր . ծառայ . խոհարար . փեսայ :

ՀԲԱՀԱՆԳ ԶԲ.

Յետագայ բառից համար զրուցէ թէ արդեօք զործառորի կամ արուեստանորի՝ թէ քաղաքական կամ զինուորական պաշտօնեկի լանուանը են : Օրինակի համար , նուագածուն արուեստանոր մ'է :

Նուագածու . լուսանկար . վերակացու . դարրին . գծագրիչ . ատաղձագործ . ծովակալ . քանդակագործ . սպայ . դատաւոր . երկրաչափ . հրամանատար . դերձակ . ճախարակագործ . հարկան . վաճառական . հարիւրապետ :

ՀԲԱՀԱՆԳ ԶԳ. (1)

Նշանակէ թէ յետագայ կենդանեաց որո՞նք կարնաբոյծ եւ որո՞նք բուջուն են :

- | | | | |
|---------------------|-----------------------|----------------------|----------------------|
| 1. Աղուաւ | 2. Առիւծ | 3. Շիկահաւ | 4. |
| Կով | 5. Լորամարգ | 6. Այծ | 7. Արտոյտ |
| • | 8. Արագիլ | 9. Զեղիկ | 10. Պապկայ |
| 11. Մուկ | 12. Այծեամ | 13. Զի | 14. Բու |
| • | 15. Ճնճղուկ | 16. Ծիծեռն | 17. Կատու |
| • | 18. Ոչխար | 19. Գայլ | 20. Բաղէ |

(1) Այս ինչպէս այլ ամէն կանոնաւոր դասք՝ առանց նախապատրաստութեան չեն ըլլար . զորօրինակ , հոս հասկցնել հարկէ աչակերտին թէ ի՞նչ է կաթնաբոյծն ի՞նչ է թոչուն :

ՀՐԱՀԱՆԳ ԶԴ.

Նշանակէ թէ որո՞նք միջատ, պատենառոր կամ բույատարը էն :

- | | | | |
|--------------|--------------|----------------|-------|
| 1. Գայլաձուկ | 2. իժ | 3. Քարք | 4. օձ |
| 5. Ծածան | 6. Վիշապ | 7. Լեզուաձուկ | |
| 8. Մողէս | 9. Աղկեր | 10. Խարաձուկ | |
| 11. Կրհայ | 12. Զօղաձուկ | 13. Կոկորդիլոս | |
-

ՀՐԱՀԱՆԳ ԶԵ.

Նշանակէ թէ որո՞նք միջատ, պատենառոր կամ բույատարը էն :

- | | | | | |
|-------------|--------------|------------|-------------|-------------|
| 1. Խեցգետին | 2. մարախ | 3. Ճիաստաց | 4. Խղունչ | 5. պիծակ |
| 6. մրջիւն | 7. թրթուր | 8. ոստրէ | 9. խառնիճ | 10. ծըղրիտ |
| 11. գոռեխ | 12. թիթեռնիկ | 13. բոռ | 14. խանջայլ | 15. ճնձղուկ |
| 16. ժժմունք | 17. որդ | | | |
-

ՀՐԱՀԱՆԳ ԶԶ.

Նշանակէ եթէ բուսակա՞ն. կենդանակա՞ն թէ հանքային բերք մ'է : 0ր. երկարը հանքային բերք է :

- | | | | | | |
|----------|------------|------------|-----------|--------------|-------------|
| 1. Երկաթ | 2. Ճարպ | 3. կանեփ | 4. իւղ | 5. ձու | 6. կաթ |
| 7. կողի | 8. գաճ | 9. օղի | 10. ալիւր | 11. մարմարին | 12. սալաքար |
| 13. մեղր | 14. բամպակ | 15. ծխախոտ | 16. ոսկի | 17. բուրդ | 18. ածուխ |
| 19. խող | 20. պղպեղ | 21. աղ | 22. կաշի | 23. փայտ | 24. պղինձ |
-

ՀՐԱՀԱՆԳ ԶԵ.

Յետազայ անուանց մեջին ծառն եւ բուփը զանազանէ :

- | | | | | |
|----------|------------|-------------|-----------|--------|
| 1. կաղնի | 2. վարդենի | 3. կեռասենի | 4. մրտենի | 5. թր- |
|----------|------------|-------------|-----------|--------|

թենի • 6. կաղամախի • 7. հաճար • 8. առուղյա • 9. շագանակենի • 10. լուրիս • 11. յասմկենի • 12. շեփորուկ • 13. ազատքեղ • 14. ցորեան • 15. հաղարջենի • 16. ցարասի • 17. մորենի • 18. նոճի • 19. դկուղ • 20. կնձնի • 21. դավնի :

ՀՐԱՀԱՆԳ ԶԲ.

Հիմայ տեսած կամ գաղափարն ունեցած բառերովդ նախադասուրիւններ շինէ զանազան ձեւերով՝ ինչպէս նաստատական, մխտական, եւ այլն, եւ յետոյ զրուցէ ինձ քէ այն խօսքերուն մէջ որո՞նք են անունները : (1)

ԴԱՍ ԺԵ.

ՎԵՐԱՑԵԱԼ ԱՆՈՒՆ

ԿԱՆՈՆ

30. Գոյականք առարկայից անուանք են, բայց կան գոյականք որոց առարկայն մեր զգայարանաց տակ չիյնար :

Այսպէս ազնուուրիւն, յոյս, նրեշտակ, գոյականք են՝ բայց մեր զգայարանաց տակ չիյնար՝ այլ միայն մտօք կ'ըմբռնեմք :

31. Այն գոյականք որ մեր զգայարանօք չեմք ըմբռներ՝ այլ միայն մտօք՝ վերացեալ անուանք են :

(1) Տղայք անմիջապէս ընդարձակ շարադրութեանց չեն կըրնար ձեռնարկել . ի մանկութենէ վարժելու են խօսքեր կաղմելու զորս հետզհետէ ընդլայնելով պիտի հրահանդին դրութեան :

ՀՐԱՀԱՆԳ ԶԹ.

Յետագայ բառից մէջ որպէսք վերացեալ են եւ որոնք առարկայ մը կը ցուցնեն :

Ցոյս • սեղան • հրեշտակ • բարութիւն • սէր • վախ • ծով • դար • աղրիւր • իմաստութիւն • անապատ • երկինք • զբաղում • ներում • կոփու • խոստում • ծառ • ծաղիկ • բանտ • պատիժ • ըգրուանք • զօրութիւն • լեռ • կենդանի • շուն • կատու • լոռութիւն • կոկիծ • տրտունջ • հաւկիթ • իւզ • լուսացք • հրացան • խաղ • տանջանք • որկրամզութիւն • մեծութիւն • լիճ • կլորութիւն • վառող • օր • հոր • անուշութիւն :

Օր. Դաս • — Ցոյս վերացեալ անուն է որովհետեւ զգայաբանաց տակ չիյնար :

ՀՐԱՀԱՆԳ Դ.

Յաջորդ վերացեալ անուանց մէջն առարկայ ցուցնողները կրնա՞ս գտնել :

Հայրութիւն • մայրութիւն • իմաստութիւն • տղիտութիւն • խորութիւն • աղքատութիւն • հարստութիւն • լուսաւորութիւն • մթութիւն • բարեսրտութիւն • թեթեւութիւն • ծանրութիւն • կարմրութիւն • որդեսիրութիւն • ուսումնասիրութիւն • քաջութիւն • բարեկամութիւն • եղբայրսիրութիւն • հլութիւն • բարոյականութիւն • գրութիւն • նկարչութիւն • բանտարկութիւն • ըըռնութիւն • մարդկութիւն • թագաւորութիւն • իշխանութիւն • աղդականութիւն • խնամութիւն • պետութիւն :

Օր. Դաս • — Հայր, մայր, իմաստուն եւին :

ՀՐԱՀԱՆԳ Պ.Ա.

Յետեւեալ անուններն կրնա՞ս վերացեալ անուանց փոխել : Աղքատ • հարուստ • տարբեր • գիտուն • մեծ • պղտիկ • շուտ •

լիրք . տղէտ . տղեղ . ծանր . ներկայ . հզօր . գոհ . ոռւրբ . կանաչ . կարճ . ուղիղ . արագ . կարօտ . նեղ . յուսահատ . ողորմած . Ասատուած . գեղեցիկ . բանաւոր . փառաւոր . ջերմ . պաղ . կապիկ . ազնիւ . տրտում . չէն . անկիրթ . ցած . յոդնած . թանձր . ըստուար . գէշ . կատարեալ . դառն . խրոխտ . բիրտ . նոր . աշխոյժ :

Օր. Դաս . — Աղքատութիւն , հարստութիւն , տարբերութիւն , եւլն :

ՀՅԱՀԱՆԳ ՊԲ.

Ի՞նչ բառեր կրնաս դնել յետագայ նախադասութեանց մէջ զդիկներուն տեղ :

1. Մայրը տղուն վրայ շատ — ունի . 2. Պէտք է աղքատաց — ընել . 3. Յակոր Յովսէվին իւր միւս զաւկներէն աւելի կը — 4. Դաւիթ — սպանեց . 5. Աստուած — այս աշխարհս — օրուան մէջ . 6. Վարժարանին մէջ — կը սովորուի . 7. Տղան պէտք է հընալզանդի դպրոցին մէջ իւր — եւ տանը մէջ իւր — . 8. Եղոյ արդան ամննէն ալ — է . 9. Օզը — է . 10. Արեգակը — է . 11. Ճռվին ջուրը — է . 12. Տղայ մը պէտք է սիրէ իւր — :

Օր. Դաս . — Մայրը տղուն վրայ շատ սէր ունի եւլն :

ՀՅԱՀԱՆԳ ՊԳ.

Յետագայ բառից մէջէն զանազանէ ծաղիկ , պատող , բանցարեղին , խոտ :

Մանիշակ — խաղող — թրթնջուկ — ծիրան — պրառ — խնձոր — սալոր — կաղամբ — կակաչ — հաղարջ — մնխակ — շահոքրամ — պուտ — մոր — պուտ — ստեպղին — խորդենի — ղեղձ — խաղող — գետափանձոր :

ՀՅԱՀԱՆԳԻ ԴԳ.

Կիզանուս , մետան եւ քար իրարմէ զատէ :

Քարածուլս — երկաթ — վանաքար — զառիկ — արջնաքար — խճաքար — արծաթ — ծծումբ — զինկ — պաղեղ — կապար — կուպր — աղամանդ — կիզահող — մարմարիոն — կաւ — ոսկի — քարածիւթ — կաւիճ — աւազ — գաճ — իրստաքար — անաղ — ուետին :

ՀՅԱՀԱՆԳԻ ԴԵ.

Յետագայ բառերն օրինակէ երկու սեանց վրայ . բնական իրք , արուեստական իրք :

Փայտ — կտաւ — արեւ — խնձորենի — կարագ — արահետ — կաղնի — բանալի — չաքար — լեռ — դաշտ — ջուր — զարեջուր — անկան — դերձան — ճամբայ — թան — ցորեն — կղմինտը — կերպաս — անձրեւ — ճարպ — կօչիկ — երկաթ — արօր — բուրդ — գուլպա — ամպ — սլանիր — մարմարիոն — աղիւս — մառախուղ — կաթ — փետուր զրիչ — երկաթէ զրիչ :

ՀՅԱՀԱՆԳԻ ԴԶ.

Յետագայ բառից համար ըսէ թէ՝ նիւրական իր թէ աննիւր բաներ են : Օրի . քարը նիւրական իր է :

Քար — քաջութիւն — ծառ — զիրք — ծուլութիւն — սըտախօսութիւն — վարագոյր — գաւաթ — հուր — ցանդ — հօտ — կաղամար — բարութիւն — իւղ — ազահութիւն — ընկոյզ — ձմեռ — խրճիթ — քուն — զթութիւն — բոյն — փոփոխամտութիւն — անդունդ — ձանձրոյթ :

ՀՐԱՀԱՆԳ Դ.Ե.

Յետազայ բառերն երկու սեանց բաժնե . զործ կամ վիճակ .
Բաժանում — հանդիպում — գոհութիւն — առողջութիւն
— պար — բարութիւն — պատմութիւն — ջերմ — ընթերցում
— հիւանդութիւն — խաղ — նայուածք — ուրախութիւն —
բացակայութիւն — ծախք — արագութիւն — հետեւութիւն —
յոգնութիւն — աշխատութիւն — ապերախտութիւն — ողողումն
— անգործութիւն — բարութիւն — սպիտակութիւն — ձկնորսութիւն —
բանտարկութիւն — կարմրութիւն — վախ — խառնուրդ —
ներկայութիւն — չնորհակալութիւն :

ՀՐԱՀԱՆԳ Դ.Բ.

Յետազայ բառերն երկու սեանց բաժնե . բարի զործ կամ
յատկութիւն . ջար զործ կամ բերութիւն :

Անկեղծութիւն — խայտառակութիւն — գողութիւն — զըթութիւն —
ազահութիւն — ազնուութիւն — սպանութիւն — երախտագիտութիւն —
հաստատութիւն — բարկութիւն — դիւրութիւն —
բարութիւն — մելամաղձութիւն — ամբծութիւն — կործանումն —
սփոփանք — հնազանդութիւն — զգաստութիւն — որկրամոլութիւն —
հաւատարմութիւն — հսկողութիւն — տկարութիւն —
անհոգութիւն — հայրենասիրութիւն — անփութութիւն —
քաղաքավարութիւն — մաքրութիւն — անամօթութիւն — աղքատութիւն —
դադանապահութիւն — խմաստութիւն :

ՀՐԱՀԱՆԳ Դ.Թ.

Հետեւեալ տեղեաց բնակչաց անուանքն ըստ այսպէս . Գաղողիոյ բնակիչք գաղղիացի կըսուին :

Գաղղիոյ — Անգղիոյ — Պելճիոյ — Թուրքիոյ — Ռուսիոյ —
Գերմանիոյ — Վանայ — Տանիմարքայի — Պոլսոյ — Մշոյ — Հռովմաց —
Մարսիլիոյ — Իտալիոյ — Բրուսիոյ — Սպանիոյ — Բարիզու —
Կարնոյ — Խարբերգի — Եղիպտոսի :

ՀՐԱՀԱՆԳ ձ.

Հետեւեալ անուանց մէջէն նամանիգ՝ աշխարհ եւ քաղաք իրարմէ զանազանէ :

Վասպուրական — Նորմանտիա — Փորթուղալ — Դուին — Բիւրակն — Ռուսիա — Զուիցերիա — Արմաւիր — Թունուզ — Քրիստիանիա — Ստորին Կահանդք — Եղիպտոս — Ոնի — Աղեքսանդրիա — Յաէսա — Վառնա — Շիրակ — Զմիւռնիա — Կեսարիա — Վանատոսպ — Կիլիկիա :

ՀՐԱՀԱՆԳ ձԱ.

Յետազայ բառից մէջէն ծով, գետ, լեռ, լիճ զանազանէ :

Ատլանտեան Ովկիանոս — Արշիպեղագոս — Կարմիր ծով — Պալղիկ — Արաքս — Ուրմիա — Գանուր — Տիղրիս — Ոչն — Վանայ ծով — Գեղամ — Խաղաղական Ովկիանոս — Կասպից ծով — Եփրատ — Տղմուտ — Ալպեանք — Կուր — Մասիս — Արագած — Ալիս — Տաւրոս — Գայլ — Նաղատ — Երասիս — Ոիմ — Նեղոս :



ԴԱՍՏԸԸ.

Թ Ի Ւ

Դու Բի Եղբայր ունիս՝ բայց ես չո՞ Եղբայրներ ունիմ :

Եւ՛ ուրաց ամենէն փափուկներին մին է :

Նուռը շատ հոռեր ունի, ի՞ռո՞ք նատիկներն ալ հոռերով լցուած են :

ԿԱՆՈՆ

Երբ մէկ առարկայի վրայ միայն խօսիմք՝ կըսեմք թէ անունն եզակի է, ինչպէս, մարդ, տուն, պարտէղ, նետ: Երբ մէկէն աւելի առարկայից վրայ խօսիմք՝ կըսեմք թէ անունն յոգնակի է, ինչպէս մարդեր, տուներ, պարտէղներ:

33. Գոյականաց այս յատկութիւնն որով մէկ կամ շատ առարկաներ կը ցուցնեն՝ թիւ կը կոչուի:

ՀՐԱՀԱՆԳ ՃԲ.

Հետեւեալ բառից որո՞նք եզակի եւ որո՞նք յոգնակի են:

Մարմին • գլուխ • քոյրեր • կին • անձեր • անուններ • պարտէղներ • ջուր • հաց • պանիրներ • կերակուրներ • պտուղներ • սեխ • ելակ • երգեր • հաց • կտորուանք • ողկոյզներ • թաշկինակ • ինձորներ • սալոր • քար • քիթ • գաւաթներ • կաղամարներ :

Օր • Դաս • — Մարմին եզակի է որովհետեւ մէկ առարկայի վրայ է խօսքը • եւայն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԳ.

Յետագայ եզակի առակը յոգնակի վոխք (Երկու դառներ և երկու գայլեր) :

ԳԱՌԵ ՈՒ ԳԱՑԼ

Գառնուկ մը կեցեր
Յստակ առուտակէն ծարաւը կ'անցընէր,
Գայլ մը ծոմ բերնով

Կուգայ հոն յանկարծ
 Քաղցէն ըստիպուած
 Բախս մը բնտոելու :
 Կատղնլով իսկոյն
 Աը կանչէ գառան .
 Խնչ յանդգնութիւն
 Որ կհցեր այդպէս
 Խմին խմելու ջուրըս պղասորես :
 Ատ յանդգնութեան պղատիժըդ կ'առնես : —
 Տէր իմ մեհափառ ,
 Գառնուկը կ'ըսէ , ինձ մի բարկանար ,
 Այլ մէյմը նայէ
 Զուրն որ քովէդ դէպ ի վար վաղէ .
 Ես քաման քայլով
 Աը խմեմ հեռու հոս քեզնէ վարով :
 Եւ ի՞նչպէս կ'ուզես
 Որ քու խըմելիքդ պղասորեմ հոսկէց : —
 Քեզ քաշէ լեզուդ ,
 Դու կը պղտորես , կանչեց գայլն անզութ .
 Աս ալ զիտեմ ես
 Որ անցած տարի զիս բանբասեր ես : —
 Ի՞նչպէս կարելի
 Այդ , ըսաւ գառնուկն , երբ ծնած չէի ,
 Դեռ կաթ կուտեմ ես : —
 Եղբայրդ ուրեմն էր , թէ որ զուն ալ չես : —
 Չունիմ ես եղբայր : —
 Մէկն ապա ցեղէդ պէտք է որ ըլլար :
 Զի զուք ամէնքդ ալ
 Ինձ թշնամի էք , հովիւ , չուն , ոչխար :
 Ես այսպէս զիտեմ
 Եւ հիմայ պիտի իմ վրէժս առնեմ : —
 Գայլն այսպէս վճուեց
 Եւ խածաւ գառնուկն անտառը խոթեց ,
 Հոն լափեց զանի
 Ասանց ուրիշ հարցվորձ ատեանի :

Օր. Դաս. — Երկու գառնուկ կեցեր յստակ առուակէ մ'իրենց ծարաւը կ'անցնէին :

ՀԲԱՀԱՆԳ ձԴ.

Խօսքեր շինէ Եզակի և Յողնակի Տէր բայիներով սա բառերով :

Դպրոց, քաղաք, գետ, նաւ, արեւ, ջուր, լիճ, աղուէս, զիրք, տերեւ, աշտանակ, փափագ, ձուկ, համբոյր, կառք, երկինք, զմելին, արձագանք, կին, փոթորիկ, սեղան, եկեղեցի, ժայռ, յոյս, տուն, ծաղիկ, դժուարութիւն, հովիտ, թշնամի, մեղու, ըլուր, բանալի, աղբիւր, քարայր, նաւահանգիստ, մանչ, ժամ, հայր, տէր, արքայ, սեպուհ, աւազան, որդիք, հողի, գերի, մօրեղբայր :

Օր. Դաս. — Մեր գիւղին դպրոցը շատ մեծ է :

ՀԲԱՀԱՆԳ ձԵ.

Եզակի փոխադրե նետենեալ ստորագծեալ անուանքն և նոցա նետ վերաբերութիւն ունեցող բառերը :

Դրբերն օդտակար են՝ վասն զի մտաց եւ սրտի կրթութեան առատ աղքիւրներ են : Նոցա միջոցաւ ամէնէն ընտիր մարդկանց հետ յարաբերութիւն ստանալով՝ շատ մը տեղեկութիւններ եւ զրոսանք կը քաղեմք : Բայց վեասակար են այն զրեանք, որ տըզէտ կամ անզգամ մարդկանցմէ զրուած են . վասն զի կրնան մոլար գաղափարներ տալ, եւ չարին դէմ պատերազմելով զայն ետ մղելու կարողութիւն չ'ունեցողներուն սիրաը կ'ասպականնեն :

Չաշորդ խօսքերն Եզակի վերածելու համար ստորագծեալ բառից մին զեղչէ :

Սրենն ու Լուսինն երկու փայլուն աստղեր են, որ կարծես թէ երկրիս շուրջը կը դառնան, եւ մէյմը տեսանելի եւ մէյ մ'անտես կ'ըլլան : Ասոր ծագիկ եւ մտնել կ'ըսեմք . արեւն ու լուսինը կրնան մթննալ ամպերէ կամ իւաւարումներէ :

Գարունն ու Աշունը տարուան երկու եղանակներ են . ամէն մէկն երեք ամիս կը տեւէ . գիշերներն ու ցերեկները զրեթէ հաւասար երկայնութիւն ունին , եւ բարեխառնութիւնն ամոք է , այսինքն հաւասարապէս հեռու սաստիկ ցրտերէն եւ սաստիկ տաքերէն :

Երկարն ու արծարը հողէ ելած մետաղք են . մարդիկ զանոնք բանեցնելով ամէն տեսակ գործածական կահեր ու գործիներ կը շինեն :

ՀՐԱՀԱՆԳ ձԶ.

Բառզիրք նայելով յետեւեալ բառից նշանակութիւնները զրե :

Անդեայ . — Նախիր . — Երամ . — Վոհմակ . — Վաշտ . — Երամակ . — Զոկ . — Տարմ . — Զոլիր . — Հօրան . — Ճահուկ . — Կաճառ . — Մակաղ . — Գիհ . — Գունդ . — Հօտ . — Ամբով . — Հրոսակ . — Ճամբար . — Ժողով :

Ուլ . — Ամիկ . — Թոժիւն . — Գաւազ . — Կորիւն . — Եղնորթ . — Վառեակ . — Մտրուկ . — Քուռակ . — Բոչոյ . — Ակնդուկ . — Կորնակ . — Լակոտ . — Որոջ . — Բուծ . — Խոչքոր . — Յաւանակ :

ՀՐԱՀԱՆԳ ձԷ.

Նշանակի թէ յետազայ բառից որո՞նք յոգնակի եւ որո՞ք եզակի են :

1. Գորտին գլուխը տափակ է , աչքը փայլուն են , չորս ոտք ունի՝ որոց ետեւի երկուքը շատ երկար են : 2. Մնղուն չորս թեւ եւ մէկ խայթոց ունի : 3. Կովերուն , ոչնարներուն եւ այծերուն կծղակներն երկուքի բաժնուած են : 4. Ամպերն երկինքը

կը ծածկեն, անձրեւ պիտի դայ : 5. Այս աշակերտս իւր դասերն աղէկ զիտնալուն համար վարձատրուեցաւ : 6. Բարի տղայ մը ծնողքը կը յարգէ : 7. Դասատուն առաջին կարգի աշակերտաց դաս մը կուտայ : 8. Այսօր օդը գեղեցիկ է :

ՀՐԱՀԱՆԳ ՃՐ.

Եզակի եւ յօգնակի անուանց ցուցակներ շինե :

1. Որքան թոչունները մեզ օգտակար են . 2. Սոխակը վեասակար որդերուն եւ միջաններուն անհաչտ թշնամին է . 3. Որին մարախները կ'որսայ . 4. Յոպոպն երիզները կը կլէ . 5. Տղայք մի սպաննեք թոչունները, որ մեր հունձքը կը պաշտպանեն . և թէ թոչունք չըլլային մեք ոչ ծառ, ոչ տունկ, ոչ բանջարեցն, ոչ ցորեան, ոչ ընկոյզ եւ ոչ կեռաս կ'ունենայինք . 6. Քանդեալ բոյնէ մը ի՞նչ կը մնայ, բայց միայն օգտակար օժանդակներ մեռուցած ըլլալու չարագործութիւնն՝ եւ անգթութեան խղճի խայթը :

ՀՐԱՀԱՆԳ ՃԹ.

Հետեւեալ նրանանգն օրինակէ, եւ բառից նշանակութիւնը սովորելով սերտէ :

1. Զինուց չկահիւն . 2. Բոցոյ ճարձատիւն . 3. Զրոյ մէջ ինկած մարմնոյ ճողփիւն . 4. Անձրեւի շառաչիւն . 5. Անւոց շաշիւն . 6. Զանգակին զօղանջիւն . 7. Պատերազմի խօշիւն . 8. Ուտից թնդիւն կամ տոփիւն . 9. Գետին խոխոջ . 10. Առուակին կարկաջ . 11. Տերեւոց սոսափիւն . 12. Անտառաց խարշափ . 13. Խարտոցին խոնափիւն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԱ.

Օրինակէ եւ յետազայ բառերէն ընտրութեամբ դիր կետերուն տեղ . պէտք է որ ամենքը յօգնակի ըլլան :

Տետրակ, ոչխար, տանիք, աշուն, գրիչ . — անտառ, մարդ, զանգակատուն, օրէնք, . — գարուն — գառնուկ, քերիչ — երկիր — գայլիկոն :

Անհոգ աշակերտը կը կորսնցնէ իւր . . . եւ իւր . . . —
Ատաղձագործը կը տանի իւր . . . եւ իւր . . . — . . . ը կը
ճարակին . . . վրայ : — Արագիլը միշտ իւր բոյնը կը դնէ . . .
եւ . . . գագաթներուն վրայ : — Ասուին . . . բուրդովը կը
շինուի : — Արեակները մեր . . . ը կը համարնէն . . . սկիզբը
եւ մենէ կը հեռանան . . . ժամանակ : — Պէտք է հնազանդիւ
. . . — կաղնին . . . զարդն է :

ԴԱՍ ՃԹ.

Յ Ո Գ Ն Ա Կ Ի

Քանի՞ զիբք ունիս դու . — Ես շատ գրքեր ունիմ : — Քա-
նի՞ մատիտ ունիս : — Մատիտներս կորսնցուցի : — Իւր պտուղ-
ներին հատ մը տայ ինձ : — Խսահակայ որդին բազմաթիւ որդիք
ունեցաւ :

Կ Ա Ն Ո Ւ

34. Եղակի բառ մը յոդնակի ընելու համար , մէկ
վանկ ունեցող անուանց վրայ աւելցնելու է՝ եւ , շատ
վանկ ունեցողներուն վրայ՝ նէր ⁽¹⁾ :

Զի , գորտ . — ձիեր , գորտեր : Պարտէզ , ծաղիկ . — Պար-
տէզներ , ծաղիկներ :

ՀԲԱՀԱՆԳ ՃԺԱ.

Ի՞նչ է նետեսեալ բառից յօգնակին :

Եղբայր , քոյր , աշկերտ , զինուոր , սակրաւոր , փող , կա-

⁽¹⁾ Աշխարհաբառի մէջ սովորական յոդնակին եր կամ նէր
ծայրայանգով կը կազմուի . բայց անհնար է ամէն բառ այսպէս
յոդնակի ընել , ուստի շատ անգամ մեր հին լեզուին օրինաց
զիմել հարկ կ'ըլլայ : Դաստիառն զանոնք ըստ տեղւոյն բացատ-
րելու է աշակերտաց :

ւիճ , մնլան , թուղթ , թուր , դասատու , աւագ , գրիչ , գմելին , ձաշ , նետ , տուն , յաղթութիւն , պատերազմ , սուր , պառաւ , անօթութիւն , վէպ , զիր , պատմութիւն , ուզզազրութիւն , զին , վանկ , բառ , բադ :

ՀՐԱՀԱՆԴ ՃԺԹ.

Ի՞նչ է նետեւեալ անապանց եզակին :

1. Մայրեր , տղաներ կամ տղայք , մարդեր կամ մարդիկ , պարտէջներ , այդիներ , ծիեր , եղեր , գոմէջներ , էշեր , ցուլեր , տետրակիներ , բարեկամներ եւ թշնամիներ . — 2. Մեծերն ու պղտիկները կը սիրեն այն առաքինի ծերունիները . — 3. Խշաններն ալ աղքատաց պէս պիտի մեռնին . — 4. Ամէն տերեւները , ծաղիկներն եւ ընծիւղները պիտի թուոմին թափթփին . — 5. Առաքինիները սիրելի են . վատ անձերը շատ վտանգաց կը պատահին . — Տղայք մութէն վախնալու չեն :

ՀՐԱՀԱՆԴ ՃԺԳ.

Յետագայ պատմութիւնն յոգնակիի Փոխադրէ (Երկու առաւներն ու երկու ազուէսներն) :

ԱԳԲԱԾԻՆ ՈՒ ԱՂՋԻՔՍԸ

Ագռաւը ծառի մը վրայ թառեր էր՝ կտուցին մէջ պանրի խոշոր կտոր մը բռնելով . վարպետորդի աղուէսը հոտն առնելով նմա մօտեցաւ եւ յարգանօք ողջունելով զնա « Տէր իմ , ըսաւ ակնպածութեամք , ծառայ եմ ձեր աղուորութեան . ատ ի՞նչ անսնման փետուրներ՝ ի՞նչ չպանուած կերպարանք է . — Իրաւ որ եթէ ձայնդ ալ փետուրներուդ պէս աղւոր է , նմանդ չկայ աշխարհիս վրայ » :

Ագռաւն այս խօսքերը լսելով՝ ուրախութիւնէն չէր կրնար ինոքինքը բռնել . « Աըւոր ձայնս ալ լսեցնեմ եւ տեսնէ » կըսէր :

Բայց իւր խոշոր կտուցը բացածին պէս՝ պանրի կտորը վար ին-
կաւ, մէկէն աղուէսը յափշտակեց, լափեց զայն եւ ծաղրելով
մ'աւելցուց : «Պարոն ագռաւ, ուրիշ անդամ այդպէս անխելք
մ'ըլլար, քեզ ամէն անուշ խօսողներէն մի խարուիր . այդ պան-
րիդ կտորը տուած դասիս փոխարէն սեպէ . մնաս բարով » : Ազ-
ուան երդուընցաւ, թէպէտ քիչ մը ուշ, որ անդամ մ'ալ այս-
պէս չխաբուի :

Օր . Դաս . — Երկու ագռաւ ծառի մը վրայ թառեր էին,
եւ իրենց կտուցին մէջ եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ ձժու.

Աշակերտն օրինակէ եւ սովորի նետեսեալ խօսքերը :

1. Գառնը կը մայէ . 2. Կովը կը բառաչէ . 3. Զին կը վրնչէ
կամ կը խինչէ . 4. Էշը կը զռայ . 5. Շունը կը հաչէ . 6. Կա-
տուն կը մկաւէ կամ կը նուայ . 7. Խոզը կը խռնչէ . 8. Աքլորը
կը կակաչէ . 9. Հաւը կը գոռոայ . 10. Վառեակը կը բբէ . 11.
Սազը կը շչէ . 12. Բաղը կը գանչէ . 13. Հնդկահաւը կը գլու-
լայ . 14. Տատրակը վուվու կընէ . 15. Աղաւնին կը մնչէ . 16.
Սոխակը կը գեղգեղէ . 17. Գնարիկը կամ գեղձանիկը կը դայ-
լայլէ . 18. Ծիտը կը ճոռողէ . 19. Արծիւը կը գոչէ . 20. Գայլը
կ'ոռնայ . 21. Առիւծը կը մոնչէ . 22. Եղջերուն կը կռնչէ . 23.
Գորտը կը կարկաչէ . 24. Մուկը կը շչէ . 25. Օձը կը սուլէ
կամ կը շչէ . 26. Ծիծառնը կը ճչէ . 27. Ագռաւը կը կռչէ . 28.
Ճանճը կը բզզայ . 29. Արջը կը խառնչէ . 30. Ցուլը կը պոռոչէ .
31. Լակոտը կը թընծկայ :

ՀՐԱՀԱՆԳ ձժեւ.

Եզակիի վերածէ :

Կապիկներն ամէն կենդանիներէն պւելի մարդկանց հետ նմա-
նութիւն ունին . իրենց կազմութեան մէջ ալ գրեթէ մարդու կը
նմանին . իրենց աշխուժութիւնն եւ զուարթութիւնն ամենուն

ծանօթեն , շատ անդամ կրնան կրթուիլ եւ չէ թէ միայն զմեզ
իրենց խաղերով կրնան զբօսցնել՝ հապա նաեւ ծառայութիւն կը
մատուցանեն մեզ :

Նոքա ընդհանրապէս անվաս են . շատ զայրացնելու չէ ,
վասն զի կոյրզկուրայն կրնան երեսի վրայ նետուիլ եւ ճանկըռ-
տել ալ : Առվորաբար պզտիկ սուլելու ձայն մ'ունին , որով իրենց
կիրքը կը յայտնեն : Տաք եւ անտառոտ երկիրներու մէջ կապիկ-
ները շատ կը գտնուին եւ կը զուարթացնեն անտառներն իրենց
խաղերով , կը ցատկեն ծառէ ծառ . կը կոտրեն եւ կ'ուտեն ըն-
կուզներն ու կաղինները . ուտելէն առաջ այնպիսի ծամածոու-
թիւններ կ'ընեն , որոց առջեւ անհնար է մարդ չի խնդայ :

Բայց կապիկներն ոչ փղի չափ խելահաս , ոչ ուղարկն չափ
խոհուն են : Մինչեւ հիմայ մարդիկ մեծ օգուտ մը քաղած չեն
անոնցմէ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԺ. ·

Կետերուն տեղ եզակի կամ յոգնակի դիր ըստ պարագային :
Ծառ մը . . . — Հրաշակերտ մը . . . — Դղեակ մը . . .
— Պարզեւ մը . . . — Հօրեզմորորդի մը . . . — Որթ մը . . .
— Դոյլ մը . . . — Ուխտեր . . . — Խողովակ մը . . . —
Մաղեր . . . — Վրձին մը . . . — Սայլեր . . . — Զուկ մը
. . . — Ախներ . . . — Ծոյլ մը . . . — Հրաժեշտ մը . . .
— Շէնք մը . . . — Եկեղեցիներ] . . . — Խրճիթ մը . . . —
Զայներ . . . :

ՀՐԱՀԱՆԳ ՃԺ. ·

Կետերուն տեղ յետագայ բառերն ընտրութեամբ դիր :
Խարոյկ — շուն — պահապան — գառնուկ — գայլ — հօտ —
ոչխար — թշնամի — :

Լերանց վրայ աստ անդ կը տեմուին վառած . . . հովիւ-
ներն են որ իրենց . . . արածելէն վերջն երեկոյեան ճաշը կը

պատրաստեն : Այն ատեն . . . ը մայելէ կը դաղրին եւ . . . ը
բնաւ աղմուկ չեն հաներ : Գիշերը . . . ը իրենց տիրոջ մօտ կը
պառկին . բայց բնաւ չեն քնանար գայլերէն զնա պաշտպանելու
համար՝ գոմերուն այն . . . էն որք ստէպ չըշակայից մէջ կը
թափառին : Եթէ ամենաթիթեւ վտանգ մը համար, այս . . . ը
կ'արթնցնեն իրենց տէրերը եւ . . . ը կը փախչին :

ՀՐԱՀԱՆԳ ձՓ.

Յետագայ խօսքերն յոգնակի վերածէ :

1. Եղբայրս բարեկամս է :
 2. Շողոքորթութիւն մը ստախօսութիւն մ'է :
 3. Կաքաւը թռչուն մ'է :
 4. Շունը հաւատարիմ կենդանի մ'է :
 5. Այս ճաշը խնջոյք մ'է :
 6. Մազը խողովակ մ'է :
 7. Աշխատութիւնը խրտուիլ մ'է ծոյլին համար :
 9. Կաղնին ծառ մ'է :
 10. Յորեանն երկրագործին վարձատրութիւնն է :
 11. Պատերազմն աղետք մ'է :
 12. Դասատուն առաջնորդ մ'է :
-

ՀՐԱՀԱՆԳ ձԹ.

Յետագայ խօսքերն ամբողջացուր նինգ յոգնակի բառերով :
Ծաղիկ, ծառ, կամ բանջարեղին :

Դաշտին մէջ կը տեսնեմ

Պարտիզին մէջ կը տեսնեմ

Անտառին մէջ կը տեսնեմ

Բանջարեղինաց պարտէզին մէջ կը տեսնեմ

Ծառաստանին մէջ կը տեսնեմ



ԴԱՍ Ի.

Յ Օ Գ

Կ Ա Ն Ո Ւ

33. Բառ մ'երբոր որոշեալ մոքով գործածուի , ինչ-
պէս՝ եղբօրս առանց , դրացւոյդ յի՞ն՝ ծայրը Յօդ մը կ'առ-
նու և կամ ։ Երբ անորոշ ըլլայ Յօդ չ'առնուր : (1)

ՀՐԱՀԱՆԳ ՃԻ.

Հետեւեալ բառից որսնք որոշեալ՝ որսնք անորոշ են :
կատու , ձի , տուն , բոյն , հաւ , թոչուն , դուռն , տղան ,
հայր , մայր , եղբայր , քոյրը , անառակ , հանդարտ , մարմին , ճա-
կատ , շուրթն , ակոայ , մազը , ուս , ականջը , սիրտ , փորը ,
անդամ :

Օր Դաս . — Կատու՝ անորոշ է , որովհետեւ յօդ չ'է աւելցած
ծայրը եւն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԻԱ.

Հետեւեալ բառից մեյմեկ յօդ դիր :
խաչ , եկեղեցի , խորան , վարդ , նոնենի , սոխ , խունկ ,
չունչ , սեխ , խմոր , զրիչ , տուն , խաշխաշ , չամիչ , տախտակ ,
մոխիր , ձագ , ձմերուկ , նուռն , թութ , խնձոր , տանձ , յու-

(1) Կ կը զրուի երբ բառը ձայնաւորով կը յանդի կամ յաջորդ
բառը ձայնաւորով կ'ըսկսի . ուրիշ պարագայից մէջ և կը գոր-
ծածուի :

նասկ , կանոն , քացախ , արիւն , լեզու , լուսին , լապտեր , աւել , սալոր , ալիւր , ձի , վարդենի :

Օր . Դաս . — Խաչը , եկեղեցին , եւն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԻԲ.

Տառ մը փոխելով բառը փոխել :

Հորթ . — Հայր . — Քարտէզ . — Վարժապետ . — Խումբ . — Տուն . — Գիրք . — Գիրգ . — Յոյս . — Խաղ . — Դասն . — Թագ . — Հոր . — Յարասի . — Դկուղ . — Յարգ . — Զարմ . — Խոր . — Նաւ . — Մարդ . — Փուշ . — Յարկ . — Ցեղ . — Խիտ . — Թութ . — Անշարժ . — Դաժան . — Գող . — Սուր . — Ամօթ . — Դայլ . — Քաւութիւն . — Բարդ . — Տեսրակ . — Կուռ :

Օր . Դաս . — Հորթ—Մորթ . — Հայր—Յայր : Եւն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԻԳ.

Հետեւեալ բառից որևնց և բնական է , որոնցը յօդ :

Ջին , տուն , եկեղեցին , զմելին , անկողին , մեղրն , հացն , լուսին , կանոն , սալորն , աշխարհն , աստղն , աղքատն , ոլուն , սալլապան , աման , ալիւրն , քթան , անքան , բժիշկն , բաժակը , ձուկը , փիղը , հովիւր , մատեան , մելան , թանաքն , թանաքաման , դուռն , կօշիկն , մածուն , պղպեղն , հացն , դիտուն , սառն :

Օր . Դաս . — Ջին և Յօդ է , որովհետեւ բառը ձի է . — Սառն և բնական է եւայլն :


ՀՐԱՀԱՆԳ ՃԻԳ.

Նախադասուրիւններ շինե՛ յօդով եւ առանց յօդի գործածելով վերի բառերը :

Ի՞նչ տարբերութիւն կայ նետեւեալ խօսից մէջ :

1. Մարդէ չվախնար , մարդէն չվախնար . 2. Թուղթ տուր ինձի , թուղթը տուր ինձի . 3. Միշտ ստակ կը կորսնցնէ , միշտ ստակը կը կորսնցնէ . 4. Չայն լսեցի , ձայնը լսեցի . 5. Նամակ գրեց , նամակը գրեց . 6. Միհրան պարտիզպանի տղայ էր , Միհրան պարտիզպանին տղան էր . 7. Սոխակ չ'լսեցի բնաւ , սոխակը չ'լսեցի բնաւ . 8. Կրնա՞ս նամակ գրել , կրնա՞ս նամակը գրերել . 9. Եղբայրդ գիրք կարդաց , Եղբայրդ գիրքը կարդաց . 10. Ես հաց կուղեմ , դուն ջուր կուտաս . ես հացը կուղեմ , դուն ջուրը կուտաս :

Օր . Դաս . — Մարդէ չվախնար՝ բնաւ մէկ մարդէ չվախնար ըսել է . մարդէն չվախնար՝ ըսել է չվախնար այն մարդէն որուն վրայ խօսուած է :



ԴԱՍ ԻԱ.

ՊԱՇՏՈՆ ԱՆՈՒԱՆ . — ԵՆԹԱԿԱՑ

Հնի կը հեծէ լրուած այրէն ,
Շիրմին մօտ ժե՞ն անյոյս տըքայ ,
Ես առառնէն՝ կո՞յր ի ծնէ՝
Գոնէ ի դուռ հաց կը մուրալ :

Կ Ա Ն Ո Ն

36. Անուն մը կրնայ նախադասութեան մը ենթակայն
ՌԱՄԵԼ :



ՀՐԱՀԱՆԳ ՃԻԶ.

Հետեւեալ նախաղասուրեանց մէջ որո՞նք են ենթակայ եղող բառերը :

Աստուած ստեղծեց բոլոր աշխարհս • 2. Ծառը պտղատու է • 3. Պետրոս կոտրեց իւր դրացւոյն ապակիները • 4. Ճանճը , մուծակը՝ բգէզն եւ թիթեռնիկը մարդուս բնաւ օգուտ չունին • 5. Կարիճը չատ վտանգաւոր միջատ մ'է • 6. Արծիւը դիշատող թռչուն է • 7. Զարուհի եւ Տիգրանուհի շարունակ կաշխատին • 8. Ջին ընտանի կենդանի է :

ՀՐԱՀԱՆԳ ՃԻԵ.

Կապուտ օդին մէջ երգելով թեթեւ
Զըւարթ թռչնեկիկ լայնէ զնոլաթեւ •
Եւ հարթ ծովերու յասպարէզ անսաստ
Կարօտ նաւաստին պարզէ զառագաստ :

Հետեւեալ հարցմանց պատասխաններ գրէ եւ լսէ թէ որո՞նք են ենթակայք :

Ո՞վ ստեղծեց դքեղ : —
Ո՞րն է քու հայրենիքդ • —
Ի՞նչ կը պարտիս ծնողացդ • —
Ի՞նչ կը պարտիս եղբարցդ • —
Ի՞նչ կը պարտիս ազգականացդ • —
Ի՞նչ կը պարտիս ամէն մարդու : —
Որո՞նք են Տակաստանի մեծ լճերը , — գետերը , — լեռները : —
Ի՞նչ է բնակած քաղաքիդ անունը , — թաղի՞ն , — փողոցին
Ի՞նչո՞վ կը շինեն զինին , սերն եւ մածունը : —
Ի՞նչ է կարդացած դիրքդ : —
Զընեղեղէն ո՞վ ազատեցաւ : —

Բարելոնի աշտարակն ո՞յք շինեցին : —
Յովսէփին հայրն ո՞վ էր :
Օր. Դաս . — Աստուած ստեղծեց զիս . եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԻԾ.

Գիր մ'առելցնելով յաջորդ վաճկին սկիզբն երեքական բառ կազմե եւ նշանակութիւնը քովը գրե :

աց . . . — ոյս . . . — ուն . . . — ոյն . . . — իք . . .
— արք . . . — ար . . . — եր . . . — ահ . . . — ալ . . .
— աղ . . . — ան . . . — ուղ . . . — այր . . . — ուչ . . .
— առ . . . — այլ . . . — ող . . . — ոյր . . . — առ . . .
ոց . . . — անձ . . . — ետ . . . — ուր . . . — արմ . . . —
այ . . . — աճար . . . — ուք . . .


Օր. Դաս . — Բաց . թաց . հաց . — բոյս . լոյս . յոյս . եւլն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԻԹ.

Յաջորդ բառերն իբր ենթակայ գործածե մելմեկ նախադասութեան մէջ :

Չուկ , գանձ , տանձ , կօշիկ , դեղձանիկ , օձ , չամիչ , խաղող ,
մոխիր , դրիչ , խրատ , խմոր , խունկ , սեխ , ձմերուկ , վանդակ ,
վահան , վերարկու , վարդենի , մուկ , մղրատ , դաւազան , կացին ,
մաղ , արտուտ , գոմէշ , կարկուտ , հաց , դատաւոր , դարբին ,
ցերեկ , արմատ , ասեղ , դանակ , կարոս , ցուցակ , թոչնիկ ,
նաւամստի , առագաստ , հրեշտակ , ծաղիկ , մրրիկ , ամպ , հայրենիք ,
պատկեր , փոշի , թագաւոր , չուք , աչք , տարի , աւերակ , սին ,
տաճար :

Օր. Դաս . — Չուկը սննդարար ուտելիք մ'է , եւայլն :



ԴԱՍ ԻԲ.

ՊԱՇՏՈՆ ԱՆՌԻԱՆ . — ԽՆԴԻՐ

Հայրս շատ զոհ է իմ աղխատութենես :
Զաւենին եղբայրը նիւթեղցած էր :
Իրիկուան օդը զով կըլլայ :
Որո՞նք են ամենեն ազնիւ մարդիկ :

Կ Ա Ն Ո Ւ

34. ԱՆՌԵՆՔ ՍԹՈՐՈԳԵԼԻ ԿԸԼԼԱՅ Է ԿԱՄ ԷՆ ԲԱռ ԵՐՈՂ :

ՀԲԱՀԱՆԳ ՃԼ.

Որո՞նք են յետազայ խօսից մեջ է կամ ՞ բառերով իբր ըստորոգելի գործածուած անուանք , որո՞նք են վերադիրք :

Այդ ծառը կաղնի է . Արեգակն աստղ մ'է . Առանձար արի զօրապետ մ'էր . Այս աղջիկը քոյրս է : Տգիտութիւնը հպարտութեան քոյրն է : Գինին ծերոց կաթն է : Շուշանն անմեղութեան նշանն է . մանիչակը համեստութեան : Այս տղայն աշակերտ է . ձշմարիտ բարեկամք թանկագին գանձեր են :

Օր. Դաս . — Կաղնի անռւնք ծառ անուան ստորոգելի է :

ՀԲԱՀԱՆԳ ՃԼԱ.

Մելմեկ անուն յարմարցար յետազայ խօսից մեջ է կամ ՞ ով ստորոգելի մը կազմելու համար :

1. Աստուած . . . 2. Ամէն մարդու վերջը . . . 3. Նարինջը
 . . . 4. Կպատ երեւելի . . . 5. Գաղղիացիք աշխարհիս ամենէն . . .
 6. Փիզը ցամաքային կենդանեաց մէջ ամենէն . . .
 7. Առաքինութիւնն ամենուն . . . 8. Երկիրը . . . 9. Շուները
 մարդոց . . . 10. Թոչունները զԱստուած կը . . . 11. Հովուի
 մը չունը հօային . . . —
 Օր. Դաս . — Աստուած ողորմած է . — Ամէն մարդու վերջը
 մահ է :
-

ՀՐԱՀԱՆԳ ձԼԲ.

Յետագայ խօսքերը կրնա՞ս է կամ է՞ս ո՞լ մէյմէկի նախադա-
 սութեան սոսորոգելի ընել :

Լուսին, աստղ, արծաթ, արեւ, երկինք, մոլորակ, լեռ,
 երկիր, երկաթ, արոյր, պողպատ, անագ, արծաթ, անձրեւ,
 կարկուտ, ամառ, գարուն, տաքութիւն, դայլ, աղուէս, կա-
 պիկ, կատու, առիւծ, շուն, արջ, մուկ :

ՀՐԱՀԱՆԳ ձԼԳ.

Ուղղէ նետենեալ սխալ նախադասութիւնները :

Հայրս եւ մայրս ինծի ծեծեց . Ակուներդ որչափ ճերմակ է .
 Քոյրս եւ եղբայրս անառակութիւն կընէ . Ինչո՞ւ չեն աշխատիր
 քոյրդ . Դասատուս զիս պատժեցին դասերս չզիանալուս համար .
 աշխատեցէք, սիրելի քոյրս, որպէս զի դու ալ չպատժուիք : Ո՞վ
 կընայ համենար անոր ըսածները . — Չեմ կընար կոր լսեր ձայնդ .
 — Խմելու ու ուտելու համար միայն աշխարք եկած չենք :

ԴԱՍ ԻԳ.

ԶԱՆԱԶԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՔ ԱՆՈՒԱՆ

Ցովսեկի՝ Յակոբալ որդին՝ անյիշաջար էր . — Փարաւոն՝ Եղիպտոսի քաղաքորք՝ զինքն իրեն պաշտօնեայ ընտրեց . — Եփատ գետը դրախտին մէջէն կ'անցնէր :

ԿԱՆԱՆ

38. Անունն առանց է կամ են բայից ալ կրնայ գործածուիլ ուրիշ անուն մը սահմանաւորելու համար . բայց այն ատեն նախադասութիւն կը չկազմեր :

ՀՐԱՀԱՆՔ ՃԼԴ.

Հետեւեալ անուանց քով մէյմէկ անուն դի՞ր որ անոնց միտքը սահմանաւորէ կամ որոշէ :

1. Ս. Ներսէս . . . շատ աղքատանոցներ շինեց . 2. Ներսն . . . անգութ էր . 3. Արուսեակ . . . առաւօսուն կը փայլի .
4. Տրդատ . . . Հոչէին յաղթեց . 5. Նոյ . . . Այրարատ . . . ան վրայ իջաւ . 6. Սողոմոն . . . ն երեւելի էր իւր իմաստութեամբ :

ՀՐԱՀԱՆՔ ՃԼԵ.

Հետեւեալ խօսից մէջ որո՞նք են սահմանաւորող անուններն :

1. Դաւիթ մարգարէն սաղմոսները զրեց . 2. Միհրան եղբայրդ դեռ դպրոց չեկաւ . 3. Ասթինէ քոյրդ շատ զգօնէ . 4. Միհրիլական ծովը որչափ միծ է . 5. Առ տղան իւր Տիգրան բաշերկական :

րեկամին վրայ կը գանդատի . 6. Քոլոմպոս նաւապետն Ամերիկան գտաւ . 7. Կատարինէ կայսրուհին արիասիրտ կին մ'էր . 8. Ո՞ր գետին քով շինուած է Տիգրանակերտ քաղաքը . 9. Լուկուլոս զօրապետը կեռամներն Եւրոպա բերաւ :

Օր. Դաս . — Դաւիթ ո՛ր մարդարէին վրայ խօսք ըլլալը կը յայտնէ , ուստի մարդարէ բառին միտքը կը սահմանաւորէ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԼԶ.

Ի՞նչ սահմանաւորադ բառերով՝ կրնաս գործածել նետեւեալ անուանքը :

Կրակ , բազմութիւն , երկիր , արեւ , հաց , ջուր , վարունգ , նամակ , երկաթ , սիրտ , մահ , հայրենիք , պատմութիւն , բերան , ձայն , պատ , փողոց , զլուխ , գիւղ , գանձ , տենդ , գըլխարկ , ոչխար , ծառ , հունձ , առողջութիւն , բարկութիւն , ծուլութիւն , թռչուն , թչնամի , սենեակ , պարտէզ , անկողին , զրիչ , մատիտ :

Օր. Դաս . — Ածուխի կրակ , փայտի կրակ , սաստիկ կրակ , եւն :



ԴԱՍ ԻԴ.

Դ Ե Բ Ա Ն Ո Ւ Ն

Վաղինակ աս զիրքն եղբօրդ տուաւ եւ չմ ապսպեց որ շնչ մարուր պահէ , բայց բուռ մտիկ ջըրաւ եւ յանդիմանուի պիտի Վաղինակէն :

Դպրոց կերքայ եւ անկէ կը դառնայ :

Ա Ա Ն Ո Ւ

39. Դերանունը (անուան տեղ) բառ մէջ որ Անուան տեղ կը գործածուի :

ՀՐԱՀԱՆԳ ձև.

Ա. Ցցուր ինձի նետեւեալ խօսքերուն մէջ Դերանունները :

Բ. Նոցա տեղ Անունը դիր :

1. Թագաւորն եւ նորա զինուորները տեսայ . 2. Սաթինիկ եւ նորա քոյրը Հոփիսիմէ դպրոց գացին . 3. Տեսա՞ր այն մարդն ուրուն որդին իմ աշակերտսէ . 4. Հայրն իւր որդին անիծեց . 5. Քոյրդ իւր նոր հանդերձները հագաւ . 6. Մայրն իւր աղջիկը կը խնամէ . 7. Վարժապետն իւր ստահակ աշակերտը կը պատմէ . 8. Արշակ իւր մառանին մէջ շատ գինի ունէր եւ ամէն օրինքն եւ իւր ծառայք կը գինովեային :

Օր. Դաս. — Կերպ Դերանուննէ եւ թագաւոր բառին տեղ զըրուածէ : Փոխանակ ըսելու՝ թագաւորն եւ թագաւորին զինուորները տեսայ :

ՀՐԱՀԱՆԳ ձև.

Հետեւեալ նախադասութեանց մէջ Անուան տեղ Դերանուն գործածէ :

1. Սաթինիկ եւ Սաթինիան մայրը պատել գացին . 2. Սաթինիկն ո՞ւր է . Սաթինիան քոյրն ինձի հետ դասընկեր է . 3. Թուաբանութիւնը շատ օգտակար զիտութիւն մ'է , եւ թուաբանութեան կանոններն անփոփոխելի են . 4. Տրդատ եւ Տրդատայ քոյրերը կը ճանչե՞ս . 5. Վահանին օգտակար զիրք մը տուի եւ Վահանին ըսի որ եթէ լաւ աշխատի , Վահանին աւելի շատ զըրքեր կուտամ . 6. Տունն եւ տան ամբողջ կարասիքն այրեցան . 7. Տեսայ տղան եւ տղուն մայրը . 8. Տիգրան եւ Տիգրանայ ծառաները մներ տունն եկան :

Օր. Դաս. — Սաթինիկ եւ նոր մայրը պարտէզ գացին :

ՀՐԱՀԱՆԳ. ՃԼԹ.

Հետեւեալ բառերով նախադասութիւններ զինէ մէջը մէյմէկ դերանուն գործածելով :

Թոռչուն, անասուն, այգի, կապիկ, կով, ձի, եղ, աղուէս, պարտիզան, մարդ, ոտք, ձեռք, եղունգ, ծաղիկ, սոխ, կակաչ, յասմիկ, վարդ, մանիշակ, շուշան, հանք, երկաթ, ոսկի, պղինձ, արծաթ, զպրոց, աշակերտ, մելան, գիրք, սեղան, տետրակ, թուղթ, մատիտ, գրիչ, գրչակալ, թաղաւոր, կայոր, հրեշտակ :

Օր. Դաս. — Թոռչունը կ'երգէ, կը լսեմ զայն :

ՀՐԱՀԱՆԳ. ՃԽ.

Ի՞նչ սխալներ կան հետեւեալ խօսից մէջ :

Աչկս կը ցաւի կոր. Ամէն իմիր փողոց կելլաս. Զուն կուգայ կոր. Աս մարզը ես կը ճանչնամ. Եղրօյրորդիս շատ խելացի է Սենեակին մէջ օլովքը մարդ կար. Աչւըներս սառեցաւ. Արջեւ կուգայ կոր. Աս աղջիկը աշխատասէր է. Երեք թերթի խըտար թուղթ ունիմ. Էմմէն ատեն կլոխս կը ցաւի. Ախպարս անառակ է, բայց շատ կարիճ է. Գաւաթ մը ջուր պեր. Պակը մաքրեցի. Կտոր մը հաց ճարթեցի. Վուր բախվըտեցաւ :

ԴԱՍ ԻԵ.

Ա. Ծ Ա. Կ Ա. Ն

Վարդը հարդ է, Շուշանը ճերմակ, Տերեփուկը կապուտ, Խուտը կանաչ, Մելանը եւ, Արեւը լուսաւոր, Շաքարն անառ. Ինչո՞ւ կարմր վարդան կը սուի. Արայ ժեղեցիկ : Մուշեղ մի մուներ ճերմակ :

Ե Ա Ն Ո Յ

40 Կան բառեր որ առարկայ մը չեն ցուցներ՝ այլ առարկայի մը ինչպիսի ըլլալը . նոքա Ածական կը կոչուին : Բառի մ'ածական ըլլալն անկէ կը հասկցուի որ կրնանք քովը բան ճը կամ ժարդ ճը դնել . — Այսպէս անուշ ածական է , որովհետեւ կրնանք զրուցել , անուշ բան մը , անուշ մարդ մը :

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԱ.

Ի՞նչ ածականներ յարմար կը դատես հետեւեալ անուանց քով դնելու նոցա համին , հոտին , ջափին , ձեւին , ջօշափման , եւ այլն նայելով :

Նարինջ . — վարդ . — մարդ . — թռչուն . — ոչխար . — աղուէս . — մրջիւն . — գիրք . — ծերեր . — երկիր . — լուսին . — արեգակ . — մոլութիւն . — պատմութիւն . — ծուլութիւն . — աշխատութիւն . — աղամանդ . — թուղթ . — կրակ . — առիւծ . — վազր . — օդ . — մնդիկ . — տանձ . — հաց . — բանտ . — բոյս . — վարդ . — գարուն . — աշուն . — հով . — սեղանատուն . — առաքինութիւն . — պարտէզ . — շոգենաւ . — ծով . — գետ . — ջուր . — մելան . — տղայ . — հիւանդ . — երկաթ . — կրակ . — սուր :

Օր. Դաս . — Նարինջը դեղին , համեղ , հոտաւէտ , կլոր պըտուղ մնէ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԲ.

Ո՞ր անուանց քով յարմար կը դատես դնել հետեւեալ ածականները :

Հեղ , փայլուն , խուլ , կլոր , մունջ , խենթ , բանական , օգտակար , աշխատասէր , կարմիր , կանաչ , դեղին , խորամանկ ,

նենգաւոր , ստախօս , բարի , չար , գեղեցիկ , հոտաւէտ , պայծառ , մթին , նուրբ , անարկու , սոսկալի , տկար , կոյր , հիւանդ , խոնաւ , անշարժ , հանդարտ , ճարտար , դիւրին , դժուար , հըլլու , կլոր , նիհար , գեր , աղտոտ , թթու , անոյշ , լայն , իմաստուն , կակուղ , հաստ , թանձր , անօգուտ , գաղտնի , գոռող , ուրախ , սուրբ , համր , երկչոտ , կարծր , վսեմ , հաւատարիմ , մաքուր , առատ , նախանձոտ :

Օր. Դաս . — Հեղ տղան , վայլուն պողպատը , եւազն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԳ.

Ի՞նչ ձեւ ունին և տանձը , գիրքը , ապակին , հաւկիթը , գաւաթը , շիշը , աթոռը , երկիրը , լուսինը , արեգակը , քանոնը , թուղթը , կաղամարը , անխւը , ցողունը , վայրի վարդին պտուղը , աղեղը , ափաէն , անկողինը :

Օր. Դաս . — Տանձը կլոր է . գիրքն եւ ապակին քառակուսի են եւ այլն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԳ.

Ի՞նչ կը կոչուին յաջորդ բառերը եւ ինչո՞ւ :

Տգեղ , տաք , պաղ , փափուկ , որկրամոլ , կլոր , շաղակրատ , մեծ , ցած , խորունկ , ծանր , ստոյդ , ստահակ , իմաստակ , թուխ , սեւ , կարմիր , հասուն , բարձր , պարկեշտ , անմեղ , պիտանի , վայելուչ , անհոգ , խայթող , մարդահաճոյ , հզօր , համբերող , արագաշարժ , անդութ , անմահ , տխմար , ողորմասէր , համարձակ , դպւն , թարմ , չարաճճի , յիմար , թոյլ :

Օր. Դաս . — Տգեղ ածական է , վասն զի առարկայի մը ինչպէս ըլլալը կը յայտնէ , եւ կընամ ըսեղ տգեղ բան , տգեղ մարդ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԵ.

Ըսէ՛ ինձ մեկ քանի յատկութիւնները՝

Սառին, ջրին, շան, տղուն, ծերին, կաթին, ձիուն, ծառին, ծաղկին, կատուին, թղթին, կրակին, մարդուն, արեգական, երկաթին, ոսկոյ, մազնիսին, ատլակոյ, փայտին, մին, արեան, ածուխին, մնդիկին, քարին, դաշնակին, ժնծդպային, փայլակին, անձրեւին, կարկուտին, նարնջին, մանիչակին, շուշանին, տերեւին :

Օր. Դաս . — Սառը պաղ՝ ճերմակ՝ լզիրծ՝ պինդ եւ այլն է :

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԶ.

Ի՞նցպէս կրնաս տարբերել երկու մարդ իրենց տարիքի, հարբառութեան, պատույ, ազնուութեան, եւայլն նկատմամբ :

Երկու ծաղիկ, երկու տուն, երկու պարտէզ, երկու շուն, երկու թագաւոր, երկու գաւաթ, երկու կերպաս, երկու խընձոր, երկու տղայ, երկու փունջ, երկու ծառ, երկու այգի, երկու պատկեր, երկու զիրք, երկու գետ, երկու ծաղիկ, երկու տերեւ, երկու եկեղեցի, երկու ձեռք, երկու կապիկ, երկու կատու, երկու դաշտ, երկու անապատ, երկու կոճակ :

Օր. Դաս . — Կրնամ ըսել ծեր մարդ, երիտասարդ մարդ, հարուստ մարդ, աղքատ մարդ, պատուաւոր մարդ, անպատիւ մարդ, եւ այլն,

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԵ.

Ցցուր ինձ հետեւեալ խօսից մեջ ածականներն եւ ըսէ՛ քէ ի՞նչ բառից քով դրուած են :

Բարի Աստուած, չար սատանայ, մոլի թագաւոր, հզօր առիւծ, դժուար դաս, պատուաւոր աղքատութիւն, անվախ դիւցազն, ազնիւ տղայ, սեւ գոյն, մեծ աղմուկ, անոյշ հոտ, կիզիչ կրակ, հոտաւէտ վարդ, փայլուն աստղ, գթած հայր, ծընողասէր որդեակ, անկիրթ ծառայ, անհնաղանդ աշակերտ, ողորմած մարդ, հաւատարիմ շուն, երիտասարդ եւ քաջ զօրա-

վար, ամուս պարիսպ, բարձր լեռ, արդար դատաստան, շիտակ ճամբայ, վշտաղին մայր, ծիծաղող երես :

Օր. Դաս • — Բարի ածականն Աստուած բառին քով դրուած է, եւ այլն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԲ.

Ածականները նշանակել պարտի աշակերտի :

1. Քաֆէի ծառը միշտ կանաչ է, եւ իւր ճերմակ ծաղիկներն անուշ հստ մը կը բուրեն : 2. Տատրակը զով եւ մութ անտառները կը բնակի : 3. Բարի աշակերտը միշտ դասերն աղէկ կը գիտնայ : 4. Թութակը շատախօս է : 5. Զեր ինձորենիք շատ համեղ պտուղներ տուին : Ոչխարաց բուրդը ճերմակ կամ սեւ է : 7. Երջանիկ կըլամք եթէ գիտնամք միշտ գոհ ըլլալ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԽԹ.

Ածականները նշանակե :

Անուս տղայոց կարծածին պէս՝ չղջիկը թռչուն չէ . բաց ի այն բարակ մորթէն որ իրեն իբրև թեւ կը ծառայէ՝ չղջիկը ճիշդ հասարակ մկանց կը նմանի : Փետրոյ տեղ իւր մարմինը ծածկուած է ստեւով, կտուցի տեղ ակռաներ ունի . եւ կենդանածին է : Որովհետեւ չղջիկը ճճիներ եւ թրթուրներ կուտէ, ուրեմն մեր պաշտպանութեան արժանի է :

ՀՐԱՀԱՆԳ ՃԾ.

Կետերուն տեղ յարմար ածականներ դիր :

• • • տղայ — • • • զլիսարկ — • • • երջանկութիւն —
• • • զիւղ — • • • թաշկինակ — • • • աւանակ — • • • աղուէս — • • • պտուղ — • • • մարդ — • • • տէր — • • • հա-

Ճոյք — . . . պղինձ — . . . ուրախութիւն — . . . կօշիկ —
• . . դանակ — . . . տուն — . . . լոռութիւն — . . . դա-
դաթ — . . . բնութիւն — . . . աշակերտ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԾԱ.

Կէտերուն տեղ յարմար գոյականներ դիր :

Վատանգաւոր • . . անկեղծ • . . ծանր • . . գեղեցիկ • . .
կակուղ • . . վայրենի • . . կանաչ • . . մաքուր • . . թած
• . . խիստ • . . մեղմ • . . աշխատասէր • . . չոր • . . թաց
• . . կարծր • . . սրածայր • . . ուղիղ • . . խոր • . . սեւ
համեղ • . . ծոյլ • . . անհամ • . . ապերախտ • . . թուխ • . .

ՀՐԱՀԱՆԳ ՃԾԲ.

Իւրաքանչիւր օրինակին քով աւելցուր բարեկ, աւ կամ ան-
ուարբեր բառից մին, նաև կցնելու համար քէ նշանակեալ որպի-
սուրիւնը բարի, չար քէ անտարբեր են :

1. Անաչառ դատաւոր մը • 2. Աղեկ գրքեր • 3. Աշխատասէր
գործաւոր մը • 4. Գիտուն բժիշկ մը • 5. Կարմիր կով մը • 6.
Խարսեալ տղայ մը • 7. Փլած տուներ • 8. Հաւատարիմ բարե-
կամ մը • 9. Ընտիր մայր մը • 10. Անհնազանդ աղջիկ մը • 11. Բաց
դուռ մը • 12. Սուտ վկայ մը • 13. Ծաղրածու տղայ մը • 14.
Թարմ հացեր • 15. Եփած կաթ • 16. Փտած խնձոր • 17. Կապոյտ
ժապաւէն մը • 18. Զուարձալի պատմութիւն մը • 19. Գող աղա-
խին մը • 20. Հաստ գրիչ մը • 21. Սպիտակ թղթեր :

ՀՐԱՀԱՆԳ ՃԾԳ.

Հարկ եղած բուական ածականները դիր կէտերուն տեղ :

Աստուած աշխարհը • . . օրուան մէջ ստեղծեց, 2. Երկու

անգամ ութը . . . կ'ընէ : 3. Ամսուան մէջ . . . օր կայ : 4.
 . . . տարին դար մ'է : 5. Մեր այրուբէնը . . . դիր կը պա-
 րունակէ : 6. Տարին . . . եղանակի բաժնուած է : 7. Շաբաթ-
 ուան մէջ . . . օր դործի եւ . . . հանգստի օր կայ : 8. Այն
 դադարները որք դպրոցական տարին կը վերջացնեն՝ սովորաբար
 . . . շաբաթ կը տեւեն : 9. Տարուան իւրաքանչիւր եղանակին
 մէջ . . . ամիս կայ :

ՀՅԱՀԱՆԴԻ ՀՅԴԻ.

Գոյականներն յոգնակի ըրեւ եւ ածականաց հակառակը
 դիր :

1. Ախորժելի յիշատակ • 2. Օգտակար միջատ • 3. Նեղ կօչիկ •
4. Հաւատարիմ ծառայ • 5. Հասուն պտուղ • 6. Երիտասարդ
 փաստաբան • 7. Զուարձալի Պատմութիւն • 8. Պաղատու ծառ •
9. Համեստ մարդ • 10. Զար տղայ • 11. Զոր լաթ • 12. Գեր կին •
13. Ծեր դաստու • 14. Յամառ աղջիկ • 15. Արի զօրական • 16. Կուրք ծղօտ • 17. Առաքինի տղայ • 18. Ուսումնասէր պատանի •
19. Ազատ միտք • 20. Բարձր թուփ :

Օր. Դաս • — Անախորժ յիշատակներ :



ԴԱՍ ԻԶ.

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆ ԱԾԱԿԱՆԻ

ՍՏՈՐՈԳԵԼԻ

Ածականն է կամ էն բառով կրնայ ստորոգելի ըլլալ • այս-
 պէս կ'ըսեմք « Վահան ժագ է » :

ՀՅԱՀԱՆԳ ձՇԵ.

Ո՞ր անուանց պատշաճ կը տեսնես յաջորդ ածականներով ստորոգելի մը շինել :

Օգտակար, անօգուտ, վեասակար, գեղեցիկ, մեծ, պըղտիկ, ստուար, աղեկ տպուած, բարեկազմ, անկազմ, հոտաւէտ, փշոտ, կարմիր, ճերմակ, բաղմաթերթ, կլոր, թեթեւ, առածգական, գոյնդգոյն, բարձր, ցած, լայն, գեղեցիկ, տղեղ, հաստատուն, խարխուլ, լուսաւոր, ընդարձակ, նեղ, լայն, դարդարուն, խոպան, մշակեալ, անմշակ, բարերեր, պտղատու, ծաղկալից, յաւիտենական, ահռելի, կասկածելի, տկար, դիւրին :

Օր. Դաս . — Գիրք մը օգտակար է . — Փուշն անօգուտ է :

ՀՅԱՀԱՆԳ ձՇԶ.

Ի՞նչ ածականներ աւելցնելով նետենեալ բառից է կամ բառի կրնաս մերմեկ նախադասութիւն կազմել :

Աշխարհ, բնութիւն, համնք, կապար, րլուր, հրուանդան, թագաւորութիւն, սեղան, անպիոն, քարոզ, երգ, աղօթք, յոյս, հաւատք, սէր, ոյժ, քաջութիւն, բարութիւն, նկարչութիւն, ատելութիւն, զժբաղդութիւն, կիրք, երիտասարդութիւն, եռանդ, ձայն, պատիւ, տղայ, զիտութիւն, արուեստ :

Օր. Դաս . — Աշխարհս անհուն է . — Բնութիւնը դարմանալի է . եւ այն :

ՀՅԱՀԱՆԳ ձՇԷ.

Գտիր տասն առարկայի անուն քեզի ծանօթ բուջնոց եւ նոցա խրաբանջիւրին մի քանի ածական յարմարցուր :

ՀՐԱՀԱՆԴ ՃԾԲ.

Ուղղէ՛ նետեւեալ նախադասուրեանց մէջ ուղղագրական նըշաններու նկատմամբ եւ այլ սխալները :

Ես չկրցի եկեր էի . ուր կերթաս . նախանձութիւնը ատեւթիւն առաջ կը բերէ . իխցը մարդս կը դշուառացնէ . պատիւը եւ գիտութիւնը աշխատանաց պարքեւն են . իմաստուն արդան իւր մորը երջանկութիւն կը պատճառէ . շատախոսը ամմէն մտածածը կ'ըսէ , իսկ իմաստունը ամմէն ըսածը կը մտածէ . ամէն մարդ հոգի եւ մարմին ունի . ուր է քու տունդ . ինչ կուդես . ինչու համար դասերուդ չես աշխատիր :

ՀՐԱՀԱՆԴ ՃԾԹ.

Յցուր յաջորդ խօսից մէջ ենրական եւ վերադիրը կամ ստորոգելին եւ ըսէ ինձ թէ ի՞նչ տեսակ բառեր են :

Առողջութիւնն օգտակար է . Մաքուր սիրտ ունեցողն երջանիկ է . Հարստութիւնն ապահով չէ . Մեծութիւնը խարերայ երազ մ'է . Վախն ոտքը կապեց . — Սրտադողէն լեզուն բռնուեցաւ . — Ամէն ծաղիկ հոտաւէտ չէ . Աշխարհագրութիւնն եւ պատմութիւնն իրարմէ անբաժանելի գիտութիւններ են . — Իմաստուն տղան հօրը պարծանքն է . — Մեր տունը շատ օդաւէտ է . — Մելանով կը գրեն . — Մազերդ կտրեցի՞ր :

Օր. Դաս . — Օգտակար ածական է եւ ստորոգելի առողջութեան :

ՀՐԱՀԱՆԴ ՃԿ.

Յմրմար ածական լ'անելցնել :

1. Արծաթը է . 2. Քանոնը է . 3. Սենեակը է . 4. Մելանը է . 5. Գաւաթը է . 6. Սեղանը է . 7. Կաշին 8. Նարինջը է . 9. Պնակները են . 10. Ծծումբին բոցը է . 11. Խոտը է . 12. Կեռասները են . 13. Սաթը է . 14. Քափէն է . 15.

Աստղերը . . . են . 16. Դեղձը . . . է . 17. Լեղակը . . . է .
 18. Զիերը . . . են . 19. Գետերը . . . են . 20. Փայտը . . . է
 . 21. Ապակին . . . է . 22. Խոտը . . . է . 23. Թռչունները
 . . . են . 24. Քարը . . . է . 25. Էրկաթը . . . է . 26. Մի-
 ջանները . . . են . 27. Զուրը . . . է . 28. Իւղը . . . է . 29.
 Երկինքը . . . է . 30. Հողը . . . է . 31. Թռւղթը . . . է . 32.
 Գրիչները . . . են . 33. Ասուխն . . . է . 34. Թանի ամաննե-
 րը . . . են :

ՀՐԱՀԱՆԳ ՃԿԱ.

Ճաշակի վերաբերեալ ածական մ'աւելցնել :

1. Խաղողը . . . է . 2. Գարեջուրը . . . է . 3. Կարաղը . . .
 է . 4. Կաշին . . . է . 5. Կաթը . . . է . 6. Մեղրը . . . է . 7.
 Մեղրամումը . . . է . 8. Լեմոնը . . . է . 9. Քացախը . . . է .
 10. Այս կերակուրները . . . են . 11. Այս ըմպելինները . . . են
 . 12. Աղին համը . . . է . 13. Դեղճին համը . . . է . 14. Եր-
 կաթը . . . է . 15. Գինին . . . է . 16. Կաւիճը . . . է . 17.
 Լեղին . . . է . 18. Աղամանդը . . . է :

ՀՐԱՀԱՆԳ ՃԿԲ.

Յետագայ անուանց խրաքանչիւրին այս ածականներեն
 ընտրութեամբ դիր : — Հաւատարիմ, ստանակ, աղտեղի, յա-
 մառ, կեղծաւոր, քաջ, աշխատասէր, կոռուպրար, ոխակալ,
 գործասէր, զօրաւոր, ապերախտ, նեղ, լուակաց, արիւնար-
 բու, քարեբարոյ :

1. Շունը . . . է . 2. Կատուն . . . է . 3. Եղը . . . է . 4.
 Մեղուն . . . է . 5. Զին . . . է . 6. Ցուլը . . . է . 7. Կապի-
 կը . . . է . 8. Խողը . . . է . 9. Մրջիւնը . . . է . 10. Աղ-
 ուեսը . . . է . 11. Գառնուկը . . . է . 12. Այս տղան . . . է
 . 13. Աքաղաղը . . . է . 14. Սարդը . . . է :

ՀՐԱՀԱՆԳ ձԿԳ.

Յետագայ խօսից մէջ , ածականները քարոյական կամ մըտառքական յատկութիւններ կը նշանակեն , աղակերտը զանոնք պիտի կցէ այնպիսի անուանց որոնք նիւրական կամ Ֆիզիքական յատկութիւններ նշանակել կարենան . — Օրինակ . քաղցր բնութիւն , քաղցր պտուղ :

1. Քաղցր բնութիւն , քաղցր . . . 2. Պակաս արդիւնք , սլակաս . . . 3. Ծանր պատասխանատուութիւն , ծանր . . . 4. Կոյր վստահութիւն , կոյր . . . 5. Մեծ սիրտ , մեծ . . . 6. Ծաղկեալ տէրութիւն , ծաղկեալ . . . 7. Երկար տանջանք , երկար . . . 8. Կարճ խելք , կարճ . . . 9. Ընդարձակ գաղափար , ընդարձակ . . . 10. Խոր ատելութիւն , խոր . . . 11. Մարած եռանդ , մարած . . . 12. Բորբոքած եռանդ , բորբոքած . . .

ՀՐԱՀԱՆԳ ձԿԳ.

Հրահանգին վերջը փնտուե այն ածականները որք խօսքը կ'ամբողջացնեն :

1. Աշակերտը . . . ըլլալու է : 2. Տետրակները . . . ըլլալու են : 3. Ժամացուցի մը գնացքը . . . ըլլալու է : 4. Զինուորները . . . ըլլալու են : 5. Բնակարանները ստէպ . . . ըլլալու են : 6. Ալբելու փայտը . . . ըլլալու է : 7. Կարիճը . . . ըլլալու է : 8. Բարեկամները . . . ըլլալու են : 9. Դաշտը . . . ըլլալու չ'է : 10. Ածելին . . . ըլլալու չ'է : 11. Ծառաները . . . ըլլալու չ'են :


Հանդարտ — մաքուր — քաջ — կանոնաւոր — չոր — մաքրըուած — խոհեմ — քարոտ — բութ — անհաւատարիմ — հաւատարիմ :

ՀՐԱՀԱՆԳ ձԿԵ:

Յետագայ ածականաց հակառակները գտիր :

Աշխատասէր — թեթեւ — գեղեցիկ — ուրախ — սուտ — ու-

շաղիր — տկար — խնայող — հնաղանդ — խոհեմ — նման — մեծ
— նիհար — անօթի — քաղաքավար — լուսաւոր — թանձր —
ծեր — կամաւոր — թթու — կծու — անհամ — յանցաւոր — չար —
զգայուն — վայրենի — խրոխտ — զթած — մաքուր — զուար-
ճալի :



ԴԱՍ ԻՒ

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ԱԾԱԿԱՆԻ

Մեծ տուն մը զէ ուզածս այլ հանգիստ տուն մը : — իւր
ոսկեզօծ գիրքը կորսնցուց, բայց պատկերազարդ գիրքը դեռ
քովն է :

Աստուած արդար մարդը կը սիրէ՛ ոչ քէ հարուստ մարդը :

ԿԱՆՈՆ

42. Ածականն առանց է կամ է՞ ի կրնայ անուան մը
քով դրուիլ նորա նշանակութիւնն որոշելու համար, բայց
այն ատեն նախադասութիւն չը կազմեր :

Ճերմակ թուղթ, կարմիք վարդ, և այլն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԿԶ.

Ըսէ ինձ քէ ի՞նչ ածականներով յաջորդ անուանց միտքը
սահմանառուած է :

1. Անօթութիւնն աշխատասէր մարդուն դրնէն կը նայի, բայց
չը համարձակիր ներս մտնել . 2. Ազնիւ տղան երախտադէտ է
իւր ծնողաց . 3. Զուրն եւ ապակին թափանցիկ մարմիններ են .
4. Ամենէն պատուական զիրն ընթեռնլի գիրն է . 5. Ընձուղտին

առջեւի ոտք ետեւիններէն աւելի երկայն են . 6. Թոչունք իւրենց բոյները խիտ ծառոց մէջ կը շինեն . 7. Ճերմակ լեզակը հազուազիւտ է . 8. Կարմիր ձիւն տեսնուած է բարձր լերանց վրայ . 9. Շատ բանջարեղէններ անհամ են բայց եփուելով համեղ կ'ըլլան . 10. Ճերմակ դինին եւ կարմիր դինին իրարմէ շատ տարբեր են . 11. Կանաչ վարդը հազուազիւտ է՝ բայց աղուոր չէ . 12. Բարձր լեռները միշտ ձիւնով ծածկուած են . 13. Խոր հովիտները խոնաւ կ'ըլլան . 14. Լեռնաբնակ աղգերն աղատասէր են :

Օր. Դաս . — Մարդ բառին միտքը սահմանաւորուած է՝ աշխատասէր ածականով . եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ ձկի .

Ըսէ ինձ ի՞նչ տարբերութիւն կայ յաջորդ բառից մեջ՝ ածականով մը կամ առանց ածականի գրծածուելով :

1. Թուղթ՝ ճերմակ թուղթ . 2. Խնձոր՝ թթու խնձոր . 3. Վարդ՝ կարմիր եւ հոտաւէտ վարդ . 4. Տուն՝ մեծ , քարաշէն եւ գեղեցիկ տուն . 5. Մարդ՝ խելացի , առաքինի մարդ . 6. Զգեստ՝ կապոյտ զգեստ . 7. Մելան՝ սեւ մելան . 8. Գիրք՝ բարոյական գիրք . 9. Մազ՝ դեղին մազ . 10. Շուն՝ հաւատարիմ շուն . 11. Սալոր՝ կծու սալոր . 12. Աղջիկ՝ աշխատասէր , ծոյլ եւ հընազանդ աղջիկ . 13. Ծով՝ մեծ ծով . 14. Ծառ՝ պտղատու , վայրենի եւ պղտիկ ծառ . 15. Թուզուն՝ երգող թոչուն . 16. Զմեռ՝ սաստիկ ձմեռ . 17. Ոչխար՝ սեւ , ճերմակ ոչխար :

Օր. Դաս . — Թուղթ ըսելով ամէն տեսակ թուղթ կարելի է հասկնալ . ճերմակ թուղթ ըսելով՝ թղթի մասնաւոր տեսակ մը կիմացուի :

ՀՐԱՀԱՆԳ ձկի .

Հետեւեալ բառերէ ածականներ կազմէ :

1. Հայր . մայր . թագաւոր . ծառայ . իշխան . գիշեր . լոյս .

հրեշտակ . երիտասարդ՝ դժոխք . տուն . մարդ . դաշտ . նաւ . ծով . փայտ . բամբակ . բոց . լոյս . չարաթ . օր . աւազ . աղտ . մոլութիւն . պղինձ :

2. Սիրտ . աղեղ . նիղակ . ձեռք . փետուր . կտուց . սմբակ . ծառ . ճիւղ . տերեւ . արեւ . շաքար . մոխիր . աղ . իւղ . մուր . համ . թեւ . տարի . ձի . լեզու . զէնք . օրէնք . գիր :

Ծանօթ . — Առաջին խմբի բառերը պարզ ածականներ են՝ տեսակ տեսակ իմաստներով՝ ինչպէս հայրական, հայրենի, մայրենի, վարժապետական եւայլն : Երկրորդ խմբի բառերը՝ ստացուած մը ցուցնող ածականներ են . Սրտոտ, աղեղնաւոր, նիղակաւոր . ձկնաւէտ . փետրաւոր . եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԿԹ.

Յաջորդ անուանց նշանակութիւնն ածականներով սանմանառք եւ յետոյ վերադրով մ'ամբողջ նախադասութիւն կազմե :

Գարուն, ամառ, ձմեռ, օր, ամիս, կենդանի, ջութակ, հով, տաքութիւն, կիթառ, զգեստ, քնար, սեղան, քիթ, բերան, զովութիւն, ձիւն, իրիկուն, երազ, առաւօտ, քուն, դիշեր, ընծայ, հանդէս, պարտէզ, տունկ, գայլ, վազր, սոխակ, թիթեռնիկ :

Օր. Դաս . — Անձրեւոտ դարուն . — Շատ տաք ամառ ելն :

ՀՐԱՀԱՆԳ ՃՀ.

Հետեւեալ նախադասութեանց մէջ ո՞ր ածականները կը սահմանառեն եւ որո՞նք վերադիր են :

1. Ծայրայեղ կլիմայից տակ ապրող ազգերը կամ տգեղ են կամ տձեւ . 2. Կան աշխարհներ ուր շուները համր են . 3. Բարոյական գիրք մը թանկազին գոհար մ'է . 4. Առաքինի մարդը յարգելի եւ պատուելի է . 5. Աշխատութիւնը բնաւ վտանգաւոր չէ . 6. Աստուած ամենակարող է . 7. Եղջերուն եւ նապաստակը վախկոտ եւ արագընթաց են . 8. Թարմ խոտը կանաչ է . 9. Ա-

մէն մարդ մահկանացու է . 10. Առողջ հողի առողջ մարմոյ մէջ
կը բնակի . 11. Այս փայտը կարծր է . 12. Մեր վարժապետը
հմուտ եւ փորձ է :

ՀՐԱՀԱՆԳ ՃՀԱ.

Հետեւեալ բառերով շինուած ի՞նչ բառեր զիտես :

Սառ . ցող . վարդ . արմատ . բոյս . կաղմ . կոխք . ընտանիք .
— տուն . դաշտ . ծով . պտուղ . — ծեր . — վախ . — լեռ . —
անձրեւ . — փառք . — վաճառք . — գիրք . — այդի . — բաղդ
— հարուստ :

Օր. Դաս . — Սառ , սառոյց , սառիլ : Այս պարզ բառերը
տղան կրնայ գտնել . բայց դասատուն կրնայ՝ ըստ կարողութեան
աշակերտաց , աւելի եւս յառաջ տանիլ հրահանդն եւ ուսուցա-
նել ուրիշ բարդեր ալ , — Սառնասոյր , սառնամնիք , եւայն :
Տղան տեմնելու է թէ մի եւ նոյն բառն ինչպէս տարբեր ձեւեր
առնլով մասնաւոր նշանակութիւններ կ'ստանայ : Այս կերպ հը-
րահանդներն երթալով շատցնելու է միւս հրահանդաց ալ յար-
մարցնելով :

ՀՐԱՀԱՆԳ ՃՀՅ.

Հետեւեալ բառից վրայ զտած յատկարիններդ ածական-
ներով բացատրէ եւ յետոյ անօնցմով նախադասուրիններ
կազմէ :

Պատմութիւն , դանձ , հայր , մայր , տղայ , եղբայր , կերա-
կոտք , նկարիչ , ուսանող , նօտար , խելք , բժիշկ , նաւալվար ,
ճարտարապետ , անտառ , դիւզացի , խաղ , սնդուս , մացառ ,
թագուհի , գինի , տեար , դասատու , դարան , օրացոյց :

Օր. Դաս . — Ախորժելի , ձանձրացուցիչ , երկայն , կարճ եւլն
Պատմութիւն : — Այս ախորժելի պատմութիւնը շատ կարճ է :

ՀՐԱՀԱՆԳ. ՃՀԳ.

Խօսքեր շինէ յետագայ ածականներն իբր ստորոգելի գործածելով . Օրին . Գաւաթը թափանցիկ է :

Թափանցիկ . — Թունաւոր . — Անուշ . — Մթին . — Թանձր . — Ճերմակ . — Լուսաւոր . — Կանաչ . — Դեղին . — Հեղուկ . — Հաստատ . — Հնադանդ . — Քաջասիրտ . — Աշխոյժ . — Օդտակար . — Վնասակար . — Հոտաւէտ . — Լեղի . — Կարօտ . — Համբերատար :

ՀՐԱՀԱՆԳ. ՃՀԳ.

Հետեւեալ բառերը բառզիրքը բնտուելով՝ կարգաւ օրինակէ իրենց նշանակուրեամբ եւ անկէ շինուած բոլոր բառերը :

Զեռն . — Բարի . — Աստուած . — Զար . — Զայն . — Զի . — Գինի . — Ուկի . — Հողի . — Երգ . — Աղքատ . — Կեղծ . — Պարզ . — Մարդ . — Մեղր . — Ցած . — Ողի . — Երկինք . — Ալիք . — Անձ :

ՀՐԱՀԱՆԳ. ՃՀԵ.

Յետագայ ածականաց յարմար տէրբայիններ գտիր եւ նախադասուրին մը կազմէ :

Մոխրագոյն . — Ճերմակ . — Փայլուն . — Չոր . — Խոհեմ . — Գիշակեր . — Թանձր . — Թարմ . — Երկայն . — Վախկոտ . — Հազուագիւտ . — Խոր . — Կլոր . — Անինայ . — Շոյտ . — Փրփրալից . — Պարապորդ — Ուշադիր :

ՀՐԱՀԱՆԳ. ՃՀԶ.

Յաջորդ նախադասուրեանց յարմար տէրբայիններ գտիր :

• • • 1. Կօշիկ մ'է : — • • • 2. Կարասիներ են : — • • •

3. Արհեստաւոր մ'է : — . . . 4. Ըմպելի մ'է : — . . . 5. Զեռուն մ'է : — . . . 6. Երկոտանի են : — . . . 7. Ընդեղէն մ'է : — . . . 8. Կերպաս մ'է : — . . . 9. Այրելի են : — . . . 10. Խոտ մ'է : — . . . 11. Առաքինութիւն մ'է : — . . . 12. Անշարժ են : — . . . 13. Քաղաք մ'է : — . . . 14. Գետ մ'է : — . . . 15. ԶԻՆքեր են : — . . . 16. Անշարժ են : — . . . 17. Գիւղ մ'է : — . . . 18. Հճիներ են : — . . . 19. Մետաղ մ'է :
-

ՀՐԱՀԱՆԳ ՃՀԵ.

Հետեւեալ նրանանգաց մեջ ածականը զոյականի փոխէ, եւ փոխադարձաբար զոյականն ածականի :

1. Սիրելի եղբայր • 2. Ճշմարիտ յաւիտենականութիւն • 3. Խնամող մայր • 4. Մարդկային հիւրընկալութիւն • 5. Խաղաղասէր մանուկ • 6. Մթին դիշեր • 7. Անմեղ տղայ • 8. Վրէժինզիր կրակ • 9. Ծեր հայր • 10. Բարեբար իշխան • 11. Քայլսային թթւուտ • 12. Մտաւոր արարչութիւն • 13. Ամբարիշտ հեթանոս • 14. Շնորհալի եղբայր • 15. Կապուտ երկնք • 16. Դիւտական չարութիւն • 17. Գեղեցիկ հրաշք • 18. Անդութ բռնաւոր • 19. Հայկական պատիւ • 20. Աղնիւ կին • 21. Աղջկական փափկութիւն :

Օր. Դաս. — Եղբայրական սէր • — Յաւիտենական ճշմարտութիւն, եւն :

ՀՐԱՀԱՆԳ ՃՀԵ.

Յաջորդ ստորոգելեաց յարմար տերբայիներ զտիր :

- Կերպակուր • — Զորքոտանի • — Պտուղ • — Ծառ • — Թոռւփ • Մռժակ • — Զուկ • — Նախարար • — Ազգական • — Արհեստաւոր • — Մետաղ • — Գետ • — Թերութիւն • — Քաղաք :
-

ՀՐԱՀԱՆԳ ՃՀԹ.

Ցցուր թէ յետագայ բառերով նշանակուած մարդիկ՝ կենդանիք կամ առարկայք, ո՞ւր կը գտնուին: Օրին . Զի՞ն ախոռը կը դասուի :

Զի . — Հնձող . — Տակառ . — Կաղնի . — Պատկեր . — Բանտարկեալ . — Հնոց . — Ակոայ . — Խորան . — Ասող . — Տապահագիր . — Մարգարիտ . — Նաւակ . — Լուրիս . — Պարզունակ . — Բուստ . — Գանձանակ . — Նաւաստի . — Մազ . — Գայլ . — Հօտ . — Մհաաղ . — Եմք , — Կառք :

ՀՐԱՀԱՆԳ ՃԶ.

Ըսէ թէ ս՞վ կամ ի՞նչ կը գտնուի յաջորդ տեղուանք :

Պարտէզ . — Զօրանոց . — Կաղամար . — Գրատուն . — Փողոց . — Հիւանդանոց . — Մարմին . — Եկեղեցի . — Աշտանակ . — Երկին . — Գերեզմանատուն . — Հրացան . — Գաւաթ . — Հօտ . — Պառւղ . — Օդ . — Բոյն . — Երակ . — Ախոռ . — Անկողին . — Բանտ . — Տակառ :

ԴԱՍ ԻԸ.

Բ Ա Յ

Տղան կ'արթնայ՝ իսւլոյ՝ իւ ծէժողէ՝ իւ անոնէ եւ իւ ժնանայ :

Մարդ իւ ձնոնէ՝ կ'արթէ եւ իւ ժնոնէ :

Աշակերտը կ'աշխարէ՝ իւ սոճէ՝ իւ իրնունէ՝ իւ ժնանայ եւ, իրեն անձին, ծնողացն եւ, ազգին պարծանք կ'ըլւոյ :

Կ Ա Ն Ո Ւ

45. Այն բառն որ առարկայի մը վրայ բան մը կը հաստատէ կամ կ'ըսէ բայ կ'ըսուի :

Այսպէս երբ կըսեմ. Օդը յուրաք. և բայ է՝ վասն զի կը հաստատէ օդին վերայ ըսուած բան մը. Տղան կը պտտի՝ կը պտտի բայ է վասն զի տղուն մէկ ըրած գործը կը հաստատէ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԶԱ.

Որո՞նք են յաջորդ նախադասութեանց մէջ բայերը :

1. Եղները, կովերն, այծերն ոտքեր ունին. 2. Զարմացը Տը-
րոյց պատերազմին մէջ շատ մը քաջութիւններ ընկլէն վերջը
մեռաւ. 3. Աստուած կը ներէ զզջացողներուն. 4. Հրէայք Յի-
սուսը խաչեցին. 5. Երկիրս Աստուծոյ բարութեամբ լի է. 6. Վայ
այն սրտին որ ուրիշներուն դժբաղդութեանց վրայ կուրախա-
նայ :

Օր. Դաս . — Ունին բայ է՝ որովհետեւ ենթակային վրայ բան
մը կը հաստատէ, եւն :

ՀՐԱՀԱՆԳ ՃԶԲ.

Ի՞նչ բայեր կրնաս յարմարցնել յետագայ բառից :

Աստղ, անտառ, գաղան, գաշտ, երկինք, լեռ, ծով, հող,
մարդ, նաւ, ջուր, տիղմ, տոհմ, տունկ, ցամաք, քաղաք, օդ,
աղուէս, այծ, առիւծ, գայլ, ոչխար, սամոյր, գեղձ, ընկոյզ,
արծաթ, երկաթ, լեզու, անասուններ, գունդ, գետ, զգեստ,
աղամանդ, աղիւս, կաշի, կաւիճ, ճախարակ, նեարդ, պրու,
փղոսկը, փունջ, մաղաղաթ :

Օր. Դաս . — Աստղը կը փայլի — Անտառը մէծ ծառեր ունի.
եւմիլն :

ՀՐԱՀԱՆԳ ձԶԳ.

Ինչ ենրականեր կրնաս յարմարցնել յէտազայ բառից :
— Մթին է . — Ունիմ . — Ըրէ' . — Ակուաներուն կը վնասէ .
— Անուշահոտ է . — Խսահակ որդին պիտի զոհէր , յանկարծ —
մ'երեւցաւ , եւ արգիլեց զայն . Արդարին — Աստուծոյ համելի է .
— Կը խրատէ իւր որդին . — Երկիրը կը զործեն . — Արքահամն
օրհնեց . — Կը պտղտին . — Աստուծոյ նմա երեւցաւ . — Կ'աշ-
խատի եւ շատ բան կը շահի . — Պիտի խաւարի :

Օր . Դաս . Երկինք մթին է . — Ես եղբայր մ'ունիմ :

ՀՐԱՀԱՆԳ ձԶԳ.

Երկու սեանց բաժնե բայերն ու անունները :

1. Տղան կը խաղայ . 2. Աշակերտը կը կարդայ . 3. Օձը կը սո-
ղայ . 4. Փոշին կը թոփ . 5. Շունը կը հաչէ . 6. Գրիգոր կը վազէ .
7. Ճամացոյցը կը զարնէ . 8. Առուակը կը զեղու . 9. Տէրը կը
հրամայէ . 10. Աքաղաղը կ'երգէ . 11. Մըջիւնը կ'աշխատի . 12.
Հաւերը կ'ածեն . 13. Որեւը կը տաքցնէ . 14. Հովը կը փչէ . 15.
Կովը կը բառաշէ . 16. Գառնուկը կը մայէ . 17. Թոշունք կը ճըռ-
ուողեն . 18. Եշը կը զուայ . 19. Ծաղիկը կը ծլի . 20. Տերեւք կը
զեղնին . 21. Փայտը կ'այրի :

ՀՐԱՀԱՆԳ ձԶԵ.

Կետերուն տեղ պատղաճ բայ մը դնել :

1. Զին կրնայ . . . 2. Լեւոն կ'ուզէ . . . 3. Խաղամոլը չը-
յագիր . . . է 4. Հացաղործը զիտէ . . . 5. Միշտ պէտք է
. . . 6. Այս տղան շատ կը սիրէ . . . 7. Ծոյլ աշակերտը չը-
կրնար . . . 8. Հովիւները կ'սկսին իրենց կրակը . . . 9. Համ-
րերը կը ջանան . . . 10. Շատ կը սիրեմ . . . 11. Պէտք է . . .
12. Ծնողաց . . . 13. Զար մարդիկ չեն կրնար . . . 14. Բժիշկ-
ները չեն կրցած այս հիւանդը . . . 15. Պղտիկ քոյրս չուզեր

• 46. Այս ուսումնական մարդը պարտաւորուած է իւր գրքերը • . . :

ՀՐԱՀԱՆԳ ՃԶԶ.

Յետազայ բայերը զոյգ զոյգ խոնարհէ , առաջինն անկատար , Երկրորդը սահմանական ներկայ դնելով . Օր . Քիչ մը առաջ կուլայի՝ հիմայ կ'երգեմ :

Լալ քիչ մը առաջ , հիմա երգել ,
Ժամանակաւ խաղալ , հիմա աշխատիլ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԶԷ.

Յետազայ բայերը զոյգ զոյգ խոնարհէ , առաջինն անկատար անցեալ , Երկրորդը սահմանական ներկայ դնելով :

Անցեալ տարի քաղաքը բնակիլ , գիւղ վերադառնալու առիթը չփախցնել :

Իւր պակասութիւնները վերջապէս ծանչնալ , իւր յանցանքները խոստովանիլ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԶԸ.

Յետազայ բայերը զոյգ զոյգ խոնարհէ , առաջինը սահմանական անկատար , Երկրորդն ապառնի :

Քալուածքը փութացնել , եւ զայն ծանրացնել :

Իւր պարտքը կատարել , վարձատրութիւն ընդունիլ :

ՀՐԱՀԱՆԳ ՃԶԹ.

Անկատարի վրայ խոնարհէ :

Պարտքը լմացնել — խրասներ ընդունիլ — Ծառայութիւն մը մատուցանել — Ծանր յանցանք մը գործել — Անհամբերութեամբ սպասել — Խրաւունք պահանջել :

ՀՐԱՀԱՆԳ ՃՂ.

կետերուն տեղի ի ստորեւ գրուած բառերէն յարմար եղողը դիր :

Վիմագիրը . . . — Մշակը . . . — Դերձակը . . . — Դահիճը . . . — Թասատուն . . . — Ատամնաբոյժը . . . — Պատկերհանը . . . — Հիւսնը . . . — Խմաստունը . . . — Գիտունը . . . — Արուեստաւորը . . . — Պայտառը . . . — Տէրը . . . — Գերին . . . — Զիաւորը . . . — Ոստայնանկը . . . — Սափրիչը . . . — Երկաթագործը . . .

Կը գերծէ . — Կը փորազրէ . — Կը դարբնէ . — Կը հերկէ . — Կը հիւսէ . — Կը ձեւէ . — Կը յարդէ . — Կը գլխատէ . Կը հնազանդի . — Կուսուցանէ . — Կը հրամայէ . — Կը տաշէ . — Կը լուսնէ . — Կը նկարէ . — Կը գործէ . — Կը ծեփէ . — Կը հնարէ . — Կը խորհի :

ՀՐԱՀԱՆԳ ՃՂԱ.

Յետագայ կետերուն տեղ խօսքին գլուխը դրուած բային անկատարը դիր :

1. Ջրոյ մէջ եփուած բանջարեղէնք իմ կերակուրս (կազմել)
 2. (Շարունակել) օդին գէշութեան չնայելով ճամբորդութիւնս
 3. (Լսել) հեռուէն զանգակի մը ձայնը
 4. (Անուանել) ընկերներս զիս իրենց առաջնորդ
 5. (Հընազանդիլ) դու անցեալ տարի այս տարուընէ աւելի
 6. (Կատարել) ելթէ միշտ իւր պարտքն այսչափ յաճախս պիտի չպատժուէր :
 7. (Նշմարել) արդէն մեք հեռուն տուներ
 8. (Ընդունիլ) Դուք խիստ յանդիմանութիւններ
-

ՀՐԱՀԱՆԳ ՃՂԲ.

Կետերուն տեղ խօսքին գլուխը գտնուած բային կատարեալ անցեալը դիր :

(Ելլել) Սուլթան Համիտ 1875 դահը . . . 2. (Գտնել) մեր
բարեկամք իրենց տունը . . . 3. (Երթալ) երէկ ես զիւղ . . .
4. (Համիլ) նա մեր բացակայ եղած ատենը . . . — 5. (Տեռել)
հանդէսը շատ երկար . . . 6. (Մտիկ ընել) այս երիտասարդն
իւր հօր եւ իւր մօր խրամները յարգանօք . . . 7. — (Վե-
րադառնուալ) երէկ ժամը տասն եւ մէկին նա տուն . . . 8. —
(Մնալ) ամենուն պէս դու ալ ապշած . . . 9. — (Զարնել) մօ-
տակայ ժամացոյցն ութ . . . մեր տուն մտած ժամանակը :

ՀԲԱՀԱՆԳ ՃՂԳ.

Եզակի երեք դիմաց վրայ խոնարհէ :

Պէտքերս հոգալու համար անպէտ քաններ ծախեցի :

Ժամանակաւ շատ մտածեցի եւ քիչ խօսեցայ :

Կատարեալ անցեալին ամեն դիմաց վրայ խոնարհէ :

Կէս օրին գուրս ելլել, ժամը իննին վերադառնալ :

Առուակ մը նշմարել, դոյլը լեցնել եւ հեռանալ :

ՀԲԱՀԱՆԳ ՃՂԴ.

Յետագայ բայերը կատարեալ անցեալ դիր :

Ծրար մը տարի . — Փայտ մը զետեղեցի . — Կասկածներ ու-
նեցայ . — Որադս վառեցի :

ՀԲԱՀԱՆԳ ՃՂԵ.

Եզակի եւ յոգնակի ամեն դեմքով խոնարհէ :

Երէկ դաշտն աշխատեցայ, այսօր կը հանդէխմ, վաղը պիտի
պկսիմ աշխատիլ :

Խոնարհի նաեւ .

Անցեալ ձմեռ ծնողքէս հեռացայ, նոցա կամաց հակառակ .
այսօր կ'ամաչեմ իրենց խրատուց հետեւած չ'ըլլալուս, եւ այ-
սուհետեւ միշտ իրենց պիտի հնազանդիմ :

ՀՐԱՀԱՆԳ ՃՂՋ.

Կետերուն տեղ խօսքին զլուխը դրուած բայց դիր յարմար ժամանական :

1. (կարգագրել) Գործերս . . . որպէս զի հանդստանամ : (Յարգել) Բարեկամիս վիշտը . . . 2. (կորսնցնել) Մինաս իւր ժամացոյցը . . . անցեալ օր : 3. (ընտրել) Պարկեշտ և կրթեալ մարդիկը քեզ բարեկամ . . . 4. (Դողամ) Երբ այն սոսկալի արկածը միտքս դայ . . . 5. (Գանուիլ) Այն ժամանակ կատարեալ տպիտութեան մէջ . . . 6. (Թողուլ) . . . որ դուրս եւս , եթէ դասերդ զիսնաս : 7. (Խաբել) Բնաւ մէկը . . . չեմ :
-

ՀՐԱՀԱՆԳ ՃՂՋ.

Բատ առաջնոյն զրկ :

1. (Հասնիլ) Ամէն բան լմիցած էր արդէն , երբ առւն . . . 2. (Պահել) Եթէ ձեր ամէն զործոց մէջ ճշդութիւն . . . զիւրաւ կը յառաջազիմէիք : 3. (Պաշտպանել) Պէտք է որ քու նմանեացդ իրաւունքը . . . 4. (Երթալ) Կը ցաւիմ որ դժգոհ . . . 5. (Զսպել) Չես ուզեր քու բարկութիւնդ . . . 6. (Յաղթուիլ) Եթէ դիսնայիք որքան մարդիկ . . . իւր խորամանկ լեզուէն :
-

ՀՐԱՀԱՆԳ ՃՂՋ.

Բայերը հրամայական դիր :

1. (Հրաման տալ) Տէր . . . որ դուրս ելեմ : 2. (Մտիկ ընել) Դասատուիդ խօսքերն ուշաղրութեամբ . . . 3. (Պատրաստուիլ) . . . որ դուրս ելենք : 4. (կարգագրել) Տետրականերդ աւելի խնամով . . . 5. (կասկածիլ) Մէկուն վրայ մի . . . առանց դայն լաւ մը ճանչնալու : 6. (կարեկցիլ) Բարեկամք՝ . . . ուրիշին դժբախտութեան , եթէ կուզեմք որ մեր նմանները զմեզ յարգեն : 7. (Պաշտպանել) . . . ինքզինքնիս զմեզ յա-

Նիրաւի զրապարտողներուն դէմ : 8. (ի դերեւ հանել) այնքան քաղցր յոյսերս մի . . . :

ՀՐԱՀԱՆԳ ՃՂԹ.

Յետագայ բայերը զոյգ զոյգ խոնարհէ , առաջինն անկատար , երկրորդը հրամայական դնելով :

Օրնկ . Քիչ մ'առաջ կը խաղայի : — Քիչ մ'առաջ կը խաղայիր . աշխատէ հիմա : — Քիչ մ'առաջ կը խաղար : — Քիչ մ'առաջ կը խաղայինք . աշխատինք հիմա : — Քիչ մ'առաջ կը խաղայինք : — Քիչ մ'առաջ կը խաղային : — Այսպէս խոնարհէ :

1. Ժամանակաւ ուժնիլ , հիմա պատասխանել : 2. Անցեալը թեթեւամտութեամբ դատել , հիմա իրերն աւելի լաւ հասկնալ : Ծնողաց կամաց հնագանդիլ , եւ հիմա վարձատրութիւն ստանալ :

ՀՐԱՀԱՆԳ Մ.

Յոգնակի եւ եզակի ամեն դիմքով խոնարհէ :

1. Եթէ կանուխ ճամբայ ելլեմ , աւելի չուտ պիտի համնիմ : 2. Աշխատութիւնս պիտի լմնցնեմ : 3. Անմիջապէս գործի պիտի սկսիմ : 4. Քերականութիւնն աւելի լաւ պիտի հասկնայի , եթէ դասերս ազէկ մտիկ ըրած ըլլայի :

ՀՐԱՀԱՆԳ ՄԱ.

• Յետագայ բայերը ստորադասական ըրէ :

1. Կրօնքը կը հրամայէ որ մեր թշնամեաց (ներել) . . . : 2. Քոյրս կուզէ որ իրեն (ուզեկցիլ) : 3. Իրաւունք է որ մեր բարեկամները մեք (ընտրել) : 4. Քաղաքավախութիւնը կը պահանջէ որ խօսողը չ' . . . (ընդհատել) : Կը ցաւիմ որ պարապ պտտե-

լու սովորութիւննիդ . . . (չուղղել) : 6. Հարկ է որ դժուարութիւնները . . . (դիւրացնել) : 7. Պէտք է որ արդարութեան ճամբուն . . . (հետեւիլ) :

ՀԲԱՀԱՆԳ ՄԲ.


Կետերուն տեղ խօսքին գլուխը դրուած բային ստորադասականը դիր :

1. (Փոխել) կուզեն որ այս ամբարտաւան վարքս . . . : 2. (Մատուցանել) Կը փափաքիս որ քեզ աւելի ծառայութիւն . . . : 3. (Ցուցնել) Պէտք է որ այս տղայք աւելի պարկեշտութիւն . . . : 4. (Ծնդունիլ) Կը բաղձամք որ երկինք միշտ մեր ուխտերն . . . : 5. (Ծախել) Այս երիտասարդը չ'ուզեր որ ծնողքն իրենց կալուածները . . . : 6. (Մոլորիլ) Կը վախնամ որ ճամբորդն անճանաչ ճամբաններուն մէջ չ' . . . :
-

ՀԲԱՀԱՆԳ ՄԳ.

Հետեւեալ հրահանգին մէջ ստորագծեալ բառից տեղ՝ համանշան կամ մերձաւոր իմաստ մ'ունեցող բառ մը դնել :

Ժամանակաւ Եւրոպայի մէկ կողմն որոշեցին ճնճղուկները սատկեցնել : Որսը սկսաւ ամէն տեղ . ճնճղուկի մը զլուխը բերողին մրցանակ մը կուտային . ուստի քիչ ատենէն այն երկրին մէջ ծիս մը չմնաց : « Ի՞նչ հարստութիւն պիտի ստանանք , կըսէն շինականք . մեր ցորեններն անվնաս պիտի մնան : Ճընճղուկներուն սպառածը մեր քով շան պիտի մնայ » : Նոցա հաշիւը սխալ էր . յաջորդ տարին բիւրաւոր մրջիւններ , միջատներ , թթուրներ եւ մարախներ՝ զոր առաջ ճնճղուկները կ'ուտեին եկան ծառերն աւրշտկեցին : Դեղը չարիքէն վնասակար եղաւ . ամէն մեկ թոշուն՝ ափի մը ցորեն միայն կ'սպառէր . այս խառնագինթոր ճճինները հնաց երեք քառորդը վատնեցին : Այն ատեն ցաւեցան ճնճղուկներուն կոտրածին վրայ եւ հարկադրեռեցան մեծ ծախքով ուրիշ երկիրներէ բերել տալ այս սիրուն եւ օգտակար թոշունը :



ԴԱՍ ԻԹ.

ՏԵՍԱԿԻՑ ԲԱՑԻ

Զինորը քաջութեամբ ներառեցաւ զազանին վրայ եւ սուխնը նորա բորին մէջ հղէց :

Լուսինն արեւուն լուսովը կը գոյւէ , նորա համար արեւուն չափ լուսաւոր չէ :

ԿԱՆՈՆ

44. Բայը կամ վերադիր է կամ վերադիրը կազմելու կը ծառայէ : — Երբոր կ'ըսեմ . « Եղբայրս կը կարդայ » կը կարդայ բառն ամբողջ վերադիրը կը կազմէ , վասն զի գործ մը կը ցուցնէ և կը հաստատէ զայն : — Բայց երբ կըսեմ . « Աստուած ողորմած է » , և միայն կը հաստատէ և ուրիշ բան չը ցուցնէր . ողորմած բառն ալ հաստատուած բանը կը յայտնէ , ուստի այս երկու բառք միատեղ վերադիրը կը կազմեն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԴ.

Հետեւեալ նախադասութեանց որո՞ւն մէջ միայն բայը վերադիր է եւ որո՞ւն մէջ ուրիշ բառով միացած այս պաշտօնը կը կատարէ :

1. Ծոյլ աշակերտն ատելի է • 2. Վրէժխնդրութիւնը ցած սըրտերու ախտն է . 3. Առաքինի անձինք իրենց ըրած բարերարութիւններն աւագի վրայ կը գրեն . 4. Լայն գուռը կորստեան կ'առաջնորդէ . 5. Արծիւը թոշնոց թազաւորն է . 6. Ծերերը կասկածու են . 7. Հաւատքը կը փրկէ զմարդ . 8. Ամէն իշխանութիւն սիրելի եւ յարգելի է երբ արդարութեան վրայ հիմնած է .

9. Խարեբայ է այն մարդն որ զմեղ կը չողոքորթէ . 10. Քաղցրութիւնն , արդարութիւնն եւ համբերութիւնն ամենէն դէդ բնաւորութիւնները կը նուածեն . 11. Թշուառին համար կեանքն երկար է . 12. Աղատ ես եթէ սիրուր մաքուր է :

ՀՐԱՀԱՆԳ ՄԵ.

Հետեւեալ բայերով նախադասութիւն կազմէ :

Ճաշել , խաղալ , աշխատիլ , յարգել , քնանալ , մնանիլ , տեսնել , անցնիլ , լսել , խօսիլ , հարցնել , պատասխանել , ապրիլ , բնակիլ , բաղադրել , չողոքորթել , սիրել , փախչիլ , պոռալ , ուտել , թափել , գողալ , գանգատիլ , պատուել , աղտոտել , բանալ , գոցել , հոտոտել , նմանեցնել , վաղել , նստիլ , հանգչիլ , զրել , կարդալ , քնանալ :

Օր . Դաս . Մարդ կը քալէ , կը խաղայ , կաշխատի :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶ.

Հետեւեալ բառից քոյլ բայեր յարմարցուր նախադասութիւններ կազմելու համար :

Արծիւ , աքաղաղ , ճանապարհորդ , օրինակ , փառք , լոյս , պատերազմ , կրօնք , արդարութիւն , մեղք , ծառայ , անօթութիւն , ջրհան , թնդանօթ , սեխ , եղջիւր , ցորեն , կայծակ , օձ , մահ , կեանք , կաւիճ , ամպ , հաց , ոչխար :

Օր . Դաս . — Արծիւը բարձրէն կը թռչի , եւ այլն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԵ.

Սերտել յետազայ խօսքերն որոց մէջ կը գտնուին շատ մը անասնոց սովորական գործերը :

1. Չուկը կը լողայ : 2. Թիթեռնիկը կը թռչափ : 3. Արտոյաը

կը թեւածէ : 4. Որդը կը սողայ : 5. Գորտը կ'ոստնու : 6. Օձը
կը խայթէ : 7. Կովը կը քայլէ : 8. Զայլամը կ'ընդուաննու : 9. Զին
կը սուրայ : 10. Ակիւռը կը մագլցի : 11. Խղունջը կը ձգտի : 12.
Գառնուկը կը ճարակի : 13. Արծիւը կը հոլաթեւէ : 14. Աղաւնին
կը թռչի : 15. Բազէն կը խոյանայ :

Յետսագայ խօսից մեջ դիմաւոր բային տեղ բայանունը
դիր :

1. Հովը կը փչէ . 2. Փոթորիկը կ'որոտայ . 3. Ճրազը կը լու-
սաւորէ . 4. Գնաւակը կը գլտորի . 5. Աիրտը կը բարախէ . 6. Ա-
րիւնը կը հոսի . 7. Աւեակը կը մրմնջէ . 8. Առուակը կը կարկաջէ .
9. Անիւը կը ճռնչէ :

ԴԱՍ Լ.

Դ Ե Ր Բ Ա Յ

Համարը կը յափշտակէր :
Վերջեն էկա՞ յուրերը շատ աղեկ եին :
Ըստի՞ւ խօսք շատ պարզ է :
Շաշը գործ չէ աղ :

Կ Ա Ն Ո Ւ

45. Դերբայն բային պէս գործ մը կը ցուցնէ՝ բայց
դային չը հաստատեր :

Եկող տղան . հասած լուրերը . տրուելիք վարձքը :

46. Զայն ամբողջ նախադասութիւն մ'ընելու համար
քովը վերադիր մ'աւելցնել հարկ կ'ըլլայ :

Եկող տղան բարեկամն է . հասած լուրերը լաւ են .
տրուելիք վարձքը շատ մեծ է :

ՀՐԱՀԱՆԳ ՄԲ.

Յաջորդ բառից քով նախ մեյմեկ դերբայ յարմարցուր, ապա ամբողջացուր զայն վերադրով մը :

Առաքինութիւն, տաճար, գովնատ, Աւետարան, հովահար, հարսանիք, փղոսկր, բանջարեղէն, փոթորիկ, ագռաւ, ժամացոյց, կողմ, փողոց, մթութիւն, յաջողութիւն, առաւօտ, ժամ, վայրկեան, ոտանաւոր, բանաստեղծութիւն, առակ, տրտմութիւն, աշխատութիւն, մարդ, լոյս, ջուր, լոյս, ընտանիք :

Օր. Դաս . — Ճանչցուած առաքինութիւնը . — Կործանեալ տաճարը :

ՀՐԱՀԱՆԳ ՄԹ.

Յաջորդ խօսից մեջ որո՞նք են դերբայք եւ որո՞նք բայերը :

1. Եկող տղան բարեկամս է . 2. Գացող աղջիկը շատ խելացի է . 3. Պղտիկ պատճառներ երբեմն մեծ արդիւնք առաջ կը բերեն . 4. Հասունցած պտուղը կուտուին . 5. Մնացած ցորենն աղքատաց բաժնեց . 6. Յիսուս խաչին վրայ եօթը խօսք արտասանեց . 7. Ոյս մարդը ճամբան զացած ատենը գետնէն քսակ մը ոսկի գտաւ, քսակը չբացած գնաց տէրը գտաւ եւ նմա յանձնեց . իւր այս ըրածին համար մեծ պատիւ ստացաւ . 8. Այս տունն իմ բարեկամին է . 9. Ոյս տղան շատ գրքեր ունի . 10. Հինցած կօշիկներդ նետէ :

Օր. Դաս . — Եկող դերբայ է, իսկ ե բայ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԺ.

Յաջորդ խօսից մեջ դերբայն բայի փոխեցէք այնպէս որ նախադասութիւն մ'ըլլայ :

Մոնչող առիւծը : Տուած դրամս : **Համնելիք լուրը :** Տպուած զիրքը : **Մեռած կատուն :** Կերուած հացը : **Հնազանդող որդին :**

Հինգած կօչիկը : Դասերուն չաշխատող աշակերտը , լմնցած գործը : Լոյս տուող արեգակը , հպարտացող անձը , շողիացած ջուրը : Վաղող նապաստակը : Թափուած մելանը : Կրթուած տրդան : Պատուած գիրքը : Ճանապարհորդող փիղը : Լացող մանուկը :

Օր. Դաս . — Առիւծը որ կը մռնչէ , զրամը որ տուի , եւլն :

ՀՅԱՀԱՆԳ ՄԺԱ.

Այս նրանանցիս բայերը դերբայի փոխէ :

1. Տղան կուգայ . 2. Լոյսը կը փայլի . 3. Ճրազը կը մարի . 4. Ծաղիկները կը թոռմին . 5. Մարդ կը մեռնի . 6. Օձը կը խածնէ . 7. Մեղուն կը խայթէ . 8. Տղան կ'աշխատի . 9. Աղուէսը հաւերը կը գողնայ . 10. Հովիւն իւր հօտը կը պահպանէ . 11. Ասոււած անիծեց կայէնը . 12. Սրեգակն իւր առանցքին վրայ կը դառնայ . 13. Գայլերն ոչխարները կը բղքտէն . 14. Գարնան տաքութիւնը ծառերն եւ ծաղիկները կաճեցնէ . 15. Մանուկը քնացաւ . 16. Վահան աղէկ կը կարդայ . 17. Այս թոչունը շատ անուշ կերգէ . 18. Քոյրս կը խօսի :

Օր. Դաս . — Եկող տղան . — Փայլող լոյսը :

ՀՅԱՀԱՆԳ ՄԺԲ.

Կետերուն տեղ խօսքին գլուխը գտնուող բային անցեալ դերբայն դիր :

(Հնազանդիլ) տղայ մը որ իւր ծնողաց . . . է երջանիկ ապագայ մ'ունի . 2. (Կատաղիլ) . . . ծովը կսկսի հանդարտիլ . 3. (Գրեն) Զեր . . . նամակը ամսոյս 48 ին ստացայ . 4. (Մօտիլ) լերանց . . . ժամանակս գիշերը վրայ հասաւ . 5. (Պայթիլ) Շանթը . . . ատեն իրեն հետ կը տանի մահն ու կրակը . 6. Այս տղայք աղէկ . . . (աշխատիլ) են , պէտք է վարձատրուին :

ՀՐԱՀԱՆԳ ՄՃԳ.

Վետերուն տեղ ըստ պատշաճի դերբայ պէտք է դնել :

1. Դամակ աղէկ (սերտել) . . . համար պէտք է շատ աշխատիլ . 2. (Ոռնել) այդ զրգերը . . . համար բաւական ստակ պէտք է , եւ իմ համաստ քսակս չներէր որ այդպիսի ծախքեր ընեմ . 3. (Շահիլ) իւր սիրտը . . . ջանացի բայց այնպիսի խիստ պատասխաններ տոււաւ որ ալ չհամարձակեցայ խօսիլ . 4. (Մեկնել) . . . համար ձեր քրոջ վերադարձին կ'սպասեմ . 5. (Երթալ) Պատել . . . համար ձեր հրամանին կ'սպասեն . 6. (Վերադառնալ) Ծիծեռնակը գարնան կ'սպասէ մեր երկիրը . . . համար . 7. (Հասկնալ) իւր բնութիւնը . . . համար պէտք է շատ ատեն իրեն հետ կենակցիլ :

ՀՐԱՀԱՆԳ ՄՃԳ.

Ու եւ այ վերջաւորութեանց տեղ՝ նախադասութեան կարգը փոխելով յարաբերական դերանունը դիր :

1. Կաթիլ կաթիլ եկող ջուրը՝ ժայռը կը փորէ . իւր աշխատութեան մէջ յարատեւողը հրաշալի բաներ կը գործէ . 2. Զճանչցած մարդուգ հետ մի մտերմանար . 3. Քեզի արուած կրթութիւնն այնպիսի հարստութիւնն մ'է զոր բաղը ձեռքէդ չկրնար խլել . 4. Քեզ առաջարկած խնդիրս կարեւոր է . լաւ միտ դիր . 5. Մեր պակասութիւնները մեզի յայտնողները մեր ձշմարիտ բարեկամներն են . զմեզ շողոքորդողներէն աւելի յարգելու եմք զնոսա . 6. Շունը թէպէտ սուր հոտառութիւնն մ'ունի՝ բայց անտարեր կ'երեւի մեզի ազդող շատ մը անուշահոտութեանց . 7. Դրան առջեւ խոնուած բազմութիւնն անհամբեր կ'ըսպասէք . 8. Հնաղանդիլ չգիտցողը հրամայել չզիտեր . 9. Հայրենիքը չսիրողը՝ կասկածելի մարդ է . 10. Երկնքի վրայ փայլող աստղերը մեզի կը պատմին Աստուծոյ փառքը . 11. Գիտութիւնն երկրիս խորէն կը հանէ հոն պահուած դանձերը . 12. Քրիստոնէութիւնն ընդունող առաջին թագաւորն Աբդար է :

Օր. Դաս . — Զուրը՝ որ կաթիլ կաթիլ կ'եյնայ՝ ժայռը կը փորէ . այն որ իւր աշխատութեան մէջ կը յարատեւէ հրաշալի բաներ կը դործէ :

ՀՅԱՀԱՆԳ ՄԺԵ.

Կետերուն տեղ յարաբերական դերանունը դիր պէտք եղած հոլովով , եւ յետոյ դերբայի փոխէ :

1. Լաւ ճանչցիր այն մարդը . . . կը վստահիս . 2. Կարեկից եղիր այն մարդուն . . . միտքը խանգարեալ է . 3. Ով երջանիկ է , այն . . . մնուած հաճոյից միայն հետամուտ է . թէ այն . . . իւր անձին՝ իւր ազգին եւ մարդկութեան օգտակար բաներու կը պարապի . 3. Այնպիսի ունակութիւններ ունիս . . . ետ կենալու ես . 5. Այնպիսի ունակութիւններ ունի . . . ուղղելու ես . . . 6. Այս է այն մեծ մարդը . . . ինքովնքը հայրենեաց զոհեց . 7. Այս է այն մեծ մարդը . . . արձան մը կանգնեցին . 8. Այս է այն մեծ մարդը . . . թշնամիք կը սարսափէին . 9. Այս է այն մեծ մարդը . . . զէմ ապերախտ գտնուեցանք . 10. Ատելի են այն իշխանք . . . ժողովուրդը կը վախնայ . 11. Յարդէ զանոնք . . . երախտապարտ ես . 12. Այն խաղալիկները . . . կըզրօնուա՝ պարտքերդ մոռցնելու չեն քեզ :

Օր. Դաս . — Լաւ ճանչցիր այն մարդն որուն կը վստահիս , լաւ ճանչցիր վստահած մարդդ :

ԴԱՍ ԼԱ.

Մ Ա Կ Բ Ա Յ

Անվախ պատերազմելով՝ քաջութեամբ մեռաւ :

Աս դասը շատ գեղեցիկ է :

Շուտ վազողը չէ՝ այլ ուշադրութեամբ վազողն որ նպատակին կը հասնի

Շատ սիրով կարդացի այս լուրը :

Կ Ա Ն Ո Ւ

67. Բայի մը՝ ածականի մը՝ դերբայի կամ ուրիշ մակրայի մը միտքը սահմանաւորելու համար գործածուածքառը մակրայ կ'ըսուի :

Այսպէս կրնամք ըսել քալել. բայց երբ ուզեմք ինչպէս քալելը յայտնել, կ'ըսեմք. շուտ քալել, կամաց քալել, կաղն ի կադ քալել, շիտակ քալել, ծուռ քալել, ևլն. այս բառերը շուտ, կամաց, կաղն ի կադ, շիտակ, ծուռ, մակրայ կըսուին, վասն զի քալել բային միտքը կը սահմանաւորեն. կրնամք ըսել մեծ տուն, բայց մեծութեան վրայ աւելի որոշ գաղափար մը տալու համար կ'ըսեմք ոչ այնչափ մեծ տուն, շատ մեծ տուն, բառական մեծ տուն ևլն. — Վազող ձին՝ արագ վազող ձին, շատ վազող ձին ևլն — շատ արագ վազող ձին, ևլն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԺԶ.

Ցցուր ինձ յաջորդ խօսից մեջ մակրայներն եւ նոցա ո՞ր բառերը սահմանաւորելը :

1. Քոյրդ շատ անառակ է . 2. Գաղղիացին աւելի հակառակորդն է Անգլիացւոյն քան թէ թշնամին . 3. Փութանսակի կատարէ հրահանգներդ . 4. Նապաստակը շատ արագընթաց է . 5. Եղնիկը շատ բարակ սրուճքներ ունի եւ կարի թեթեւ է . 6. Բաւական աշխատեցար , ալ քիչ մը յոգնութիւն առ . 7. Զերդուոն այնչափ փոքր է որ շատ մարդ չկրնար ներս մտնել . 8. Աւելի լաւ է քաջութեամբ մեռնիլ քան թէ վատութեամբ ապրիլ :

Օր. Դաս . — Շատ մակրայ՝ անառակ ածականին վրայ դըրաւած :

ՀՐԱՀԱՆԳ ՄԺԵ.

Հետեւեալ մակրայներն ո՞ր բառից կրնաս յարմարցնել . — անոնցմով մելմեկ նախադասութիւն կազմէ :

Շտապաւ , հոս , հոն , ներս , դուրս , բոլորափքը , մէջտեղը , առջեւը , հիմայ , այն ատեն , այսօր , վաղը , ետքը , առաջ , երբեմն , միշտ , հանապաղ , յոյժ , շատ , չափաղանց , ստէպ , քիչ անգամ , յաճախ , ինչո՞ւ , ի՞նչպէս , ո՞րչափ , քանի՞ , յանկարծ , դրեթէ , հաղիւ , այսուհետեւ , բաւական , մօտ , իսկոյն , այնչափ , ուշ , կանուխ , վաղն , այսօր , ասդիս , անդին , ուշ , քովքը , աւելի , երէկ , հեռու , լաւագոյն :

Օր. Դաս . — Շտապան խօսիլ . եղբայրդ շտապաւ կը խօսէր :

ՀՐԱՀԱՆԳ ՄԺԸ.

Հետեւեալ բառից մելմեկ մակրայ առեցո՞ր :

1. Աշխարհաղբութիւնը — օդտակար գիտութիւն մ'է . 2. Աշխարհս գունդ մ'է որ արեգական շուրջը կը գառնայ — . 3. Կրիայն — կը քալէ . 4. Աղուէսը գայլէն — խորամանկ է . 5. Զարերը — կը պատուին . 6. Ես — դպրոց պիտի երթամ . 7. — կը

բաւէ հերիք տանջես զիս , 8. — Խաղի պարապելն օդտակար բան չէ . 9. Զրի մէջի որդերն — պղտիկ են որ խոչորացուցով անդամ հաղիւ կը տեսնուին . 3. Այս դինուորը — վիրաւորուեցաւ :

Օր. Դաս . — Աշխարհագրութիւնը մեծապէս օդտակար զիտութիւն մ'է :

ՀՐԱՀԱՆԴ ՄԺԹ.

Լուծէ նետեսեալ խօսքերն իւրաքանչիւր բառին ի՞նչ ըլլալն ըսելով :

1. Հանդարտ խիղճն եւ գոհ միտքն երջանիկ կընեն զմարդ .
2. Առաքինութիւնը միտքը կաղնուացնէ , բայց մոլութիւնը զայն կաղտեղէ . 3. Ցղայութեան ժամանակի աշխատասիրութիւնը՝ վերջէն ուսանելիք բաները կը զիւրացնէ . 4. Ծուլութեան պըտուղներն են ամօթ եւ նախատինք . 5. Շատ աւելի ազգուէ օրինակը քան թէ խօսքը . 6. Յարատեւ աշխատութիւնն ամէն դժուարութեանց կը յաղթէ . 7. Ուրիշն յաջողութեան վրայ ուրախացողը՝ նորա աղէկութեան մասնակից եղած կըլլայ . 8. Տիրութիւնը սիրաը կը սղմէ . զուարթութիւնը կընդլայնէ զայն . 9. Մի՛ լար խնդացողին առջեւ . 10. Մի՛ խնդար լացողին առջեւ . 11. Ուրախամիտ մարդը գայցած տեղը կը լուսաւորէ . 12. Կըռուարար մարդն ամէն ճակատները կը մթնցնէ . 13. Զար մարդու աշխատութիւնն ապարդիւն կը մնայ որով շարունակութիւն չունի . 14. Նախանձն ու ցասկուութիւնը կեանքը կը կարճեցնեն . 15. Լաւ է կարճ ու լի կեանք , քան թէ երկայն եւ դատարկ . 16. Առանց առաքինութեան չկայ բարեկամութիւն . 17. Ամէն խոստման մի հաւտար :



ՅԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Հին ատեն մազաղարի գրայ կը գրեին , հիմայ՝ թղթի վրայ : Լուսինն երկրիս բուցրէն կը դառնայ : Երբոր պարտիզիդ մէջ պտըտիս՝ դիտէ բնուքեան աղաորութիւնները :

Հօրը տղան հանգիստ եւ ապահով է :

ԿԱՆՈՆ

48. Երկու բառի իրարու հետ ունեցած յարաբերութիւնը ցուցնող բառը յետադրութիւն կը կոչուի :

Այսպէս եթէ խօսիլ և մարդ բառից մէջ ինչ տեսակ յարաբերութիւն ըլլալը յայտնել ուզեմք , կրնամք մեր մտածութեան համեմատ ըսել .

Խօսիլ մարդու մը հետ

»	»	»	դեմ
»	»	»	վրայ
»	»	»	համար
»	»	»	քով
»	»	»	առջեն
»	մարդէ	»	նեռու

Այս բառերը , հետ , դեմ , վրայ , համար , քով , առջեն , և նոր խօսիլ և մարդ բառերուն մէջ եղած յարաբերութիւնները կը ցուցնեն՝ կըսուին յետադրութիւն :

ՀԲԱՀԱՆԳ ՄԻ.

Գծիկներու տեղ յաջորդ նախադասութեանց մէջ յարմար դատած յետադրութիւններդ դիր :

1. Շամիրամ՝ Արայի — պատերազմ՝ ըրաւ : 2. Սանդուխտ
Թաղէսսի — նահատակուեցաւ : 2. Հովիւներն ոչխարաց — նշան
կը գնեն : 4. Արտաւազգ Ա. իւր հօրն աշխոյժ ողին չը կրցաւ
փայլեցնել իւր — : 5. Այս երկու դասատուք իրարու — կը
խօսին միշտ : 6. Օդը ցուրտ ըլլալուն — մայրս արգիլեց ինձ որ
դուրս ելլեմ : 7. Այս դիւցազնը իւր հայրենիքէն — աքսորի —
մեռաւ : 8. Տիգրան իւր դասատուին — անգամ անառակութիւն
կընէ : 9. Մարիամ մեր ծառայութեան — մոտած էր : 10. Մօրս
եւ քրոջս — պարտելու դացինք այսօր : 11. Դասերս աղէկ սով-
րելուս — պարզեւ պիտի ընդունիմ դասատուներէս :

Օր. Դաս . — Շամիրամ՝ Արայի դեմ պատերազմ՝ ըրաւ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԻԱ.(¹)

Յետագայ յետադրութեամբ խօսքեր կազմէ :

Հետ , վրայ , դէմ , համար , քով , առջեւ , հեռու , մէջ , դէպ
ի , ետեւ , ներքեւ , ձեռօք , մօտ , մէջէն , վրայէն , քովէն , չորս
դին , բոլորտիքը , վարը , վերը , բաց ի , տակ , տեղը , չափ , հա-
կառակ , համեմատ , ահա , առանց , փոխանակ , իրբեւ , ի զուր ,
ի վեր , ի վար , ի բուն , ի գլուխ , անդին , ասդին , յառաջ ,
դաղտուկ :

Օր. Դաս . — Դրացւոյն հետ դացին :

ՀՐԱՀԱՆԳ ՄԻԲ.

Լուծէ՝ յետագայ խօսքերն եւ ըսէ՝ բառից ի՞նչ տեսակ ը-
լալն :

1. Կատարեալ մարդուն վրայ կը զարմանամք . 2. Անուշ մար-
դք կը սիրեմք : 3. Կրնաս առանց ուղելուդ վրամդ եւ աստիճա-

(¹) Այս հրահանգը եւս՝ նախընթաց հնարմանց պէս գրաւոր
պիտի ըլլան , բայց լաւ է միշտ դասարանին մէջ վարժեցնել ար-
դայքն որ առժաման խօսքեր կազմեն :

նըդ կորսնցնել . բայց կամօքդ միայն պատիւդ կը կորսնցնես :
 4. Միայն անմեղ եւ առողջարար զրօսանք վնատուելու եմք : 5.
 Դժուարութիւն չկայ որուն չկարևնամք յաղթել մեր ջանիւք :
 6. Խօսքերը նետեր են . ուշադրութեամբ արձկէ զնոսա որ մէ-
 կը չը վիրաւորես : 7. Ժամանակին մտածելով շատ չարեաց ա-
 ռաջը կ'առնուի : 8. Այն բարեկամը յարգի է որ մեր ձախողու-
 թեան ատեն զմեզ կը աիշէ : 9. Միտքդ ամբարէ գիտութիւնն եւ
 զայն խնամով մշակէ :

ԴԱՍ ԼԳ.

Շ Ա. Պ. Կ Ա. Պ

Որչափ կուզեի ու հայրս ապրեր :
 Ըսէ՛ ինձ , հասա՞ւ նամակը թէ չհասա :
 Գառն ու զայլը մեկտեղ խօսքի բոնուեցան :
 Եղբայրդ էա՞մ քոյրդ պետք է հոս զայ :

Կ Ա. Ն Ո Ն

49. Երկու նոյն տեսակ բառ կամ երկու նախադա-
 սութիւն իրարու կապող բառը շաղկապ (1) կը կոչուի :
 Պետրոս եւ Յովհաննէս կերթային .
 Խնդրէ իրաւունքդ բայց ճանչցիր պարտքդ .
 Եւ բառը՝ որ Պետրոս և Յովհաննէս բառերն իրարու
 կը կապէ , բայց բառը՝ որ խնդրէ և ճանչցիր բայերն իրա-
 րու կը կապէ՝ շաղկապ կըսուին :

(1) Երբոր մակրայ՝ շաղկապ՝ եւլն ի պէս տղայոց ականջին
 բոլորովին օտար բարդ բառեր պատահին՝ դասատուք զայնս բա-
 ցատրելու են աշակերտաց ուրոյն առանձին , ոչ միայն քերա-
 կանական նշանակութիւնն՝ այլ նաև նոցա կազմութիւնն ու
 պատճառը :

ՀՐԱՀԱՆԳ ՄԻԳ.

Որո՞նք են նետեսեալ խօսից մեջ շաղկապը եւ ի՞նչ բառեր իրարու կը միացնեն :

1. Սաթինիկ եւ Մարիամ հնազանդ են իրենց ծնողաց եւ դասատուաց . 2. Գրիգոր շատ աշխատասէր է բայց անկիրթ եւ անառակ է . 3. Այս մարդը շատ պատուաւոր եւ քաղաքակիրթ անձ մ'է . սակայն իւր որդիքը հակառակն են . 4. Աստուած Սողոմոր քաղաքներն այրեց , վասն զի նոցա բնակիչք անըզգամ էին , բայց միայն Պովտն աղատեցաւ . 5. Եթէ այս ընթացքդ շարունակես , դեռ շատ փորձանքներ պիտի դան դըլուխտ :

Օր. Դաս . — և շաղկապ Սաթինիկ եւ Մարիամ բառերն իրարու կը միացնէ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԻԳ.

Նետեսեալ շաղկապները գործածէ՝ մեյմեկ նախադասութեան մեջ :

Եւ կա՞տ ու , նաեւ , այլ եւս , միանդամայն , ալ , կամ , կամ թէ , թէ , եթէ , թէ որ , որ , նէ , բայց , սակայն , եւ սակայն , բայց եւ այնպէս , սակայն եւ այնպէս , ի վերայ այսր ամենայնի , այսու ամենայնիւ , թէ եւ , թէպէտ եւ , ոչ թէ , չէ թէ , ոչ միայն , չէ որ , ոչ ապաքէն , այլ , հապա , քան թէ , մանաւանդ , առաւել եւս , մանաւանդ որ , մանաւանդ թէ , իսկ , եւ ոչ , եւ ոչ իսկ , անդամ , նոյն իսկ , արդ , ուստի , իսկ արդ , ուրեմն , որպէս զի , վասն զի , որովհետեւ , հապա , ապա թէ ոչ , ոչ թէ , թող թէ , իբր թէ , գրեթէ , այսինքն , գոնէ , գէթ , զորօրինակ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԻԵ.

Գծիկներու տեղ պէտք եղած շաղկապը դիր յաջորդ նախադասութեանց մեջ :

1. Գոհարինէ շատ բարի աղջիկ մ'է — նորա քոյրը չար — նախանձոտ բնութիւն մ'ունի. 2. — Եւգինէ իւր դասուց աշխատի՝ — պիտի վարձատրուի . — 3. Ողորմած եղիբ . . . բարի, . . . Աստուած զքեզ վարձատրէ . 4. Շուշան — վարդուհի միատեղ աղօթք կ'ընէին Աստուծոյ իրենց ծնողաց համար — Աստուած ալ նոյցա աղօթքը լսեց :

Օր. Դաս . — Գոհարիկը շատ բարի աղջիկ մ'է , բայց նորա քոյրը չար եւ նախանձոտ է . եւլն :




ԴԱՍ ԼՂ.

ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Ո՞ն ինչո՞ւ չգիտցայ նորա արժեքը :
Մէ՞ղք որ չկրցար զինքը կանչել :
Երանի՞ թէ ստոյգ ըլլար այս լուրը :
Ո՞ւր եր թէ բարեկամս հասներ :

ԿԱՅՈՒԹ

50. Այն բառն որ մեր հոգւոյն մէկ կիրքը կամ յուղմունքը կը բացատրէ , Զայնարկութիւն կը կոչուի :
Ինչպէս երբոր դարմանամ՝ կ'ըսեմ . ո՞հ ինչ ազնիւ տղայ . երբոր մատոս վիրաւորի՝ կ'ըսեմ . վայ մատոս ցաւեցաք . երբոր մեղքնամ կ'ըսեմ . ահ ինչ ողորմելի վիճակ ելն . ո՞ն , վայ , ա՞ն , որ մէյմէկ դդացմունք կը յայտնեն , Զայնարկութիւն կը կոչուին :



ՀՐԱՀԱՆԳ ՄԻԶ.

Որո՞նք են յաջորդ խօսից մէջնայնարկութիւնք եւ ի՞նչ ըգդացմունք ցուցնելու համար դրուած են :

Ա՞ն որչափ ուրախ եմ զքեզ տեսնելուս :

Աղէս սենեակն ո՞վ կայ :

Վաշ ո՞րչափ ալ սուտ կը զրուցէ :

Ե՞ն ուրեմն ալ շատ գիտուն են :

Ա՞ն խեղճը յուսահատ վիճակի մէջ է :

ՀՐԱՀԱՆԳ ՄԻԷ.

Յաջորդ ձայնարկութիւնները մէյմեկ խօսքի մէջ գործածէ :

Ուրախութիւն եւ ցաւ ցուցնող . — ո՞հ, ա՞ն — Յաւ . — վահ, ափսոս, աւազ, մեղք . — Բաղձանք . — Երանիթէ, ուր էր թէ, Աստուած տայ . — Երանելու . — Երանի . — Անիծելու . — վայ, անէծք . — Կանչելու . — ո՛, ո՞վ, այ, է՛, հէ՛ . — Յուցնելու . — ահա, ահաւասիկ . — Զարմանք . — բարէ՛, զարմանք . — Խրախուսելու . — աղէ՛, օ՞ն, ապրիս, աղնիւ, կեցցէ՛ . — Ողջունելու . — բարեւ, ողջոյն ձեզ . — Զզուելու . — ո՞հ, գարշելի՛, պի՛զծ, է՞ն . — Բարկութիւն — այ, հայ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԻԾ.

Յաջորդ խօսից մէջ գծիկներու տեղ ձայնարկութիւն մը յարմարցուք :

Բոլոր բաղմութիւնը գոչեց — .

— Այս տունկը ո՞րչափ գէշ կը հոտի .

— Լոէ՛, հայրդ կը քնանայ .

— Բարի լոյս, պարոն ագռաւ .

— Զարմանալի տեսարան :

Հետեւեալ տեսակեն բառեր պարունակող նախադասութիւններ գրե՛ :

Ա. Անուն մը , բայ մը , մակրայ մը .

Բ. Անուն մը , բայ մը , գերբայ մը .

Գ. Անուն մը , բայ մը ու շաղկապով մը կապուած երկու ածական .

Դ. Վերադրի պէս դործածուած ածական մը .

Ե. Յետազրութիւն մ'ու դերբայ մը .

Զ. Սահմանաւորելու համար դործածուած ածական մը , եւ վերադրին մէջ անուն մը .

Է. Սահմանաւորելու համար դործածուած ածական մը :

ՀՐԱՀԱՆԳ ՄԻ .

Ածականներեն ոմանք **աբբա+էն**՝ այսինքն մեր զգայարանօք ըմբռնելի յատկուրիւններ կը ցուցընեն , ինչպէս բարձր տուն , կապուած ծաղիկ եւլն . իսկ այլք **նէր+էն**՝ յատկուրիւն մը կը ցուցընեն՝ այսինքն մտօք ըմբռնելի յատկուրիւն մը ինչպէս իմաստուն տղայ , խոնեմ մարդ : — Աշակերտը նշանակէ թէ յաջորդ նախադասուրեանց մէջ ո՞ր ածականք արտաքին եւ որոնք ներքին յատկուրիւն մը կը ցուցընեն :

1. Երկչոս աղայ . — 2. Արփասիրտ աղջիկ . — 3. Գեղեցիկ ծառ . — 4. Վարդագոյն շրթունք . — 5. Կրակոս աչք . — 6. Փոքր սկնդիկ . — 7. Անհեղեղ փիղ . — 8. Նենդաւոր աղուէս . — 9. Եզն պարարակ . — 10. Նիհար կին . — 11. Հիւանդոս ծերունի . — 12. Կթուտեալ ծնկեր . — 13. Վախկոս ճագար . — 14. Արագընթաց նապաստակ . — 15. Հուժկու բեռնակիր . — 16. Յատակ ալիք . — 17. Ճարտար նկարիչ . — 18. Զուածեւ սեղան . — 19. Ճերմակ առագաստ . — 20. Բոցագոյն կարկենան . — 21. Մշակեալ արտ . — 22. Խոնեմ զօրավար . — 23. Հմուտ դաստու . — 24. Տգեղ կերպարանք . — 25. Խոպան դաշտ . — 26. Փիրուն կաւիճ :
-

ՀՐԱՀԱՆԳ ՄԼԱ.

Աշակերտը հնգական բառ ցուցնե հետեւեալ հարցմանց քով :
 Զեռքով աշխատող դործաւորք .
 Մտքով աշխատող դործաւորք .
 Զորքոտանի կենդանիք (ընտանի) .
 » » (վայրենի) .
 Թոռչունք .
 Միջատք .

ՀՐԱՀԱՆԳ ՄԼԲ.

Ստորագծեալ բառերը յաջորդ սահմանաց քով առելցուր՝
 ըստ պատշաճի :

Աղահ . — Վատ . — Անդոյն . — Հնազանդ . — Հոսանուտ .
 — Դիւրահաւատ . — Տժդոյն . — Թշուառ . — Աղքատ . —
 Կուրք :

• • • Որ ապրուստ չունի .
 • • • Որուն գոյնը նետած է .
 • • • Որ թոյլ է , կը վաղէ • (օդ , ջուր) .
 • • • Որ դոյն չունի .
 • • • Որ ստակը չափազանց կը սիրէ .
 • • • Որ շատ բարակ է .
 • • • Որ բաղդ չունի , խեղձ է .
 • • • Որ շուտով կը հաւտայ .
 • • • Որ խօսք մտիկ կ'ընէ .
 • • • Որ քաջութիւն չունի :
 Որ դաս . — Աղքատն այն է որ ապրուստ չունի :

ՀՐԱՀԱՆԳ ՄԼԳ.

Հետեւեալ սահմանները կարդալով՝ քովը զրել պէտք եղած
 բառը :

1. Տարիքն առած մարդ • — 2. Տարիքն առած կին • — 3. Այն որ պատկերներ կը շինէ • — 4. Տեղ մը որ ծառ, ծաղիկ ու բանջարեղին կը տնկեն • — 5. Չորս ոտքով կենդանի մը՝ որուն կոնակին վրայ մէկ կամ երկու կրոգ կայ եւ տաք երկիրները կը բնակի • — 6. Չորքոտանի կենդանի մը որ հովուին հետ հօտը կը պահպանէ • — 7. Չորքոտանի կենդանի մը որ ոչխարները կը յափշտակէ • — 8. Խարդախ չորքոտանի մը որ հաւերը կը խեղդէ • — 9. Մարդուն այն մասն ուսկից արիւնն կըսկսի շրջան ընել • — 10. Մարմնոյն այն մասն ուր կերակուրները կը լուծծուին • — 11. Այն մասն որ հոտ կառնու • — 12. Կարասի մը որոյ վրայ կը ճաշեն • — 13. Սովորեցնելու պաշտօն ունեցող անձ • — 14. Դպրոց գացող տղայ • — 15. Կենաց սկիզբը • — 16. Կենաց վախճանը • — 17. Կերակուր եփելու սենեակ • — 18. Աստղ մը որ ցերեկը կը փայլի • — 19. Աստղ մը որ դիշերը կը լուսաւորէ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԼՒ.

Հետեւեալ բառից սահմանը տալ :

Աչք • — Ականջ • — Եղունգ • — Գրիչ • — Մելան • — Քերականութիւն • — Աշխարհագրութիւն • — Պատմութիւն • — Հիւսն • — Ատաղձագործ • — Որմնադիր • — Տուն • — Որջ • — Բոյն • — Արմատ • — Խնձոր :

Մ Ա Ս Ն Բ.

ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄՈՒԻՆՔ , ՅԱՏԿՈՒԹԻՒԻՆՔ
ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒԻՆՔ ԲՈՌԻՑ

ԴԱՍ ԼԵ.

ԱՆՈՒԻՆ ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ

51. Այն անունն որ մեկ անհատի միայն յատկացեալ է՝ յա-
ռագ անուն կը կոչուի :

52. Այն անունն որ դաս մ'առարկայից ամեն մեկուն կը բր-
նայ յարմարի հաստիք անուն կը կոչուի :

Ինչպէս երբ որ ըսեմ՝ լեռ՝ որ եւ իցե լերան համար կրնայ
ըսուիլ , ուստի լեռ հասարակ անուն է . բայց երբ Արարատ ը-
սեմ , Արարատ յատուկ անուն է , վասն զի ամեն լեռ Արարատ
չ'ըսուիր :

Յատուկ անուանք կրնան մեկ քանի անձի կամ տեղոյ ա!
յարմարի , բայց ոչ ամեն անձանց կամ տեղեաց , այսպէս քա-
նի մը տղայ կրնայ Արսէն կոչուիլ , բայց ոչ ամեն տղայ : (1)

ՀԲԱՀԱՆԳ ՄԼԵ.

Գծին տեղ յատուկ անուն մը եւ կէտերուն տեղ հասարակ
անուն մը դիր :

1. — դաշտին մէջ մնծ • • • մ'եղաւ — • 2. — քաջ • • •
մըն էր • 3. — կարմիր ծովուն • • • բաժնեց — • 4. Միայն —
նահապետ ազատեցաւ • • • 5. — նահապետ տամներ-
կու • • • ունէր : — 6. — առաջին մարդն եղաւ : 7. Եւա

(1) Յատուկ անուանք միշտ դլիւագրով մը կսկսին :

առաջին . . . եղաւ : 8. Աստուած վեց օրուան մէջ ստեղծեց . . . : 9 . . . անմահ է : 10 . . . մահկանացու է :

Օր. Դաս. — Զիրաւ գաշտին մէջ մեծ պատերազմ մ'եղաւ , եւն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԼԶ.

Յետագայ անուանց ո՞րը հասարակ է, ո՞րը յատուկ է :

1. Յովսէփ Եղիպտոսի զլխաւոր իշխանն եղաւ . 2. Աստուած Յրհեղեղով պատժեց բոլոր մարդիկը , միայն Նոյ իւր ընտանեօք ազատեցաւ . 3. Մեր ազգը Թորգոմեան կ'ըսուի . 4. Նեղոս գետն Եղիպտոսի հարսաւութեան ազրիւրն է . 5. Արա իւր դեղեցկութեան համար թշնամի ունեցաւ Շամիրամը . 6. Արքահամ Աստուծոյ խօսքին հաւատարիմ մնալու համար իւր որդին խահակը դոհել յանձն առաւ . 7. Մեսրովք Հայոց զրերը դտաւ . 8. Տրդատ Հոփիսիմէն սպաննել տուաւ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԼՀ.

Գտիր ինձ տասն անուն կենդանեաց . — Տասը ծառի եւ ծաղկի . — Տասը զանազան գրծեաց . — Տասը յատուկ անուն մարդու . — Տասը յատուկ անուն կնոշ . — Տասն անուն պատմութեան մէջէն . — Տասն անուն Արքազան պատմութենէն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԼԸ.

Յետագայ բառերով խօսքեր շինէ :

Մարմին . — Գիրք . — Գլուխ . — Ծով . — Երկինք . — Լոյս . — Արեւ . — Ծառ . — Ծաղիկ . — Պտուղ . — Պարտէղ . — Դաշտ . — Լեռ . — Տուն . — Սուն . — Սինեակ . — Գրասեղան . — Լու-

սին . — Երկիր . — Մարդ . — Հոգի . — Գետ . — Վտակ . — Կրակ . — Քիթ . — Բժիշկ . — Բանաստեղծ . — Աշակերտ . — Որսորդ . — Երկրագործ . — Աղաճ . — Բարեկամ . — Թշնամի . — Աստղ . — Անձրեւ . — Զուր . — Գինի . — Անտառ . — Ճանձ . — Ժամ . — Պատկ .

ՀՐԱՀԱՆԳ ՄԼԹ.

Յետազայ ածականաց յարմար գոյական գոփիր :

Յամառ — Թունաւոր — Զրոտ — Մածուցիկ — Պտղաբեր — Խեռ — Կակուղ — Թափանցիկ — Փայլուն — Զգական — Այրելի — Արուած — Սրածայր — Վատառողջ — Յարգելի — Դեղին — Անուշահոտ — Ախտաւոր — Դժուարամարս — Ապիտակ — Կարծր : —

ՀՐԱՀԱՆԳ ՄԽ.

Յետսգայ անուանց մեկնել ածական դիր :

Աղամանդ — Կապիկ — Խոտ — Մանկութիւն — Վազր — Ծերութիւն — Մեղր — Մածուն — Կրիայ — Անեեակ — Ծովի ջուր — Հիւսիսի հողմ — Ժայռեր — Դատ — Քար — Աղուէս — Կովի զնացք — Ռւռենւոյն տերեւները — Կրակ — Ապակի — Կարագ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԽԱ.


Անուանեկ :

4. իր որ ճերմակ գոյն ունենան . 4. որ սեւ գոյն ունենան .
4. որ մոխրագոյն ըլլան . 4. որ կապոյտ ըլլան . 4. որ կարմիր ըլլան . 4. որ վարդագոյն ըլլան . 4. որ գեղին ըլլան :
Օր . Դաս . — Զիւնը , կաթը , չուշանը , շաքարը ճերմակ են:

Դոյն ծագումն ունեցող բառեր աւելցուք :

Արհեստ, մատնութիւն, գիր, օրինակ, տեսչութիւն, երգ, տպագրութիւն, ձուլումն, վաճառականութիւն, լողալն, ստորագրութիւն, կազութիւն, սղոց, ժառանգութիւն, արգել, գըծագրութիւն, ամբաստանութիւն, փաստաբանութիւն, դժուարիմացութիւն :

Օր. Դաս. — Արհեստաւոր, արհեստական :



ԴԱՍ ԼԶ.

Դ Է Մ Ք

53. Խօսրին մէջ երեք անձ կամ դէմք կայ. Խօսրին, լուս, եւ այն որուն իւս, և խօսուի. — զորօրինակ, երբ կըսեմ. ես քեզ ըսեր եի քէ եղբայրդ պիտի ջզար. Ես՝ խօսող անձը կամ դէմքը կը ցուցնէ, քեզ՝ լսողը, եւ եղբայր՝ այն որուն վրայ կը խօսուի: Խօսողն առաջին դէմք կը կոչուի, լսողն երկրորդ դէմք, եւ այն որուն վրայ կը խօսուի՝ երրորդ դէմք: Ուստի վերոզրեալ օրինակին մէջ եւ առաջին դէմք է, ուշ երկրորդ դէմք, եւ եղբայրը երրորդ դէմք:

Ի՞նչ դէմքէ են յաջորդ նօտր զրով զրուած բառերն, եզակի քէ յոզնակի:

Մարիս գերեզման եկաւ. — Յահանք Յովսէփայ Ճայնը լոելով ուրախացաւ. — Ես ուշ ըսի թէ լւու դժուարին է. — Ես կը կարծէի թէ եղբայր կորուսած մասնին դասւ. — Հայրդ ըսաւ ուշ որ վաղը Գեր տունը դաս. — Դու ի՞նչ ես — Ես Հայ եմ.

ՀՅԱՀԱՆԳ ՄԽԻ.

Հետեւեալ պատմութիւնը գ. դեմքի վերածէ :

Ֆիմի իշխանուհին իւր փարքը կը պատմէ .

Դուստր էի ևս Զապելայ եւ Հեթմոյ՝ որոց որդի ըլլալս մեծ բաղդ եւ փառք էր ինձ . նոցա առաքինութեան նմանել աշխատեցայ ես ալ . հինգ քեռցս մէջ երկրորդն էի ես՝ բայց հարսնութեան վիճակաւ ամենէն առաջ անցայ , եւ տիկին եղայ Սիդոն քաղաքին . բայց առաջ անգութ անձ մը յարձակեցաւ մեր վրայ եւ բնաջինջ պիտի ընէր մեզ՝ եթէ չհամնէր օգնութեան թագաւորն Փրանկաց Ս. Լուգովիկ : Այսպէս նորէն խաղաղութիւն գտնելով երեք որդւոց խնամօքը կը պարապէի , եւ կը ջանայի զնոսա ամէն բարեձեւութեամբ զարդարել . Սակայն Աստուած չներեց որ տեսնեմ իմ քաջ անդրանկիս մեծնալը : Ո՞հ ինչ սոսկալի ցաւ էր զգացածս այն օրը որ իւր անկենդան մարմինն աշքիս առջեւ բերուեցաւ : Բայց երբ լսեցի ամուսնոյս ալ մահը՝ յուսահատ սրտիս ալ աշխարհիս մէջ դարման չգտնելով , առանձնացայ հաւատաւորաց վանք մը եւ կնքեցի իմ պանդուխտ կեանքս՝ ինքզինքս Աստուծոյ յանձնելով :

Օր. Դաս. — Ֆիմի դուստր էր Զապելայ եւ Հեթմոյ՝ որոց որդի ըլլալը մեծ բաղդ եւ փառք էր իրեն : Նոցա առաքինութեան նմանիւ աշխատեցաւ ինք ալ . եւն :

ՀՅԱՀԱՆԳ ՄԽԻ.

Հետեւեալ բառերով խօսքեր զինե՛ զանազան դեմքերով :

Աղքատ . Ամառն . Գլուխ . Գործ . Հիւանդ . Գետ . Գորով .
Գոյն . Մարդ . Սուրբ . Լուսին . Ապակի . Լոյս . Հող . Զիւն .
Մազ . Զուր . Վէմ . Փուշ . Քար . Ողի :



ԴԱՍ ԼԵ.

ԼԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՔ

54. Երեք դեմքերը ներկայացնելու նամար կը գործածուին եալան դերանունները որ են .

Եզակի	Յոզենակի
Առաջին դէմք	Ես, ինձ, զիս .
Երկրորդ	» Դու, քեզ, քենէ .
Երրորդ	» Դու, նորա .
	Մեք, մեզ, մենէ .
	Դուք, ձեզ, ձենէ .
	Դոքա, նոցա :

ՀՐԱՀԱՆՔ ՄԽԶ.

Հետեւեալ հրահանգին մէջ կրկնուած անուանց տեղ հարկ եղած դերանուանքն գործածէ :

Յակովը զՅովսէփի կը սիրէր Յակոբայ միւս որդիներէն աւելի, վասն զի Յովսէփ Յակոբայ ծերութեան ատեն ծնած էր . Յակովը այլ եւ այլ գոյներէ ծաղկէ կապայ մը չինելով՝ Յովսէփին հացցուց . բայց Յովսէփին Եղբայրները կ'ատէին Յովսէփին, աւելի սիրուելուն համար Եղբայրներուն հօրմէն եւ երկու երազներուն համար, զոր Յովսէփ Եղբայրներուն պատմած էր, եւ այլն :

Օր. Դաս . — Յակովը զՅովսէփի կը սիրէր իւր միւս որդիներէն աւելի, եւ այլն :



ԴԱՍ ԼԸ.

Հ Ո Լ Ո Վ.

55. Անունն եւ դերանունն ուրիշ բառից հետ ունեցած կապակցութիւնը ցուցնելու համար՝ կերպ կերպ փոփոխութիւններ կը կրեն որ հուշվ կը կոչուին :

56. Անունն իւր բնական վիճակին մէջ առաջնական կը կոչուի եւ խօսքին մէջ բնիւկ, կամ առարգելվ կրնայ ըլլալ : Երբոր ենթակայ է, ո՞վ կամ ի՞նչ հարցման կը պատասխանէ . (Ք³⁵, Հ⁶) : Երբոր ստորագելի ըլլալ, ի՞նչ կամ ի՞նչպիսի հարցման կը պատասխանէ :

ՀԲԱՀԱՆԳ ՄԽԵ.

Հետեւեալ խօսից մէջ ի՞նչ հոլով են բառերը • (որո՞նք են ենթակայք • որո՞նք են ստորագելիք) :

Սենեկին գուոը բաց է • — Շունը հաւատարիմ է • — Գարնան օդերը զով են • — Կաթին ամանները լեցուն են • — Արդարոց հոգիք երանելի են • — Զիթենին հաշտութեան նշան է • — Աստղերուն թիւն անհամար է • — Լովել որոճացող է • — Ծովու ջուրն աղի է • — Գիրքերն օդտակար են • — Ծերերը փորձառու են :

Օր. Դաս • — Սենեկին սեռական հոլով է՝ վասն զի որո՞ւն (Ք³⁶, Հ²) հարցման կը պատասխանէ • բայց ուղղական, վասն զի ո՞վ կամ ի՞նչ հարցման կը պատասխանէ :

ՀԲԱՀԱՆԳ ՄԽԲ.

Հետեւեալ բառերն իբր ենթակայ եւ իբր ստորագելի գործածէ :

Աստուած • Վաճառական • Թագաւոր • Քահանայ • Եկեղեցի •

Ծառայ • Գիրք • Տուն • Գրիչ • Մելան • Կանոն • Կապար • Բնութիւն • Տիեզերք • Աշխարհք • Երկինք • Լուսին :

Օր. Դաս • — Աստուած ամենակարող է • — Ապողոն աստուած մ'էր :

ՀՐԱՀԱՆԳ ՄԽԹ.

Գտի՞ր յաջորդ խօսից մեջ ուղղական հոլով բառերը :

Որչա՞փ զարմանալի եւ փոփոխամիտ է մարդ • — Զկունք համր են, բայց աղմուկը կը լսեն եւ կը փախչին • — Արծուխն շատ սրատես է • — Իմաստութիւնն այնպիսի դանձ մ'է որ չը հատնիր • — Ստահակ տղան չկրնար սիրուիլ • — Պարկեշտ գործաւորն իւր տունը կը վերադառնայ : — Գարունը հասաւ, ծաղկիները կը բացուին, անուշ հովեր կը փչեն, թռչունք կը ճըւճւան ծառոց մէջ, ամէն մարդ անոյշ միսիթարութիւն մը կըզդայ :

ԴԱՍ ԼԹ.

57. Սեռական հոլովը բանի մը որո՞ւն ըլլալը կը ցուցնէ, եւ որո՞ւն (ՔՔՆ) հարցման կը պատասխանէ :

ՀՐԱՀԱՆԳ ՄՇ.

Վետենեալ բառից սեռականը զրէ :

Թագաւոր • մարդարէ • հաց • Աստուած • մի • որդի • իմաստուն • միծ • քարայր • տուն • ես • ոչխար • այծ • նեղութիւն • դառն • պարտէզ • գօտի • սիւն • արկղ • փոքր • տարի • հոգի • բեռն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԾԱ.

Հետեւեալ խօսից մեջ որոնք են սեռականները • հարցմամբ գոյի՛ր :

Ցերեկուան ժամերը կարճ են . — 2. Գետին ջուրերն անուշ են . 3. Արդարոց հողիք երանելի են . 4. Սաւուղին որդին կաղ էր . 5. Տիեզերաց ընդարձակութիւնն անհուն է . 6. Անձրեւին , ձեան եւ հովերուն օգուտը շատ է . 7. Արեգական ճառագայթները տաք են . 8. Մարդուն աշխատութիւնն իւր հարստութիւնն է . 9. Աղքատին աղաչանքը մի մերժեր . 10. Եղբօրդ գիրքն ո՞ւր է . 11. Թորոսին մայրը կուդայ . 12. Ծաղիկներուն հոտը կ'առնուս . 13. Առիւծին ձայնէն ամէն կենդանիք կը վախնան . եւ ի՞նք , կ'ըսեն , աքաղաղին ձայնէն կը դողայ . 14. Վահագնին պատմութիւնը կարդացի :


Օր . Դաս . — Որո՞ւն ժամերը . — իրիկուան՝ սեռական հոլով :

ՀՐԱՀԱՆԳ ՄԾԲ.

Հետեւեալ խօսից առջին մեյմեկ սեռական հոլով բառ դիր որ նոցա որո՞ւն (Քէֆն) ըլլալը հասկցնէ :

1 . . . լոյսն աղօտ է . 2 . . . կողմերը չորս են . 3 . . . հայրը զինքը շատ կը սիրէ . 4 . . . դուռը բաց է մնացեր . 5 . . . ծառաները հաւատարիմ էին . 6 . . . խրատը մտիկ ըրէ . 7 . . . ուժովը նաւերը կը քալեն . 8 . . . ալիք ահագին են . 9 . . . լոյսն ու տաքութիւնը շատ կարեւոր են . 10 . . . ջրերովը շատ ջաղացք կը դառնան . 11 . . . մը ձայնը միշտ անուշ կուգայ . 12 . . . պետութիւնն ահագին էր . 13 . . . ընկերները կուսանք էին :

Օր . Դաս . — Լուսնի լոյսն աղօտ է :



ԴԱՍ Խ.

58. Տրական հոլովն որո՞ւն (քիմէ) հարցման կը պատասխանի :

ՀՐԱՀԱՆԳ ՄԾԳ.

Հետեւեալ բառից տրականը զրէ՛:

Մարդ, եղբայր, թագաւոր, մի, առաջին, կին, իմաստուն, որդի, քաղաք, այր, քահանայ, ձի, պարտէղ, հանդէս, մրցանակ, զիրք, անօրէն, առաքինի, կով, վատ, աշխատասէր, ծոյլ, զրիչ, բրիչ, զլուխ, զրացի, պատուհան, ապակի, սիւն, ձիւն, թոյն, պատմութիւն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԾԳ.

Հետեւեալ խօսից մէջ որո՞նք են տրական բառերն, հարցմանը գտիր :

1. Ինձ պարզեւներ տուաւ • 2. Հայրս իւր գրքերն իմ ընկերացս ցուցուց • 3. Ես գաղտնիքս քրոջս յայտնեցի, նա ինձ խօսք տուաւ թէ մարդու պիտի չըսէ • 4. Մայրս իւր հին հանդերձներն աղքատին տուաւ • 5. Ես այն խօսքն եղբօրս ըսի • 6. Բարեկամացս խօսեցայ նորա վրայով • 7. Քեզ նայելով կուլար • 8. Որո՞ւ տուիր այդ զրամը • 9. Մէկը նմա չպատասխանեց :

ՀՐԱՀԱՆԳ ՄԾԵ.

Հետեւեալ փակագծի մէջ առնուած բառերը տրական հոլովն ըրէ՛:

1. Ապսոլոեցի (եղբայր) որ այս լուր (մայր) հաղորդէ • 2. (Ո՞ր)

յանձնեցիր այն գումարը . 3. (Դու) ըսի որ (դասատու) խօսիս . 4. (Մեք) չխնայեցիք , Աստուած ալ (դուք) չխնայեր . 5. (Ես) տո՛ւր այդ զմելինը . 6. (Բարեկամ) հետ շրջապայռութեան ելայ . 7. Հարցուր (ծնողքդ) . 8. Ներեցէք (յանցաւոր) . 9. Խնչո՞ւ բարկացաւ (մեք) . 10. (Ես) կանչէ ագ տղան . 11. Զքեզ մեր (բարեկամ) պիտի յղեմ . 12. Ըսէ՛ք (ես) իրաւունք չունիմ (դուք) դէմ . 13. Մօտեցիր (սեղան) . 14. Գառնը (գայլ) կերթար եւ կը ցուցընէր (նա) իւր փարախը :

Օր Դաս . — Ապապլեցի եղբօրդ որ այս լուրը մօրդ հաղորդէ :

ԴԱՍ ԽԱ.

59. Հայցական նոյովը զո՞վ , ի՞նչ բանը (Քէ՛մ , Կէ՞ շէ՛մ) հարցման կը պատասխանէ :

ՀՐԱՀԱՆԴ ՄԾԶ.

Հետեւեալ բառերն հայցական նալով դնելով քովը մեյմեկ բայ առելցուր :

Բարեկամ , մայր , ընկեր , հայր , ծառ , քուրձ , գերի , ոչխար , հանդերձ , ծաղիկ , երկիր , երկինք , լուսին , արեւ , փողոց , զիակ , տղայ , ձեռք , պատուղ , ոսկի , մատեան , գրիչ , մատիտ , ծառ , արուսեակ , նետ , աղեղ , կայծակ , որոտում :

ՀՐԱՀԱՆԴ ՄԾԷ.

Հետեւեալ բայից քով մեյմեկ հայցական նոյով բառ առելցուր :

Սիրել , մշակել , ուտել , կանչել , գոցել , պատուել , աղատել , փընտել , բերել , մտածել , այրել , ծամել , պարպել , աղտոտել , զար-

նել, գանել, անիծել, կապել, քաղել, ծաղրել, պատել, ընտրել, վատնել, ցրուել, բացատրել, մելնել, տանել, ջղակոտոր հանել, փախցնել, կերցնել, բեռցնել :

Օր . Դաս . — Կը սիրեմ ծաղիկները :

ՀՐԱՀԱՆՔ ՄԾՅ.

Հետեւեալ խօսից մէջ ո՞ր բառերն ուղղական, որո՞նք սեռական եւ որո՞նք հայցական են :

1. Մեր հայրն այս պարտէզը գնեց . 2. Ոյս տնկուած քարը քաջութեան յիշատակ է . 3. Յիրուցան ըրի թշնամին . 4. Զայնը լեռներն է բռներ . 5. Աւազակը լեռնէ լեռ կը հալածէին . 6. Ծույին ձուկերը տեսակ տեսակ են . 7. Իրենց գերիներն աղատեցին . 8. Հնդկաց լեռները բարձր են . 9. Հայրն ունեցածը որդւոցը բաժնեց . 10. Խօսքը կարճ կապէ . 11. Յովէփի ինքլինքն եղբայրներուն չճանչցուց նախ . 12. Հայրս գիրք մը կը գրէ ինձ պարգևեւ ընկելու համար . 13. Դուն եթէ աղդդ չսիրես, ո՞վ պիտի սիրէ զայն . 14. Ինչու կ'արհամարհս քու անմեղ եղբայրդ . 15. Այսօր քոյրս պիտի մկրտեմք . 16. Տեսար հիւսիսային լեռները . 17. Հոտոտեցիր այս սիրուն մանուշակը :

ԴԱՍ ԽԲ.

60. Գործիական նոյովն որո՞ւն հետ, ինչո՞վ (Քէմէն էլ, նէ էլ) հարցման կը պատասխանէ :

ՀՐԱՀԱՆՔ ՄԾՅ.

Հետեւեալ բառերը գործիական նոյով ըրէ :

Փայտ, ձայն, քար, փուշ, զինւոր, բարեկամ, որսորդ, պըսակ, մարդ, առաքինութիւն, ձի, առիւծ, ծառ, արեւ, աչք,

աշխատութիւն, դոյլ, ընտանիք, բարեկամ, տղայ, ճամբորդ, անձրեւ, վաճառական, գանձ, դի, մայր, արեւ, խենդ, ծով, պառաւ, չուն, ժամ, դար, էջ, արջ, ատեն, ժամանակ, տարի, ամիս, շաբաթ, ցերեկ, իրիկուն, ծանրութիւն, ժողովուրդ, անուն, դուռ, տուն, շահ, ձուկ, կնիկ, աղջիկ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿ.

Հետեւեալ բառից քով գործիական անուն հոլով մ'առելցուր :

Լեցնեմ, դառնամ, յաղթեմ, ազատեմ, փրկեմ, մնոնիմ, դըրեմ, խոստովանիմ, զարնեմ, ծախսք ընեմ, խօսիմ, խաւրեմ, պարծիմ, երթամ, պաշտիմ, կռուիմ :

Օր. Դաս . — Գաւաթը ջրով կը լեցնեմ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿԱ.

Հետեւեալ գործիական հոլովներուն քով յարմար բայ մը առելցուր :

Ուրախութեամբ, պտուղներով, ծառերով, դրքերով, վէրքերով, ծաղիկներով, ծակերով, մատիտով, գոյնով, բոցով, դիրքով, սնապարծութեամբ, քաջութեամբ, վատութեամբ, փառոք, գործով, խօսքով, եռանդով, մոմով, ճրագով, կաթով, բահով եւ բրչով :

Օր. Դաս . — Ուրախութեամբ լսեցի այդ խոստումը :


ՀՐԱՀԱՆԳ ՄԿԲ.

Ինչ հոլով են յետագայ հրահանգի մեջ անուանք :

1. Հիւանդները տեսնելու կ'երթաք . 2. Հայրս ինձ բնակելու համար տուն մը տուաւ, եւ եղբօրս մշակելու համար արտ մը . 3. Խօսքով չհասկցողը պատժով կը հասկնայ . 4. Յովսէփ եղ-

բայրները տեսնելով, գաղտուկ մը արտասուքը սրբեց • 5. Մարդ
իւր գործովը կը ճանչուի • 6. Տիգրանուհի մեծին Տիգրանայ
քոյրն էր • 7. Սիրով աշխատողը միշտ կը յաջողի • 8. Այս տղան
իւր խօսքովը բռնուեցաւ • 9. Սաղաւարտով ծածկուած էին զը-
լուխները • 10. Հայր մը իւր հնազանդ որդիները միշտ կը սիրէ •
11. Ծնողքովը պարծենցողն ունայնամիտ է • 12. Այս խօսքերը
ձշմարիտ են .

Սեւ զրեհով ՚ի սեւն հեծած երիվար
Գայր զինչ սաստկորոտ ամպ մրրկավար ,



ԴԱՍ ԽԳ.

61. Բացառական հոլովն որմէ (ՆԵՐԻՆ, +ՔՐԵՆ) հարցման կը
պատասխանէ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿԴ.

Հետեւեալ բառերը բացառական հոլով ըրէ :

Սով, Աստուած, բանաւոր, քաղաք, գերեզման, լեռ, ջուր,
դեղ, հիւանդ, ցաւ, զաւակ, թագաւոր, գլուխ, ծով, պառաւ,
տարի, առտու, ամիս, ամառ, ձմեռ, ցերեկ, զիշեր, քառորդ,
անգամ, հեռու, երէկ, վաղը, անուն, դուռ, շուն, ձուկ, լեռ,
տիկ, ես, դու, նա, մեք, դուք, նոքա, իւր, Հայք, ծառայք,
տեղուանիք, աչք, ծունկ, մատ, ոտք, ձեռք, հայր, մայր, եղ-
րայր, տէր, քոյր, կին :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿԴ.

Հետեւեալ բացառական հոլովներուն քով յարմար բայ մը
աւելցուր :

Հողէն, լինէ, Աստուծմէ, երէկուընէ, քահանաներէն, չարէն .

մօտէն , բարկութենէ , աչուլներէն , կարողութենէն , ծառէն , դաւթէն , պատէն , կրակէն , ծովէն , մատուլներէն , արեւէն , երկնքէն , հողէ , ջրէ , սարէ , հօրմէ , քրոջմէ , մօրմէ , Յունացմէ , որմէ , ինէ :


Օր. Դաս . — Հողէն կելէ ամէն բանջարեղէն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿԵ.

Հետեւեալ բայից քով բացառական հոլով անուն մ'առելցուր :

Տարբերիմ , յուսահատիմ , ճանչցուիմ , սոսկամ , վախնամ , գնեմ , ելլեմ , քաղեմ , լսեմ , պատժուիմ , տանջուիմ , բժշկուիմ , սպաննուիմ , նետուիմ , թափուիմ , ջարդուիմ , անիծուիմ , սիրուիմ , այրիմ , փախչիմ , հեռանամ , երթամ , աքսորուիմ , սիրուիմ , նետուիմ :

Օր. Դաս . — Սոքա իրարմէ շատ կը տարբերին :



ԴԱՍ ԽԴ.

Բառի մը զանազան հոլովներն ետեւ ետեւ զրուցելու կամ զրելուն հոլովին կ'ըսուի :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿԶ.

Հոլովի հետեւեալ բառերը :

Ծառ , ձայն , թագաւոր , ձի , խօսք , քաղաք , մտերիմ , բարեկամ , տուն , խմաստուն , եղբայր , քոյր , հայր , տէր , հաց , գլուխ , տղայ , մայր , ժամ , ծեր , արեւ , օր , հիմայ , վաղը , կէսօր , փայտ , զիշեր , կէս , աշուն , շաբաթ , ամիս , տարի , աղջիկ , խաւարում , ծաղիկ , զօրութիւն , ծնունդ , թշնամի , ձիթենի , ձայ , ձայկ , պահք , կողմ , տեղ , յօնք :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿԵ.

Ի՞նչ հոլով են հետեւեալ բառերը :

Աւուր, սեղանոյ, տիրոջ, քաղքէ, մարմնոյ, լուսնի, փետրով, կնոջմէ, Երուսաղիմայ, ոսկերաց, աներու, մահուընէ, եղբարց, ծնկան, ձեան, արեան, տկարութեան, ոտքով, գիշերուան, ժողովրդէն, խենթերու, շահ, բարեկամով :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿԲ.

Ի՞նչ հարցման կը պատասխանեն հետեւեալ բառերն . ի՞նչ հոլով եւ ի՞նչ թիւ են . հասարա՞կ անուն թէ յատուկ անուն են :

1. Բարեկամիս կողմէն Հրանտին գացող լուրը շատ ուրախութիւն պատճառեց բոլոր մեր ընտանեաց . 2. Եթէ տեսած ըլլայիր եղբայր՝ իրմէ պէտք եղած տեղեկութիւնները պիտի առնէիր եւ այնպէս կը յուսամ թէ պիտի կարենայիր սիրտդ միսիթարել . 3. Երբոր այս լուրը հասաւ քաջ թաթուլին՝ «Եթէ հարուածն իմս է, ըսաւ, տղան ալ ապրելիք չունի» : Յիրաւի տղան մեռաւ եւ թաթուլն սպաննեցին . 4. Աբգար թագաւորը նամակ մը գրեց Յիսուսի եւ իրմէ խնդրեց որ հիւր գայ . «Գեղեցիկ փոքրիկ քաղաք մ'ունիմ, կըսէր, բայց ինձ եւ քեզ բաւական» :

ՀՐԱՀԱՆԳ ՄԿԹ.

Հետեւեալ հրանտին մէջ ածականք բարի կամ չար որպիսուրիւն մը կը ցուցնեն : Բարի որպիսուրիւն ցուցնող ածականաց քով՝ բ զիրը դիր, եւ չար որպիսուրեանց քով՝ և Յետոյ քովն աւելցուր թէ ինչու բարի կամ չար կը քուին քեզ այն որպիսուրիւնք :

Անձնուէր բարեկամ՝ —	Միաբան ընտանիք
Բամբասասէր աղջիկ՝ —	Ծոյլ տղայ
Ողորմած կին՝ —	Անհաւատարիմ ծառայ
Ագահ ծերունի՝ —	Անհնաղանդ որդի
Արիասիրտ զինոր —	Ճշմարտախօս վկայ
Անաչառ գատաւոր —	Խրովստ մարդ
Հլու աշակերտ —	Կարեկից սիրտ :

Օր. Դաս . — Անձնուէր բարեկամ . բ. որովհետեւ մարդ կըրնայ անոր վատահիլ : — Այս վարժութիւնը կրնայ շարունակուիլ . լթ. Հրահանգին վրայ :

ՀՐԱՀԱՆԳ ՄՀ.

Հետեւեալ բառից որո՞նք որոշեալ են որո՞նք են անորոշ, են ինչ հոլով են :

1. Զայն չլառիր այս տեղ . ամէն բան լուռ է , միայն ծառերուն եւ ջրերուն կարկաջը տխուր ողբի մը պէս կը խոռվէ այս խոր լուռթիւնը :
2. Տետրակները գրելու համար առիր եւ ոչ թէ զնոսա աղտեղելու :
3. Աստուած զմարդ ստեղծեց եւ զայն աշխարհ դրաւ ապրելու համար :
4. Զիներն եւ միջատները չորքոտանիներէ անկատար կինդանիներ են , մարդս նոցա ամննէն վեր է :
5. Լսեցիր այս սոսկալի աղմուկն որ ամբողջ քաղաքը կը յուզէ :
6. Փողոցները լի էին ահազին բազմութեամբ զօրաց եւ ամէն կողմ կը հնչէին զինուց ձայներ :
7. Սիրէ՛ զԱստուած , կատարէ պարտքդ , խնդրէ իրաւունքդ . ոչ փոխ դրամ տուր , ոչ փոխ առ :
8. Անկողնին հանգիստը մարդուս ուժ կուտայ թէ բարոյական թէ նիւթական :
9. Գեղեցիկ երազներ տեսայ :
10. Որո՞նք են տեսած երազներդ :

ՀՐԱՀԱՆԳ ՄՀԱ.

Ինչ հոլով կրնաս դնել նետեւեալ խօսից մէջ նօտր գրով գրուած բառերը :

1. Տգիտութիւնն ամբողջաւանութիւն քոյրն է : 2. Օղը Հայութեւն է : 3. Աստված պատուէրն է մեծերուն հնազանդ ըլլալ : 4. Հայոց նշանաւոր քաղաքներն Երասխ էեւ Եղերքն էին : 5. Մարդիկը չեւ ճամբէն նոցա ետեւէն ինկան : 6. Քաղաք երկու օրուան ճամբայ հեռացանք : 7. Մօրեղբայր քովը շատ զրքեր կան : 8. Եղբայրս չեւ վար ինկաւ :
-

ՀՐԱՀԱՆԴ ՄՀԲ.

Ի՞նչ նոյնվ են յետագայ խօսից մեջ նօտր զրով զրուած բաները :

1. Մեք լճին քով կը բնակէինք , նոքա ալ բլւյան վրայ : 2. Այն ծովին ժաշուն մը ելաւ : 3. Ի՞նչ բնաւ զրունունք : Զարերը Աստվածնե կը պատժուին : 5. Մեր հարուդնեան համեմատ պէտք է ջանամք : 6. Իւր եղբայր տունը զնաց :
-

ԴԱՍ ԽԵ.

64. Հայցական նոյնվ առնող բայերը ներգործական կըսուին . այսպէս ժողու , ներգործական է , վասն զի կրնաս ըսել ժողու զիբբը :

ԿԱՆՈՆ

65. Այն բայն որ հայցական հոլով չկրնար առնուլ չեղոք է . այսպէս կը դուռէմ չէզոք է . վասն զի չըսուիր կը պտըտիմ բան մը , կը պտըտիմ մէկը :

ՀՐԱՀԱՆԳ ՄՀԳ.

Հետեւեալ բայից որո՞նք ներգործական են որո՞նք են չեզոք ։
Ուտեմ ։ սիրեմ ։ վազեմ ։ քնանամ ։ դոցեմ ։ մեռնիմ ։ յոգնիմ ։
բանամ ։ մտածեմ ։ նստիմ ։ ելեմ ։ երինցնեմ ։ կարդամ ։ զրեմ ։
լամ ։ իմանամ ։ փորեմ ։ թափեմ ։ կոթնիմ ։ հանեմ ։ լեցունեմ ։
ուղեմ ։

Օր Դաս. — Ուտեմ՝ ներգործական բայ է, վասն դի կրնանք
ըսել . և Կ'ուտեմք բան մը :

ՀՐԱՀԱՆԳ ՄՀԳ.

Հետեւեալ բառերը մեկ ներգործական են մեկ չեզոք բայի
խնդիր ըրէ :

Ծնծղայ, սրինգ, ժամանակ, դար, որոտում, անձրեւ, կար-
կուտ, ժամ, վայրկեան, առաւօտ, իրիկուն, ստուեր, շուք,
պատշգամ, վանդակ, տունկ, ծաղիկ, ախոռ, մսուր, գոմ, կա-
կաչ, մարգրիտ, ցանկ, ծառուղի, ճամբայ, կանեփ, վուշ, այ-
գի, խոտ, կոճղ, արմատ, ունկն, շառաւիղ, ոսկը, որկոր,
գայլ, աղուէս, կատու, չնջրի, կուղը, վագր, փիղ, պատիճ,
փետուր, բրուկ, թաթ, արծիւ, կասկամ, սոխակ, ծիծառն,
կաքաւ, կողինչ, շանձուկ, քարր, գոգօչ, ծղրիտ, մարախ,
թրթուր :

ՀՐԱՀԱՆԳ ՄՀԵ.

Հետեւեալ պատմութեան մեջ ներգործական են չեզոք բայերը
ցցուր են ըսկ' թէ որոնք են նոցա խնդիրներ :

Երիտասարդուհի մը ծաղիկ հասակին մէջ մեռաւ . զինք դա-
գաղի մը մէջ զրին ճերմակներ հազուեցունելով մազերուն ամե-
նանուրը մարգարիտներէ պսակ մը հիւսելով, միանդամայն թան-
կաղին քարերով զարդարուած մատնի մը մատն անցունելով :

Հետեւեալ գիշերը մեռելաթաղը գաղտուկ մը գերեզմանատունը
մտաւ ձեռքը փոքրիկ լապտերով մը եւ փոսը բանալով կուզէր
զիակն իւր զարդերէն կապտել : Բայց մեռեալ կարծուածը վեր
ելլելով աչուըները նորա վրայ յառեց եւ գերեզմանական ձայնով
մ'ըսաւ նմա : « Ի՞նչ կ'ուզես : » Գողը սարսափելով փախաւ :
Երիտասարդուհին՝ որ մեռեալ կարծուած էր առանց յիրաւի մեռած
ըլլալու՝ փոսէն ելաւ , մեռելաթաղին թողած լապտերն ա-
ռաւ եւ տունը դարձաւ : Երբոր ներս մտաւ՝ ծնողքն առջի բե-
րան սարսափով լցուեցան . բայց այն սոսկման իսկոյն մեծ ու-
րախութիւն մը յաջորդեց :

ԴԱՍ ԽԶ.

Եզակի			Ցոգնակի		
ադ	բդ	զդ	ադ	բդ	զդ
Ուղ. ես	— դու	— նա	մեք	— դուք	— նոքա
Սեռ. իմ	— քու	— նորա	մեր	— ձեր	— նոցա
Տրա. ինձ	— քեզ	— նմա	մեզ	— ձեզ	— նոցա
Հայ. զիս	— զքեզ	— զայն	զմեզ	— զձեզ	— զնոսա
Գործ. ինձմով — քեզմով — անով			մեզմով	— ձեզմով	— անոնցմով
Բաց . ինէ	— քենէ	— անկէ	մենէ	— ձենէ	— անոնցմէ

ՃՐԱՀԱՆԳ ՄՀԶ.

Ի՞նչ նոլով կրնաս դնել դերանունները նետեւեալ խօսից մէջ :
Հայրս (դու) կը սիրէ . — Տղան (ես) կը վախնայ . — Եղբայրս
(նոքա) հրաւիրեց . — Քոյրս (դու) մեր տունը կը հրաւիրէ . —
Նորա վիզն ինկաւ ու կը համբուրէր (նա) . — (Մեք) մոռցաք . —
(Դուք) հիւանդ կը կարծէի . — (Նոքա) միսիթարելու գացեր էի .
— (Դա) հոն տեսայ . — (Նոքա) աղէկ ընդունելութիւն գտանք .
— (Դուք) զիրք մը պիտի ուզեմ :

Օր . Դաս . — Հայրս զքեզ կը սիրէ . հայցական դրի որովհետեւ կը սիրեմ ներգործական բայ է :

ՀՐԱՀԱՆԳ ՃՀԵ.

Ի՞նչ նոլով են հետեւեալ խօսից մեջ դերանուանք . ի՞նչ է նոցա ուղղականք :

1. Իմ որդիս գեղեցիկ է՝ քու որդիդ իմաստուն . 2. Զեր պարտէզը մեծ է , մերը պղտիկ . 3. Մեր տունը ձերինէն բարձր է . 4. Զենէ խոհեմ տղայ է նա . 5. Մեք երբէք անսոնցմէ չվախցանք . — Զեզմէ շատ կը պատկառին նոքա . — Երանի թէ միշտ մենէ գոհ ըլլայիր . 8. Ո՞վ գձեղ նոցա կը համեմատէ . 9. Ինձմով հինդ հոզի էին . 10. Քեզմէ զատ՝ իրենք ամենուն վստահ էին . 11. Զեզ ըսի արդէն եւ զձեղ յորդորեցի ալ որ ինձ մտիկ ընէք . 12. Մենէ հեռու կը պանդիստի : —

ՀՐԱՀԱՆԳ ՄՀՅ.

Հետեւեալ խօսքերը դերանունով մը ամբողջացուր :

1. Հայրս կը սիրէ . . . 2. Մայրդ կը պատժէ . . . 3. Եղբայրդ կանչէ . . . 4. Գրքերը կը զուարձացնեն . . . 5. Քոյրս կուտէ . . . 6. Եղբայրներս կը չարչարեն . . . 7. Գրիստոս ազգատեց . . . 8. Ստակն ուրախացուց . . . 9. Հօրաքոյրս սըրդողեցաւ . . . 10. Ինչու կը վշտանաս . . . 11. . . . դէմ զայրացաւ . . . 12. Ով որ . . . կը սիրէ՝ ետեւէս թող գայ . 13. Երբ որ . . . տեսնես՝ կանչէ . 14. Մի վախնար . . . ես քու բարեկամդ եմ :

Օր . Դաս . — Հայրս կը սիրէ զձեղ :



ԴԱՍ ԽԵ.

67. Ներգործական բային մեջ ենթական բան մը կընէ , խընդիրն այն բանը կ'ընդունի : Երբոր կըսեմ . հրանտ այրէց բռնշ . կրակն ենթակայ է՝ բան մը կ'ընէ , տունը խնդիր է որ կրակին ըրած գործը կ'ընդունի :

Կ Ա Ն Ո Ն

68. Եթէ ենթական խնդրոյն վրայ գործ մ'ընելու տեղ՝ անկէ գործ մ'ընդունի , բայր կրաւորական կ'ըլլայ . զորօրինակ տունը կրակին այրեցաւ , տունը գործ մը չ'ընէր՝ այլ կը կրէ . խնդիրը գործ մը չ'ընդունիր այլ կ'ընէ :

69. Միշտ կարելի է ներգործական բայ մը կրաւորականի և կրաւորական բայ մը ներգործականի փոխել .

Հայրը կը սիրէ տղան — Տղան կը սիրուի հօրմէն :

ՀՐԱՀԱՆԳ ՄՀԹ.

Հետեւեալ բայից մեջեն կրաւորականները ներգործականի եւ ներգործականները կրաւորականի վերածէ՝ :

Խզել • ծածկել • արգիլել • հնձուիլ • հրամայուիլ • շնորհուիլ • որոշել • խնդրել • հարցնել • պահուիլ • առաջնորդուիլ • ողողուիլ • տաքցնել • խղզել • սուլել • փչել • կլուիլ • այրուիլ • փակուիլ • որոշել • անուանել • գուշակել • նեղուիլ • լուսաւորել • քաղել • թղուիլ • կոճկել • տալ • ներուիլ • բռնել • թաթխուիլ • խարել • պատել • զարնուիլ • արձրկել • բացատրուիլ • ցուցնել • պատռել • պատըռտել • ըլջապատել • լուացուիլ • թաղել • նշմարուիլ • ընդունուիլ • ուղուիլ • գիտցուիլ • սպաննուիլ • պաշտպանուիլ • կուխել • լսել • փռել • ճեղքել • կախել • յաղթել • զրուիլ • միացնել • շնուիլ • եփել • կործանուիլ ,

Օր. Դաս . — Խղուիլ , ծածկուիլ , արդիլուիլ , հնձել , հրամայել եւ այլն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶ.

Յաջորդ նրանանգին մէջ զանազան եղանակ բայից սեռը փոխէ :

Ճանչցուեցաւ . — Պիտի ճանչցուէր . ճանչցուելու էինք . ճանչցուելու ես . պիտի ճանչցուէի . ճանչցուած կըլլայի . — Կը դրուկմ . կը դրուէիր . դրուեցանք . պիտի դրուի . պիտի դրուէիր . դրուինք . որ դրուինք . որ դրուած ըլլայիք . — Կը հասկնան . կը հասկնայիք . հասկցանք . պիտի հասկնայ . պիտի հասկնայիք . հասկնամ . հասկնայի . հասկցիր . հասկցած ըլլամ . հասկցած ըլլալու էինք . հասկնալու եմ . հասկնալու չէիր . — Պիտի կախէիր . պիտի կախէիք . — Ցրուենք . եթէ ցրուէի . թէ ցրուած ըլլայի . — Խմել . պիտի խմեն . պիտի սովորի . — Քաղաքը կործանեցաւ . — Կախեն . փորուի . Յաղթուեցաւ . Պիտի ճեղքուի . Միացնենք , Շինեցէք . Թող լսեն . Արդիլելու է . Գիտցանք :

Օր. Դաս . — Ճանչցաւ , պիտի ճանչնար եւայլն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶԱ.

Հետեւեալ խօսքերուն իմաստը պահելով ներգործական ճայնեց կրասորական նայնի փոխէ :

1. Ճանասիրութիւնն ամէն բան կը դիւրացնէ . 2. Մութն աշխարհ կը ծածկէ . 3. Աստղերն եւ ծաղիկները զԱստուած կը փառաբանեն . 4. Գիտութիւնը միտքը կը զարդարէ . 5. Զուարթ մարդը զամէնքը կը զուարթացնէ , տիսուր մարդը զամէնքը կը տիսրեցնէ . 6. Նախանձը կեանքը կը կարճեցնէ . 7. Հողագործն երկիրը կը հերկէ գարնան , զայն կը գարմանէ , եւ աշնան նորապտուղները կը քաղէ . 8. Սիրէ ընկերներդ որ նոքա ալ գքեզ սիրեն . 9. Ով որ ճշմարտութիւնը կը փնտոէ կը գտնէ զայն . 10. Կ'ըսեն թէ հովուի շուն մը գտաւ ծիրանի ներկը . 11. Հովիւը խաշինքը կ'արածէ , եւ շունը զնոսա կը պահպանէ . 12. Առ մարդք կը գովէ առաքինի ընկերը . 13. Հայկ լարեց աղեղը ,

թռուց նետը , զարկաւ՝ կործանեց Բէլ հական . 14. Առաքինուաթիւնը կ'աղնուացնէ զմարդ . 15. Քրիստափոր Քոլոմպոս Ամերիկան գտաւ . Սպանիացիք զինքը վարձատրելու համար բանտարկեցին . Քրիստափոր խնդրեց որ զինքն իւր շղթաներով թղթին :

Օր. Դաս . — Զանասիրութեամբ ամէն բան կը դիւրանայ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶԲ.

Հետեւեալ կրասորականները ներգործականի փոխէ :

1. Ազնիւ մարդն ամենէն կը սիրուի . 2. Աստուած կը պաշտուի հրեշտակիներէն . 3. Հայը կը գովուի օտարներէն . 4. Պարտէզը կ'անուշահոտի բուրմունքներով . 5. Գէշ ունակութիւններն ուղղուելու են . 6. Շատերն իրենց չուայլութեամբ կը կործանին . 7. Միայն այնպիսի զրօսանք խնդրուելու են որ անմեղ եւ օգտակար են . 8. Նոր բարերարներ կը վաստկուին երախտագիտութեամբ . 9. Միտքն եւ հոգին կը մշակուին ուսմամբ եւ առաքինութեամբ . 10. Մեր ամէն գործերն ուղղուելու են կրօնքով եւ խելքով . 11. Նաւը մրրկէն հալածուելով՝ կործանեցաւ ժայռին դէմ . 12. Առաւօտը կ'աւետուի աքաղաղէն :

Օր. Դաս . — Ամէնքն ազնիւ մարդը կը սիրեն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶԳ.

Թետագայ խօսից մեջեն սեռի խնդիրներն եւ տէրբայինները նշանակէ :

1. Թռչունն իւր բոյնը կը շինէ . 2. Աղուէսը հաւեր կը խեղդէ . 3. Զմելինս կորմնցուցի . 4. Ռահվիրայն ուղեւորաց ճամբայ կը ցուցնէ . 5. Ուղտերն անապատներէն կ'անցնին . 6. Ժամացոյցը ժամերը կը նշանակէ . 7. Զկնորսն իւր ուռկանները ծովը կ'արձկէ . 8. Մեղուները խորիսի կը շինեն . 9. Հովիւն ոչխարները կ'արածէ . 10. Արեւը զաշխարհ կը տաքցնէ . 11. Մեր բարերարները կ'օրհնեմք . 12. Ահաւոր կոհակները նաւեր կ'ընկղմն . 13. Որսորդն իւր հաւատարիմ շունը կը կանչէ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶԳԻ.

Յետագայ բայից մեյմեկ սեռի խնդիր յարմարցուք :

Հողագործը . . . կը հերկէ . 2. . . . կը սիրեմ . 3. Ատաղ-
ձագործը . . . կը տաշէ . 4. Մսավաճառը . . . կը ծախէ . 5.
Փայտահարը . . . կը ջարդէ . 6. Սուրհանդակը . . . կը բերէ .
7. Երկրագործը . . . կը ցանէ . 8. Դատաւորը . . . կը պատժէ .
9. . . . պիտի պտըտցնես . 10. Հիւանդը . . . կը խնդրէ . 11.
Տղայք պարտին յարգել եւ մեծարել իրենց . . . եւ իրենց . . .
12. Խլուրդը . . . կը փորէ . 13. Եղբայրդ . . . կը յանդիմանէ
յաճախ :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶԳԵ.

Յցուք յետագայ ծառերուն տուած պտուղները կամ ծաղիկ-
ները :

Շագանակենին . . . — Խնձորենին . . . — Կաղնին . . . —
Ընկուզենին . . . — Սալորենին . . . — Ցանձենին . . . —
Հաղարջենին . . . — Վարդենին . . . — Որթը . . . — Մո-
րենին . . . — Զկեռին . . . — Կանեփը . . . — Եղեւինը
. . . — Նարնջենին . . . — Թղենին . . . — Դեղձին . . . —
Նշենին . . . — Կաղնին . . . :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶԳԶ.

Աշակերտը պզտիկ խօսքեր պիտի շինէ , որք մեյմեկ բայ
եւ մեկ սեռի խնդիր պիտի ունենան եւ նոցա տերբայի պէտք
է զլան յետագայ բառերը :

Տղայք . . . — Պարտատէրը . . . — Օձը . . . — Յողը
. . . — Այծը . . . — Թոչունք . . . — Որմաշէնը . . . —
Առուակները . . . — Արտոյաը . . . — Անձեւը . . . — Հը-
նազանդութիւնը . . . — Ցարգանքը . . . — Խաղաղութիւնը
. . . — Պատերազմը . . . — Գիրքերը . . . — Ծովը . . . —
Նաւերը . . . — Կառքը . . . — Գծագրիչը . . .

ԴԱՍ ԽԸ.

10. Բային ցցուցած գործը կրնայ ներկայ կամ անցած ժամանակի մը մէջ կատարուած ըլլալ , ինչպէս « Երեկ պտղուելու ժող » . կամ խօսած ժամանակնիս կատարուիլ . « Հիմայ հէ ժըւմ » . կամ զայիր ժամանակի մը մէջ կատարուիլ « Վաղը եղբօրս նամակ դէռէ ժըւմ » : Սոցա առաջինը կ'ըսուի անցեալ եւ կը նասկցուի երբ քովը կրնաս աւելցնել՝ « ժամանակա » . Երկրորդը ներկայ որ՝ կը նասկցուի « հիմայ » աւելցնելով « այսուհետեւ » :

ՀՐԱՀԱՆԳ ՄՁԼ.

Ի՞նչ տեսակ ժամանակ կը ցուցնեն նետեւեալ խօսքերը :

Սիրեց , պիտի սիրէ , կը սիրեմ , սիրած էինք , պիտի սիրէ-ինք , պիտի սիրեմք . կը վասնէր , պիտի վասնէ , թող վասնէ . Մի՛ մատներ . Համոզեց . Պիտի վախնայ . Թող խօսի . Եկէք . Փախան , կը կանչէին , փախած էին . Վախնալու է , պէտք էր վախնալ , եթէ վախնար . Կ'որոշեմ , որոշեմ , եթէ որոշեմ , որոշէինք , կ'որոշէինք , պիտի որոշեմք , որոշած եղայ . Մի հարցը-ներ , չ'հարցնես , հարցուցինք . Վախցաւ , չ'վախցաւ , մի՛ վախ-նաք .

Օր. Դաս . — Սիրեց , անցեալ ժամանակ պիտի սիրէ ա-պառնի , եւլն :

ՀՐԱՀԱՆԳ ՄՁԼ.

Հետեւեալ բայերն երեք ժամանակի դիր եւ մեյմեկ խօսք շնեկ անոնցմով :

Բնակիլ , ելլել , արթննալ , տանիլ , սկսիլ , ծռել , խնայել , հրամայել , կապել , օրհնել , զարնել , սնուցանել , կոտրել շինել , այրել , ճաթել , զնել , որսալ , փաթթել , հաղուիլ , գալ , արժել , պարարիլ , աճիլ , կտրել , համարձակիլ , ծախել , փորել , դժագքել , երազել , խմել ուտել , լինալ , կերակրել , զգալ , զըտ-

նել, թռչիլ, մոռնալ, սառիլ, ստանալ, տալ, գալ, աճիլ, ընել, պահել, ծածկել, ծնրադրել, բեռնաւորել, ծածկել, կորսնցնել, անցնիլ, վճարել, փորձել, դնել, հանդչիլ, կարդալ, հեծնել, խնդրալ :

Օր. Դաս . — Կը բնակէք, կը բնակիմք, ալիսի բնակիք ելն :

ՀՐԱՀԱՆԳ ՄԶԲ.

Հետեւեալ պատմուքեան մէջ նօտր զրով եղած բայերը ներկայի փոխէ :

Հպարտ իշխանազուն մ'օր մը որսի ժամանակին լեռնամէջ դաւառ մը . հոն ծեր ճղնաւոր մը ուեսու որ խցիկին առջեւ նըստած ուշադրութեամբ իւ Շնէր մեռելոյ մը դանկը : Իշխանը հեղնութեամբ մ'ըստու . « Բարեմիտ մարդ՝ ի՞նչ է այդչափ ուշադրութեամբ նայածդ . ի՞նչ է խնդրածդ » . — Ճղնաւորը լրջութեամբ պարագանեց . « Կուղէի գիտնալ թէ այս դանկն իշխանի՞ մը թէ մուրացկանի մ'է , բայց գեռ չէշայ ըմբռնել » :

Օր. Դաս . — Հպարտ իշխանազուն մ'օր մը որսի կերթայ , եւայն :

ՀՐԱՀԱՆԳ ՄՊ.

Հետեւեալ պատմուքեան մէջ նօտր զրով եղած բայերն անցեալի փոխէ :

Արեւակէզ անապատի մը մէջ մոլորեալ անօթի ճամբորդ մը գեղեցիկ աղբիւրի մը քով արմաւենի մը իւ ուեսնէ , եւ անկէ քիչ մը հեռուն իւ նշառէլ լի տոպրակ մը . « Փա՛ռք Աստուծոյ , Կը՛տ , հիմայ ապահով եմ որ մահուընէ կ'առաջէ » : Մէկէն տոպրակը իւ բանայ , բայց աւաշդ իւր յոյմն իւ զերեւ կ'եւլէ , այն տոպրակին մէջ միայն մարդրիտ իւ գոնէ . « Մեղք ինձ , կ'առաջէն , հիմայ իւ հասկառ թէ որչափ մնոտի են մարդկանց յարդ տուած խաղալիկները » :

Հետեւեալ պատմութեան մէջ նօտր գրով եղած բայերն ապահնի ըրէ՛ :

Ծերունին իւր որդիքն եւ թոռունքը մահուան անկողնի շուրջը ժողովէց : Ննջելու ատեն երեք անգամ ժղովեցաւ, եւ երբ արենցաւ՝ տղայք իւր ժպիսներուն պատճառն հարցուցին : « Առջի անգամ, շաւ ծերունին, յիշեցի կենաց բոլոր հաճոյքներն եւ ծիծաղեցայ մարդկանց կուրութեան վրայ որ այսչափ չնչին բաներու այնչափ յարդ կուտան : — Երկրորդ անգամուն, առելցուց նա, բոլոր քաշած ցաւերս միտքս եկան . փուշերն հիմայ թափուեցան, եւ էերնամ նոցա բարումը վայելելու : — Երբորդ անգամուն, աղաջուկէց վերջապէս, կը ծիծաղէի թէ ինչո՞ւ մարդիկ կը փախնան մահուընէ . ան հրեշտակ մըն է որ երկնից դոները մեզ էը բանաց » :

ԴԱՍ ԽԹ.

71. Բային ցուցած գործն որ ժամանակ այ կատարուի՝ վեց տարբեր եղանակներով կամ կերպերով կրնայ կատարուիլ :

72. Կամ պարզապէս գործ մը ցուցնելով՝ Սահմանական եղանակ կը կոչուի, եւ հետեւեալ չորս ժամանակներն ունի :

ՆԵՐԿԱՅ

Կը խաղամ .	Կը սիրեմ .	Կը թողում .	Կը խօսիմ .
Կը խաղաս .	Կը սիրես .	Կը թողուս .	Կը խօսիս .
Կը խաղայ .	Կը սիրէ .	Կը թողու .	Կը խօսի .
Կը խաղամք . (1)	Կը սիրեմք .	Կը թողումք .	Կը խօսիմք .
Կը խաղաք .	Կը սիրէք .	Կը թողուք .	Կը խօսիք .
Կը խաղան .	Կը սիրեն .	Կը թողուն .	Կը խօսին .

ԱՆԿԱՏԱՐ

Կը խաղայի .	Կը սիրէի .	Կը թողուի .	Կը խօսէի .
Կը խաղայիր .	Կը սիրէիր .	Կը թողուիր .	Կը խօսէիր .

(1) Կանոնաւորութեան համար սահմանական ներկայի յոդնակի ՝ դէմքը և ով կը գրեմք՝ թէպէտ սովորաբար և կը հնչուի :

կը խաղար .	կը սիրէր .	կը թողուր .	կը խօսէր .
կը խաղայինք .	կը սիրէինք .	կը թողուինք .	կը խօսէինք .
կը խաղայիք .	կը սիրէիք .	կը թողուիք .	կը խօսէիք .
կը խաղային .	կը սիրէին .	կը թողուին .	կը խօսէին .

Կատարեալ

Խաղացի	Ալրեցի	Թողուցի	Խօսեցայ
Խաղացիր	սիրեցիր	թողուցիր	խօսեցար
Խաղաց	սիրեց	թողուց	խօսեցաւ
Խաղացինք	սիրեցինք	թողուցինք	խօսեցանք
Խաղացիք	սիրեցիք	թողուցիք	խօսեցաք
Խաղացին	սիրեցին	թողուցին	խօսեցան

Ապառնի

Պիտի խաղամ	Պիտի սիրեմ	Պիտի թողում	Պիտի խօսիմ
» խաղաս	» սիրես	» թողուս	» խօսիս
» խաղայ	» սիրէ	» թողու	» խօսի
» խաղամք	» սիրեմք	» թողումք	» խօսիմք
» խաղաք	» սիրեք	» թողուք	» խօսիք
» խաղան	» սիրեն	» թողուն	» խօսին

73. Կամ պատուեր, խնդիրը եւն ցցընելով որ Հրամայական Եղանակ կը կոչոի, եւ մեկ պարզ ժամանակ ունի :

Ներկայ եւ Ապառնի

Խաղա	Ալրէ	Թող	Խօսէ
մի խաղար	մի սիրեր	մի թողուր	մի խօսիր
չ'խաղայ	չ'սիրէ	չ'թողու	չ'խօսի
խաղամք	սիրեմք	թողումք	խօսիմք
չ'խաղամք	չ'սիրեմք	չ'թողումք	չ'խօսիմք
խաղացէք	սիրեցէք	թողուցէք	խօսեցէք
մի խաղաք	մի սիրէք	մի թողուք	մի խօսիք
խաղան կամ	սիրեն կամ	թողուն կամ	խօսին կամ
թող խաղան	թող սիրեն	թող թողուն	թող խօսին
չ'խաղան կամ	չ'սիրեն կամ	չ'թողուն կամ	չ'խօսին կամ
թող չ'խաղան	թող չ'սիրեն	թող չ'թողուն	թող չ'խօսին

74. Կամ պայման մը դնելով որ թէական եղանակ կը կոչուի, եւ յաջորդ մէկ ժամանակն ունի :

Ներկայ եւ Ապառնի

Պիտի խաղայի	Պիտի սիրէի	Պիտի թողուի	Պիտի խօսէի
կմ. կը խաղայի	կմ. կը սիրէի	կմ. կը թողուի	կմ. կը խօսէի
պիտի խաղայիր	պիտի սիրէիր	պիտի թողուիր	պիտի խօսէիր
» խաղար	» սիրէր	» թողուր	» խօսէր
» խաղայինք	» սիրէինք	» թողուինք	» խօսէինք
» խաղայիք	» սիրէիք	» թողուիք	» խօսէիք
» խաղային	» սիրէին	» թողուին	» խօսէին

75. Կամ բաղձանք մը յայտնելով որ Ըղձական եղանակ կը կոչուի եւ երկու պարզ ժամանակ ունի :

Ներկայ եւ Ապառնի

Խաղամ	Սիրեմ	Թողում	Խօսիմ
Խաղաս	սիրես	թողուս	խօսիս
Խաղայ	սիրէ	թողու	խօսի
Խաղամք	սիրեմք	թողումք	խօսիմք
Խաղաք	սիրէք	թողուք	խօսիք
Խաղան	սիրեն	թողուն	խօսին

Անցեալ

Խաղայի	Սիրէի	Թողուի	Խօսէի
Խաղայիր	սիրէիր	թողուիր	խօսէիր
Խաղար	սիրէր	թողուր	խօսէր
Խաղայինք	սիրէինք	թողուինք	խօսէինք
Խաղայիք	սիրէիք	թողուիք	խօսէիք
Խաղային	սիրէին	թողուին	խօսէին

76. Կամ վախ , տարակոյս , երկբայուրին ցուցնելով որ Մտորադասական եղանակ կը կոչուի միշտ իրմէ առաջ ուրիշ ժամանակ մը գտնուելուն , եւ երկու պարզ ժամանակ ունի :

Ներկայ եւ Ապառնի

Որ կամ եթէ	Որ կամ եթէ	Որ կամ եթէ	Որ կամ եթէ
խաղամ	սիրեմ	թողում	խօսիմ
խաղաս	սիրես	թողուս	խօսիս
խաղայ	սիրէ	թողու	խօսի
խաղամք	սիրեմք	թողումք	խօսիմք
խաղաք	սիրէք	թողուք	խօսիք
խաղան	սիրէն	թողուն	խօսին

Անցեալ

Որ կամ եթէ	Որ կամ եթէ	Որ կամ եթէ	Որ կամ եթէ
խաղայի	սիրէի	թողուի	խօսէի
խաղայիր	սիրէիր	թողուիր	խօսէիր
խաղար	սիրէր	թողուր	խօսէր
խաղայինք	սիրէինք	թողուինք	խօսէինք
խաղայիք	սիրէիք	թողուիք	խօսէիք
խաղային	սիրէին	թողուին	խօսէին

77. Կամ անորոշ կերպով միայն գործը ցուցնելով առանց ընողը կամ ցրած ժամանակը ցուցնելով՝ որ Անորոշ դերբայ կըսուի :

Խաղալ , խաղացած , խաղալիք , խաղալու , խաղացող , խաղալով :
Սիրել , սիրած , սիրելիք , սիրելու , սիրով , սիրելով :
Թողուլ , թողած , թողիք , թողուլ , թողով , թողովլ :
Խօսիլ , խօսած , խօսելիք , խօսելու , խօսով , խօսելով :

78 . Բայի մը ամեն եղանակներն եւ ժամանակներն որոշուած կարգաւ մը զրուցել կամ զրելը՝ բայը լծորդել կ'ըսուի :

79. Բայերը վերը ցցուած օրինակաց պէս կը լծորդուին :

80. Վերի օրինակաց մէջ տեսածնիս լծորդութեան միայն պարզ ժամանակներն են , եւ պարզ կ'ըսուին օրովհնետեն միայն մէկ բայով լծորդուած են : Այս ժամանակաց իւրաքանչիւրն իւր բաղադրեալներն ալ ունի որ են :

84. Սահմանական Եղանակ — Յարակատար որոշեալ

Խաղացած եմ
Խաղածած ես
Խաղացած է

Խաղացած եմք
Խաղացած էք
Խաղացած են

Յարակատար Անորոշ

Խաղացեր եմ
Խաղացեր ես
Խաղացեր է

Խաղացեր եմք
Խաղացեր էք
Խաղացեր են

Գերակատար Որոշեալ

Խաղացած էի
Խաղացած էիր
Խաղացած էր

Խաղացած էինք
Խաղացած էիր
Խաղացած էին

Գերակատար Անորոշ

Խաղացեր էք
Խաղացեր էիր
Խաղացեր էր

Խաղացեր էինք
Խաղացեր էիր
Խաղացեր էին

Վաղակատար

Խաղացած եղայ
Խաղացած եղար
Խաղացած եղաւ

Խաղացած եղանք
Խաղացած եղաք
Խաղացած եղան

Ապառնի Անցեալ

Խաղացած պիտի ըլլամ Խաղացած պիտի ըլլամք
Խաղացած պիտի ըլլաս Խաղացաց պիտի ըլլաք
Խաղացած պիտի ըլլայ Խաղացած պիտի ըլլան

Հարկադրական ներկալ կամ ապառնի

Խաղալու եմ

Խաղալու եմք

Խաղալու ես

Խաղալու էք

Խաղալու է

Խաղալու են

Հարկադրական Անկատար

Խաղալու էի

Խաղալու էինք

Խաղալու էիր

Խաղալու էիք

Խաղալու էր

Խաղալու էին

Հարկադրական կատարեալ

Խաղալու եղայ

Խաղալու եղանք

Խաղալու եղար

Խաղալու եղաք

Խաղալու եղաւ

Խաղալու եղան

Թեական Եղանակ — Յարսկատար

Խաղացած կ'ըլլամ

Խաղացած կ'ըլլամք

Խաղացած կ'ըլլաս

Խաղացած կ'ըլլաք

Խաղացած կ'ըլլայ

Խաղացած կ'ըլլան

Գերակատար

Խաղացած կ'ըլլայի

Խաղացած կ'ըլլայինք

Խաղացած կ'ըլլայիր

Խաղացած կ'ըլլայիք

Խաղացած կ'ըլլար

Խաղացած կ'ըլլային

Ապառնի

Խաղալու ըլլամ

Խաղալու ըլլամք

Խաղալու ըլլաս

Խաղալու ըլլաք

Խաղալու ըլլայ

Խաղալու ըլլան

ԱՆԿԱՏՈՐ

Խաղալու ըլլայի	Խաղալու ըլլայինք
Խաղալու ըլլայիր	Խաղալու ըլլայիք
Խաղալու ըլլար	Խաղալու ըլլային

83. Ըղճական եղանակ — Անցեալ

Խաղացած ըլլամ	Խաղացած ըլլամք
Խաղացած ըլլաս	Խաղացած ըլլաք
Խաղացած ըլլայ	Խաղացած ըլլան

ԱՆԿԱՏՈՐ

Խաղացած ըլլայի	Խաղացած ըլլայինք
Խաղացած ըլլայիր	Խաղացած ըլլայիք
Խաղացած ըլլար	Խաղացած ըլլային

84. Ստորադասական — Յարակատար

Որ խաղացած ըլլամ	Որ խաղացած ըլլամք
որ խաղացած ըլլաս	որ խաղացած ըլլաք
որ խաղացած ըլլայ	որ խաղացած ըլլան

ԳԵՐԱԿԱՏՈՐ

Որ խաղացած ըլլայի	Որ խաղացած ըլլայինք
որ խաղացած ըլլայիր	որ խաղացած ըլլայիք
որ խաղացած ըլլար	որ խաղացած ըլլային

85. Հրամայական — Անցեալ Ապառնի

Խաղացած եղի՛ր	Խաղալու եղի՛ր
Խաղացած ըլլանք	Խաղալու ըլլամք
Խաղացած եղի՛ք	Խաղալու եղիք

56. ԳԵՐԲԱՅ

Անցեալ	Խաղացած ըլլալ
Ապառնի	Խաղալու ըլլալ

87. Վերջապէս այս բայերը բացասական կ'ըլլան վրանին և մակբայն առելցնելով՝ բաց ՚ի սահմանական ներկայէն եւ անկատարէն որ մասնառը ձեւ մ'ունին, ինչպէս կը տեսնես յաջորդ պատկերին մէջ :

Սանմանական ներկայ

Անկատար

Չեմ խօսիր	Չէի խաղար
չես խօսիր	չէիր խաղար
չխօսիր	չէր խաղար
Չեմք խօսիր	Չէինք խաղար
չէք խօսիր	չէիք խաղար
չհն խօսիր	չէին խաղար

ՀՐԱՀԱՆԳ ՄՊ.Բ.

Ինչ ժամանակ են եղանակ են նետեւեալ բայերը :

Գացի . Գացեր եմ . Երթալու էի . Մի ցատկեր . Վաղեցէք . Ասով խօսքը լմնցած կ'ըլլայ . Ո՞չ հայրենիքս տեսնէի . — Յափշտակեցին . Գալու ես վաղն առաւօտ . Ս'երկնցներ խօսքը . Տարակուսեցաւ , բայց զինք համոզեցինք . Եթէ երթայի՛ եղբայրդ պիտի չ'գտնէր զիս . — Ո՞ւր ժողվեցիք աս ծաղիկները . — Ժամանակը կ'անցնի , կ'ըսեմք , անցնողը մեք եմք . — Ասուուած ստեղծեց Տիեզերքն եւ զմեզ ամէն ատեն կը պահպանէ . Եթէ վայրկեան մը զմեզ թողուր ձեռքէ՝ իսկոյն կը մեռնէինք . Նորա մոսածութեամբն աշխարհ կ'ապրի . փա՛ռք տանք իրեն որ զմեզ կը մնուցանէ եւ կը ինամէ : Կա՞յ հայր մը որ այնչափ սիրէ իւր որդին , կամ մայր մը որ այնչափ գրգուրայ աղջկան վրայ՝ որչափ ինքը զմեզ կը սիրէ եւ վրանիս կը գրգուրայ : — Ապրի այն աշխարհն ուր ծնան Հայկ , Տիգրան , Տրդատ , Գրիգոր եւ Ներսէս : — Ապրին այն ամենքը որ իրենց հայրենիքը կը սիրեն :

ՀՐԱՀԱՆԳ ՄՊ.Գ.

Հետեւեալ ժամանակաց ո՞րը պարզ են ո՞րը բաղադրեալ է :

Մոոցած , մոոնալ , մոոցած ըլլալ , պիտի մոոնայ , մոոցած եղայ , մոոցեր է , մ'երթար . — Նաւով Աղթամար եւանք . — Արեւն ամպի տակ է ծածկուեր . — Լուսինը մթնցաւ . — Հով կը

փշէ . — Հայոց աշխարհիկ Գարունդ է հասեր . — Երկու հարազատ ի մի բոյն մնած՝ մին տատրակ էր միւսն արծիւ օդասլաց . — Տեսեր ես որձայք ըսուած ծաղիկն . ոչ հողի մէջ կ'ապրի, ոչ պարարտութիւն կուղէ . ծառի մը կոճղին փաթթուելով կը բուսնի, հրաշալի անուշանոտ ծաղիկներ կը բանայ : Գոյները զարմանալի են, աւելի զարմանալի նորա ձեւը : — Մաքրիկ մօրն հարցուց . « Խնչո՞ւ համար մեր գիւղէն հեռու կը բնակիմք . ա՞հ երթայի անգամ մը տեսնէի այն ճերմակ բարձր լեռները, կանաչ դաշտերը՝ գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած, կապուտ լճերը, լսէի նորա գետոց ահաւոր մոնչմունքը, թռչնոց ճւճւալն եւ անտառաց ձայները : — Նախ խորհնէ եւ ապա գործէ : — Երկայն խորհնելու եւ շուտ գործադրելու է : — Հիմայ այդ ըսելով միթէ դու արդարացած եղար : — Ո՞հ մնացէք բարեաւ, ո՞վ բարեկամներ, նաւն ինձ կսպասէ, կերթամ հեռուներ :

ՀՐԱՀԱՆԳ ՄՊԴ.

Հետեւեալ բառից առջի ջորսն ամբողջ լծորդէ . — Մնացեալ-ները զանազան եղանակ եւ ժամանակ գործածէ եւ մէյմէկ խօսք շինէ :

Հանել, ապրիլ, լուալ, իմանալ, կանչել, սպասել, գովել, ուզել, բռնել, վազել, ժողվել, խմել, սպառել, պարպել, քալել, աշխատիլ, հաւնիլ, նստիլ, բնակիլ, պառկիլ, յոգնիլ, նայիլ, համարել, բաղձալ, մնալ, գոռալ, յուսալ, չանալ, խաղալ, աղալ, խղճալ, հազալ, ձանչնալ, զիտնալ, գողնալ, վախնալ, կենալ, ամէնալ, կարմրնալ, գտնել, տեսնել, պագնել, մտնել, ելլել, իջնել, համնիլ, անցնիլ, մնոնիլ, ծնանիլ, հեծնել, խածնել, թրջել, թռչիլ, փախչիլ, փլչիլ, դպչիլ, կպչիլ, փակչիլ, պառչիլ, ըսել, դնել, լալ, երթալ :

ՀՐԱՀԱՆԳ ՄՊԵ.

Հետեւեալ պատմութեան մէջ որբնը են բայերն եւ ի՞նչ սեռ, ի՞նչ եղանակ, ի՞նչ ժամանակ են :

Միհրանիկ չէր զիտեր թէ ի՞նչ է արձագանգն : — Օր մը պարատիղին մէջ պտտելու ատեն « Հօ՛ հօ՛ » պոռաց . — Անդիէն անտառին մէջէն լսեց « Հօ՛ հօ՛ » Տղան զարմանալով կրկնեց . « Դու ո՞վ ես » . — Մէկէն նոյն գաղտուկ ձայնը պատասխանեց , « Ո՞վ ես » . — Միհրան պոռաց . « Չ'ես ամէնար , խենթ » . — « Խենթ » կրկնեց անտառէն ձայնը : Այս ատեն Միհրան բարկանալով ծանըր խօսքեր սկսաւ ընել , արձագանգը հաւատարմաբար կը դարձընէր ամէն լսածները : Միհրան սկսաւ անտառին մէջ տղան վնասուել՝ հետը կոռւելու համար . բայց մէկը չգտաւ : Շատ մ'անօգուտ յոգնելէն ետքը Միհրան տուն դարձաւ եւ զանգտեցաւ որ չար տղայ մը զինքը նախատէր էր . « Կը խաբուիս , տղաս , ըսաւ նորա մայրն , ինքինքդ կ'ամբաստանես . զիտցիր որ լսածներդ քու խօսքերդ էին . ինչպէս որ շատ անգամ ջրին մէջ պատկերդ կը տեսնես , այսպէս ալ հիմայ ձայնիդ կրկնութիւնը լսեցիր : Եթէ անուշ խօսք մ'ըսած ըլլայիր՝ անուշ ալ պատասխան մը կ'առնէիր : Մարդկանց ընկերութեան մէջ ալ այսպէս է , ալլոց մեր հետ ունեցած վարմունքը՝ մեր բռնած ընթացքին արձագանգն է . եթէ հեղութեամբ վարուինք՝ մարդիկ ալ նոյնպէս կը վարուին մեր հետը , բայց եթէ կոսկիտ ըլլանք , նոցակողմէն քաղաքավարութիւն սպասելու չեմք » :

ՀՐԱՀԱՆԳ ՄՊԶ.

Կետերուն տեղ խօսքին զլուխը գտնուած բայց դիր յարմար ժամանակա :

1. (Խոստովանիլ) Եթէ յանցանք ունենայի . . . : 2. (Գգուել) Զեր շունը . . . : 3. (Խաղալ) Այս տղայք պարտիզին մէջ . . . :
4. (Լմնցնել) Լեւոն կուզէ դասերը . . . որպէս զի պտտելու երթայ :
5. (Պատուել , յարգել) . . . ծերութիւնը եւ . . . սպիտակ մազերը :
6. (Ներս մտնել) Կ'աշխատէի երբ . . . : 7. (Աւարտել) Երբ այդ ձեռագործդ . . . զայն ինձ պիտի ցուցնես :
8. (Հսկել) Մայր մը իւր որդւոց առողջութեան վրայ . . . :
9. (Համնիլ) Եղբայրս պիտի չկրնայ ժամանակին . . . :

կետերուն տեղ խօսքին դլուխը գտնուառ բայց դիր յարմար ժամանակաւ :

1. (Նուազեցնել) իւր յանցանքը . . . զայն խոստովանելով :
 2. (Տկարացնել) Արեան պակասութիւնը հիւանդը կը . . . 3.
 - (Կարել) Այս հաղուստն ես ինքս . . . 4. (Վայելել) Զեր ժուժեկալու շնորհիւ , կատարեալ առողջութիւն մը . . . 5.
 - (Կատարել) Շատ կը փափաքիմ որ խոստումնիդ . . . 6. (Աղքատացնել) Այս չույլութիւնը զձեզ . . . 7. (Ելլել) Այս սանդուխն առանց յոդնելու . . . եթէ կամաց քայլէիք :
-

կետերուն տեղ խօսքին գլուխը գտնուառ բայց դիր յարմար ժամանակաւ :

1. (Նշմարել) Խորտակուած կառք մը . . . 2. (Հաւանիլ)
 - Քու բարի դիտաւորութեանդ . . . 3. (Ընդունիլ) Եկուր երբ որ կ'ուզես , միշտ զքեզ հաճութեամը . . . 4. (Խարել) Երբ անգամ մը մեր բարեկամը . . . նա կը կասկածի մեր բարեկամութեան վրայ : 5. (Սիրել) Տղայ մը պէտք է իւր ծնողքն եւ իւր վարժապետները . . . 6. (Պարտիլ) Եներ կեանքը մեր ծնողաց . . . իսկ մեր կրթութիւնը մեր զաստիարակաց : 7. (Ըլլալ) Եթէ կ'ուզես որ ամէն մարդ զքեզ սիրէ , զաղտնապահ եւ խոհեմ . . . 8. (Կորսնցնել) Այդ անօգուտ զործով զբաղելով ժամանակաւ . . .
-

կետերուն տեղ խօսքին գլուխը գտնուառ բայց դիր յարմար ժամանակաւ :

1. (Խաճնել) Երբ կանաչ ենճոր մը . . . ակռաներդ կ'առնուին : 2. (Ծնիլ) Զեղխութիւնը քաղաքաց մէջ . . . 3. (Հաւասարեցնել) Մահը . . . զմարդիկ : 4. (Նմանիլ) Թշուառ մա-

նուկը ճիշդ իւր հօր . . . : 5. (Յայտնուկի) Բաղզս . . . պէտք
է վաղը մեկնիմ այս տեղէն : 6. (Սպասել) . . . մինչեւ գնդին
վերադարձը : 7. (Խարուիլ) Կը կարծես որ այդ կեղծաւորութե-
նէ . . . : 8. (Պատասխանել) Այդ անպիտան հարցմանց բնաւ
. . . : 9. (Խօսիլ) Աւելի վստահութեամբ . . . եթէ բնակա-
նասլէս երկչոտ չըլլայի : 10. (Կարդալ, ունենալ) Ամէն գիշեր
. . . եթէ գրքեր . . . : 11. (Բնակիլ) Այս գեղեցիկ տունն
երբեմն հօրեղբայրա . . . : 12. (Կոտրել) Հեղինէ միշտ իւր խա-
ղալիկները . . . պզտիկ եղած ժամանակ :

ԴԱՍ Ծ.

88. Տեսակ տեսակ բառերն՝ ինչպէս անուն, ածական, բայ,
շաղկապ եւլն ժամանակ բռնէ կը կոչուին :

Կ Ա Ն Ո Ւ

89. Երբոր նախադասութեան մ'իւրաքանչիւր բառին
ինչ տեսակ ըլլալն և ո՞ր բառին հետ կապակցութիւն ու-
նենալը զրուցես՝ այն նախադասութիւնը լուծած կ'ըլլաս :

90. Խօսք մը լուծելու համար ահա ի՞նչ բաներ ըսելու
ես իւրաքանչիւր մասն բանի վրայ :

1. Անուան կամ դերանուան մը համար :

- Ա. Ի՞նչ մասն բանի է .
- Բ. Ի՞նչ դէմք .
- Գ. Ի՞նչ թիւ .
- Դ. Ի՞նչ տեսակ .
- Ե. Ի՞նչ հոլով .
- Զ. Ոլոչեալ թէ անորոշ .

Զորօրինակ . Տնէն՝ հասարակ անուն եղակի բացառական՝ և յօդով որոշուած . Ինձ , էական դերանուն , եղակի տրական , առաջին դէմք :

2. Բայի մը համար :

Ա. Ի՞նչ մասն բանի .

Բ. Ի՞նչ ձեւ (կանոնաւոր թէ անկանոն) .

Գ. Ի՞նչ սեռ (Ներգործական , Կրաւորական , Զէզոք) .

Դ. Ի՞նչ եղանակ .

Ե. Ի՞նչ ժամանակ .

Զ. Ի՞նչ թիւ .

Է. Ի՞նչ դէմք .

Զորօրինակ . Գնաց՝ բայ չէզոք անկանոն , պարզ ժամանակ , սահմանական եղանակ , կատարեալ , եղակի երրորդ դէմք :

3. Ածականի կամ մակբայի մը համար :

Ա. Ի՞նչ մասն բանի .

Բ. Որո՞ւ կը վերաբերի կամ ո՞ր բառը կը սահմանաւորէ :

4. Նախադրութեան , Շաղկապի կամ Զայնարկութեան համար .

Ա. Ի՞նչ մասն բանի է .

Բ. Ո՞ր բառերն իրարու կը դոդէ կամ ինչպէս գործածուած է :

ՀՐԱՀԱՆԳ 8.

Լուծէ հետեւեալ խօսքերը :

Այս պատկերը նկարող մարդը մնուաւ . — Շատ անդամ հետքանցուցած զիշերս կը յիշեմ . — Սուտ մ'ըսողը չ'զիտեր թէ ի՞նչ ծանր բեռ մը վրան կառնու . — Յանկարծ անձրեւի մը բոնուեցանք որ ստիպեց զմեղ պատսպարան մը վիճակու . — Դու զ՞վ իննդրես՝ մայր իմ անուշ . ե'կ մի՛ դողար մօտեցիր հոս . — Եղբայր եմք մեք . — Զանսա՛ միայն ուղիղ բաներ գործելու . — Կարծեմ որ նա պարկեշտ տղայ մ'է . — Կը կասկածիմ որ ճշմարիտը խօսի . — Գոհացի՛ր Աստուծմէ որ այսչափ երջանիկ

ես . — իմաստուն մարդ մը կ'ըսէ . և կարդացող մարդը շատ լեցուն գլուխ կ'ունենայ . խոսակցութիւնը դիւրապատրաստ կ'ըւլայ եւ զրութիւնը ճշգրիտ » :

Փոխ մի տար՝ եթէ բարեկամդ եւ զրամդ մէկտեղ կորսնցնել չես ուղեր . փոխ մ' առնուր՝ որ անկարգութեան չ'վարժիս : Այդ ըրածիդ պիտի զղջաս :

ՀՐԱՀԱՆԳ ՑԱ.

Թիտե նետենեալ բառերուն սիսալ եւ ուղիղ դրուքիւնն եւ անոնցմով մեյմեկ խօսք զինք' :

ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՔ
Հոգնիլ	յողնիլ
արձագանք	արձագանդ
բրթել	բրդել
հետաքրպիո	հետաքրքրիր
խորոչ , խորոջ	խոռոչ
փակ	բակ
դար , դարել (թուչոց)	թառ , թառել
գալել	քալել
ամեն	ամէն
ժողուած	ժողվուած
մնջել , մռնջել	մնչել , մռնչել
հաշել (շան)	հաջել
շնչնչել , անշշունչ	շնչնջել , անշշունջ
որ նոր , ինք նալ	որն որ , ինքն ալ
մի՛ տեսնէր	մի՛ տեսներ
չես զիտէր	չես զիտեր
չէր նայէր	չէր նայեր
չէին անցնէր	չէին անցներ
վեցերրորդ	վեցերորդ
ուղղեցոյց	ուղեցոյց
դրօշմել	դրոշմել
Անտօն	Անտոն
պատրիարդ	պատրիարք
եպարքոս	եպարքոս
խօստանալ	խոստանալ

Որո՞նք են մասունք բանի . — Նոցա խրաբանջիրով մեյմեկ խօսք զինէ . — Ո՞ր մասունք բանի կան հետեւեալ խօսից մէջ :

Ե՛լ ո՛վ արեւ ե՛լ ահաբերէն .

Աւ կարօտցաւ միրտըս քեզի .

Մէկ նայուածքիդ են մնացեր

Մանիշակներն ու նոնենի :

Ո՞հ զի՞ս ալ զի՞ս ալ՝ ով մահ աննըւէր՝
ինչո՞ւ որդւոյս հետ մէկտեղ չես հնձեր

Որ գոնէ շերմին մէջն ալ նորա քով
ի մութ լոռւթեան որրեմ հսկելով :

Մահու քընով պաղ՝ խաղաղ եւ լըոին
Վեց հարիւր հեծեալք ննջեն անարեւ .
Զայն փողոյն ա՛լ չի դրդեր հոգինին
Կռուի կրակի դէմ գալ այնուհետեւ :
Ոչ ալ ձայն՝ բայց լոկ Հրեշտակի փողոյն
Կրնայ նորէն կեանք տալ հոն ընկելոյն :

Հետեւեալ խօսքերն եզակիի փոխէ , (Տեր բայիներէն մին պակսեցնելով) .

Խնձորն ու տանձը կուտաւոր եւ գրեթէ բոլորչի պտուղներ են . գեռ չհասունցած կանաչազոյն են . կեղեւ մը եւ միս ունին . աշնան կը հասուննան , երկուքն ալ շատ համեղ պտուղներ են՝ զորու չորցնելով կարելի է պահել : — Գարին ու վարսակն ընդեղէններ են : Երկայն նուռը եւ բաղմահանդոյց ցօղուն մ'ունին . երկար անօսր եւ խիստ տերեւներ ունին . հատիկներ կը բերեն . Օգոստոսին սկիզբը կը հնձուին , եւ մէկ քանի կենդանեաց աննդեան եւ խշտեաց համար ամենակարեւոր յարդ մը կուտան : — Ճանձն ու մըջիւնն երկու սեւ միջատներ են որոց մարմինը յայտնապէս երկու մասերու բաժնուած է : Վեց թաթ ,

երկու չօշավուկ եւ պատիճ մ'ունին : Շատ կերպարանսափոխութիւններ կը կրեն եւ հաւկթով կը բաղմանան : Տաքութեան պէտք ունին եւ ձմեռ ատեն կը կորսուին : Շաքարը կը սիրեն , պտուղներու վրայ կը յարձկին , եւ մարդկանց ու կենդանեաց մորթը կը խայթեն :

Օր . Դաս . — Խնձորը կուտաւոր եւ զբեթէ բոլորչի պտուղմ'է :

ՀՐԱՀԱՆԳ ՅԴ.

Յետագայ նկարագիրը փոխի՛ նախ ներկայի եւ ապա ապանոյ :

Մէդն իրբեւ թաց վարագուրաւ ծածկեց աչքերնէս աշնան վերջին տեսարաններն այլ , եղեամն թափթփած տերեւոց վրայ ձմեռուան սառամանեաց կանխիկ մանրանկար մը ցցուց : Գիւղերը դարձեալ յանապատ փոխուեցան , զրօնասէրք դարձան ի քաղաք՝ ի պատսպարեալ բնակարան : Անասուն կենդանիք այլ իրենց ճարը տեսան , որը չուելով ընդ օդ եւ ընդ ջուր ի հարուստ եւ տաքուկ բոյներ , որն ամուր ապահով ծակ մը , փոս մը , խոռոչ մը խնդրելով եւ ներս քաշուելով : Ծաղկատարփ մեղուն ալ իւր փեթակը փակեց մեղրով մոմով , քաշուեցաւ իւր վեցանկիւն սենեկաց մէջ , զմայլեցաւ թմրեցաւ իւր հնարած անուշակ խարսխովը : Որերը կարճըցան եւ դիշերներն երկնցան . լսուեցաւ հողմերուն մռնչիւնը ծառերուն մէջ որոց տերեւները գետինը ծածկեցին :

Օր . Դաս . — (Ա. կերպ) մէդն իրբեւ թաց վարագուրաւ կը ծածկէ եւայն :

Օր . Դաս . — (Բ. կերպ) մէդն իրբեւ թաց վարագուրաւ պիտի ծածկէ :

ՀՐԱՀԱՆԳ ՅԵ.

Յետագայ խօսքերն ամբողջացուր առաջնոյն օրինակին պէս .

4. Միհրան ուսումնասէր է , նորա համար ամենքը զինքը կը սիրեն :

2. Միհրան ուսումնասէր էր, անոր համար ամենքը . . .
3. Եթէ Միհրան ուսումնասէր ըլլար՝ ամենքը . . .
4. Միհրան՝ ուսումնասէր եղիր որ ամենքը . . .
5. Պէտք էր Միհրան ուսումնասէր ըլլար՝ որ ամենքը . . .
6. Եթէ Միհրան ուսումնասէր եղած ըլլար՝ ամենքը . . .
7. Միհրան ուսումնասէր եղաւ՝ անոր համար ամենքը . . .
8. Ինչո՞ւ Միհրան ուսումնասէր չըլլայ՝ որ ամենքը . . .
9. Միհրան ուսումնասէր պիտի ըլլայ՝ անոր համար ամենքը . . .

Ճակատամարտն սկսաւ՝ թրերը քաշուեցան, հրացանները պարպուեցան, թնդանօթներն որոտացին, քաջերը յարձկեցան վատերը դողդղացին, ահաւոր ճայներ լսուեցան, մթին ամպեր երկինքը ծածկեցին :

1. Ճակատամարտը կը սկսէր՝ թրերը կը քաշուէին . . .
2. Ճակատամարտը կը սկսի . . .
3. Ճակատամարտ՝ սկսէ որ թրերը քաշուին եւայլն :
4. Ճակատամարտ՝ սկսէր թրերը պիտի քաշուէին . . .
5. Եթէ ճակատամարտն սկսէր՝ թրերը պիտի քաշուէին . . .
6. Ճակատամարտը պիտի սկսի՝ թրերը պիտի քաշուին . . .
7. Եթէ ճակատամարտն սկսած ըլլար՝ թրերը քաշուած պիտի ըլլային . . .
8. Ո՞հ եթէ ճակատամարտն սկսէր՝ թրերը քաշուէին . . .

1. Հովը կը չնչէ, ալիք կը յուզուին, նաւը կ'երերայ, առագաստները կ'ուոին, զրօշը կը ծփծփայ, երկինք ամպերով կը ծածկուին :

2. Շնչէ հով, յուզուեցէք ալիք եւայլն .
3. Հովը չնչեց, ալիք յուզուեցան . . .
4. Շնչէ հով որ յուզուին ալիք . . .
5. Հովը պիտի չնչէ, ալիք պիտի յուզուին . . .
6. Հովը պիտի չնչէր, ալիք պիտի յուզուէին . . .
7. Հովը չնչելու է որ ալիք յուզուին . . .
8. Հովը չնչելու էր որ ալիք յուզուէին . . .
9. Ինչո՞ւ չես չնչեր՝ հով, ինչո՞ւ չէք յուզուիր ալիք եւլն :
10. Եթէ հովը չնչած ըլլար՝ ալիք յուզուած պիտի ըլլային, եւայլն :



ՅԱՆԿ ՆԻՒԹՈՒՑ

ՄԱՍՆ Ա.

	Էջ	Տոևն
ՅԱՆԿ Յառաջաբան	9—	
Ա. Տառք ձայնաւոր եւ բաղաձայն	5— 4— 6	
» Բ. Վանկ եւ տողադարձ	8— 7—40	
» Գ. Իր կամ առարկայ	11—11—13	
» Դ. Յիշատակութիւն իրաց	14—14—	
» Ե. Գաղափար	17—15—	
» Զ. Բառ	19—16—	
» Է. Վերադիր	21—17—	
» Ը. Նախադասութիւն	24—18—	
» Թ. Բաղադրեալ նախադասութիւն	26—19—	
» Ժ. Բաղադրեալ վերադիր	28—20—	
» ԺԱ. Խմաստ սահմանաւորող բառեր	30—24—	
» ԺԲ. Տեսակք նախադասութեանց	32—22—	
» ԺԳ. Կէտագրութիւն	36—23—	
» ԺԴ. Ենթակայ	39—24—25	
» ԺԵ. Լուծումն	44—28—	
» ԺԶ. Անուն կամ գոյական (դասակարգութիւն կամ զործածութիւն բառից)	47—29—	
» ԺԷ. Վերացեալ անուն	52—30—34	
» ԺԸ. Թիւ	57—33—	
» ԺԹ. Յոգնակի	63—34—	
» Խ. Յօդ	67—35—	
» ԽԱ. Պաշտօն անուան (ենթակայ)	70—36—	
» ԽԲ. » » (լինդիր)	73—34—	
» ԽԳ. Զանազան զործածութիւննք անուան . . .	75—38—	
» ԽԴ. Դերանուն	76—39—	
» ԽԵ. Ածական	78—40—	
» ԽԶ. Գործածութիւն ածականի Ստորոգելի .	84—41—	
» ԽԷ. » » »	89—42—	

Էջ Տուն

» Ի՞՞ . Բայ	95—45—
» Ի՞՞ . Տեսակք բայից	104—44—
» Լ . Գերբայ	106—45—46
» ԼԱ . Մակբայ	111—67—
» ԼԲ . Յետաղբութիւն	114—48—
» ԼԳ . Շաղկապ	116—49—
» ԼԴ . Զայնարկութիւն	118—50—

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄՈՒՆՔ , ՑԱՏԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՓՈՓՈ-
ԽՈՒԹԻՒՆՔ ԲԱՌԻՑ

ՄԱՍՆ Բ.

» ԼԵ . Ոնուն յատուկ եւ հասարակ	123—54—52
» ԼԶ . Դէմք	126—53—
» ԼԵ . Եական գերանուանք	128—54—
» ԼԸ . Հոլով	129—55—56
» ԼԹ . Սեռական	130—57—
» Խ . Տրական	132—58—
» ԽԱ . Հայցական	133—59—
» ԽԲ . Գործիական	134—60—
» ԽԳ . Բացառական	136—61—
» ԵԴ . Հոլովում	137— —
» ԽԵ . Ներգործական եւ չեղոք բայք	140—64—65
» ԽԶ . Հոլովումն գերանուանց	142— —
» ԽԵ . Ներգործական եւ կրաւորական բայք	144—67—69
» ԽԸ . Ժամանակք	148— —
» ԽԹ . Եղանակք	150—71—72
» Ծ . Մասունք բանի եւ լուծումն	161—88—90

